Հելսինկյան
Քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի
գրասենյակ

SIGRID RAUSING TRUST

ԶԵԿՈՒՅՑ

2020 Թ. 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Հելսինկյան Քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի
գրասենյակ

SIGRID RAUSING TRUST

ԶԵԿՈՒՅՑ

2020 Թ. 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

ՎԱՆԱՁՈՐ
2022

Հեղինակային խումբ՝

Ա. Սաքունց
Ա. Սադիկյան
Ն. Մովսեսյան

Սույն զեկույցը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Սիգրիդ Ռոզինգ Թրասթի ֆինանսական աջակցությամբ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը շնորհակալություն են հայտնում բոլոր այն անձանց, որոնք մասնակցել են զեկույցում ներկայացրած տեղեկությունների հավաքմանը և աջակցել են զեկույցի ստեղծման աշխատանքներին:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ **4**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ **6**

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ **13**

Ուսումնասիրության նպատակը **13**

Ուսումնասիրության խնդիրները **13**

Տեղեկատվության հավաքագրման մեթոդը **13**

Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը **16**

Անհայտ կորածների ընտանիքների սոցիալ-տնտեսական խնդիրների նկարագիրը *20*

Անհայտ կորածների ընտանիքների բնակարանային պայմանները *20*

Անհայտ կորած անձանց ընտանիքների անդամների զբաղվածությունը *22*

Անհայտ կորած անձանց ընտանիքների ֆինանսական, առողջական եւ այլ խնդիրները *26*

Անհայտ կորածների ընտանիքների սոցիալական երաշխիքները եւ սոցիալական ապահովության վիճակը *29*

Անհայտ կորած անձանց զորակոչի եւ զինվորական ծառայության վայրի փոփոխության վերաբերյալ տվյալներ *33*

Անհայտ կորած անձանց նույնականացման և դրա վերաբերյալ նրանց հարազատներին տեղեկությունների տրամադրման գործընթացի վիճակի նկարագրությունը *45*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ **66**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ **69**

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ..... **71**

Անհայտ կորածի իրավական կարգավիճակն ամրագրող միջազգային նորմերը և դրանց ամրագրումը որոշ պետությունների օրենսդրությունում *71*

ՀԱՎԵԼՎԱԾ 2 ..... **78**

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած անձանց կորչեու հանգամանքները ըստ անհայտ կորածների հարազատների *88*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (ՀՔԱ Վանաձորի գրասենյակ), ելնելով պետության կողմից իր քաղաքացիների կյանքի, առողջության եւ անվտանգության ապահովման եւ դրանց վերաբերյալ հանրային պատշաճ իրազեկման պարտականությունից, 2020 թ-ի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը ժամանակահատվածում իրականացրել է 44-օրյա պատերազմական գործողությունների հետեւանքով անհայտ կորածների, նրանց ընտանիքների խնդիրների հետազոտում, որի արդյունքները ներկայացվում են սույն զեկույցում:

Հայաստանի Հանրապետությունում անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները ծագել են դեռեւս առաջին ղարաբաղյան պատերազմի ժամանակ, 1994 թ. մայիսի 12-ին ստորագրված հրադադարի եռակողմ Համաձայնագրից հետո: Պաշտոնական տվյալների համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով 1988-2005 թթ. անհայտ կորածների թիվը ՀՀ-ից կազմում է 437 մարդ, որից զինծառայող՝ 224, խաղաղ բնակչություն՝ 213: ԼՂՀ-ից անհայտ կորած է համարվում 723 անձ, որոնցից 250՝ զինծառայող, 473՝ խաղաղ բնակիչ: Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) տվյալներով՝ ղարաբաղյան առաջին հակամարտության հետևանքով անհայտ կորածների թիվը Հայաստանում շուրջ 400 է:

1994 թ. մայիսի 12-ի հրադադարի կնքումից հետո ակտիվ պատերազմական գործողություններ տեղի չեն ունեցել մինչեւ 2016 թ-ի ապրիլի 2-ը, սակայն անհայտ կորածների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության խնդիրներն այդպես էլ չեն ստացել օրենսդրական եւ ինստիտուցիոնալ լուծումներ:

2016 թ. ապրիլյան չորսօրյա պատերազմական գործողությունների առաջին օրերին ևս ստեղծվեց մի իրավիճակ, երբ որոշ զինծառայողների գտնվելու վայրի եւ ճակատագրի վերաբերյալ տեղեկություններ չկային: Այդ իրավիճակը ևս մեկ անգամ օրակարգ վերադարձրեց անհայտ կորածների եւ նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության խնդիրներին համակարգային և օրենսդրական լուծումներ տալու անհրաժեշտությունը, սակայն պետությունը վերստին չկատարեց իր պարտավորությունները:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի աջակցությամբ և վարձու ահաբեկիչների ներգրավմամբ Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի հետևանքով վերստին մեծ թվով մարդիկ անհայտ կորան:

2020թ 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունում (ԱՀ) և Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) զոհված զինծառայողների և քաղաքացիական անձանց ընդհանուր թիվը 2022թ. հունվարի 19-ի դրությամբ կազմում է 3809 անձ՝ այդ թվում՝ 3712 զինծառայող և 76 քաղաքացիական անձ: Նույն օրվա դրությամբ անհայտ է 199 զինծառայողի և 21 քաղաքացիական անձի ճակատագիրը եւ գտնվելու վայրը:[1]

Զանգվածային լրատվական միջոցներով հրապարակվեցին տարբեր նյութեր, հոդված-

[1] https://www.investigative.am/news/view/gerevarvac-zincarayox-veraberyal.html

ներ եւ տեսանյութեր 44-օրյա պատերազմական գործողությունների վերաբերյալ, սակայն ռազմական գործողությունների հետեւանքով անհայտ կորած անձանց եւ նրանց կորչելու հանգամանքների վերաբերյալ ամբողջական եւ ամփոփ տեղեկատվություն մինչ այժմ հրապարակված չէ եւ հասանելի չէ հանրությանը:

2020 թ-ի հոկտեմբերի 5-ից ՀՔԱ Վանաձորի գրասենյակը իր նախաձեռնած թեժ գծի միջոցով սկսեց տեղեկություններ հավաքագրել անհայտ կորած անձանց ընտանիքի անդամներից, հարազատներից՝ փորձելով հնարավորինս մանրամասն նկարագրություն կազմել յուրաքանչյուր անձի վերաբերյալ եւ փոխանցել ՀՀ պաշտպանության նախարարությանը (ՀՀ ՊՆ), որպեսզի վերջինս ունենա անհրաժեշտ նախնական տեղեկություն անհայտ կորածների որոնողական աշխատանքներ իրականացման և նրանց հարազատներին տեղեկություններ փոխանցելու: 2021թ հոկտեմբերի 5-ից մինչև դեկտեմբեր ամիսը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի թեժ գծով ստացվել են դիմումներ մոտ 700 անհայտ կորածի հարազատների կողմից: Ժամանակի ընթացքում այդ 700-ից ոմանք հայտնաբերվել են, ոմանք վերադարձել են, իսկ ոմանք գտնվել են մահացած:

Զեկույցում, բացի վիճակագրական տվյալներից, անդրադառնում ենք նաեւ անհայտ կորածների եւ նրանց ընտանիքների իրավունքներին վերաբերվող օրենսդրությանը, օրենսդրական բացերին, ավելի քան մեկ տարվա ընթացքում ընտանիքների առջեւ ծառացած խնդիրներին, պետության կողմից անհայտ կորածների և նրանց ընտանիքների հանդեպ վերցրած պարտավորությունների կատարման վիճակին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պատերազմական գործողությունների ժամանակ անհայտ կորածների իրավունքները սահմանված են միջազգային մարդասիրական նորմերով, մասնավորապես՝ «Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» Ժնեւի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիաներին կից Ժնեւի 1977 թվականի լրացուցիչ արձանագրություն 1-ով (Բաժին 3, հոդված 32-33): Նշված բաժնի դրույթները կիրառելիս հակամարտության մեջ գտնվող բարձր Պայմանավորվող Կողմերը և Կոնվենցիայում և նշված Արձանագրության մեջ հիշատակված միջազգային մարդասիրական կազմակերպություններն իրենց գործունեության մեջ ելնում են անհայտ կորածների ճակատագրի մասին նրանց ընտանիքների տեղեկություն ունենալու ապահովման իրավունքից:

Համաձայն միջազգային մարդասիրական նորմերի՝ հակամարտող կողմերը պետք է ստեղծեն տեղեկատվական բյուրոներ, որոնք պետք է իրենց երկրի անհայտ կորած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրեն և փոխանակեն այն միմյանց միջև, տեղեկություններ տրամադրեն անհայտ կորածների հարազատներին: Այս պահանջը բխում է պետությունների՝ իրենց քաղաքացիների հանդեպ պարտավորությունից: Ի հավելումն որեւէ երկրին հատուկ օրենսդրության, միջազգային մակարդակով ընդունվել են մի քանի բանաձեւեր, որոնք ստացել են շատ լայն աջակցություն, և որոնցում նշվում են անհայտ կորածների ճակատագիրը պարզելու ընդհանուր պարտականությունը: Օրինակ՝ զինված հակամարտությունների ժամանակ անհայտ կորած կամ մահացած անձանց հաշվառման հարցում օգնության և համագործակցության մասին բանաձեւով, որն ընդունվել է 1974 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, սահմանվում է, որ «զինված հակամարտություններում անհայտ կորած հարազատների ճակատագրերի մասին իմանալու ցանկությունը հիմնարար մարդասիրական պահանջ է եւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան կոչ է արել զինված հակամարտությունների կողմերին, անկախ նրանց բնույթից, «ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք կարող են իրենց իրավասության սահմաններում ... տեղեկատվություն տրամադրել անհայտ կորածների մասին»[2]:

Մարդու իրավունքների գծով ՄԱԿ-ի նախկին հանձնաժողովը և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան վերահաստատել են «զինված հակամարտության հետևանքով անհայտ կորած հարազատների ճակատագրերի վերաբերյալ տեղեկություն ստանալու ընտանիքների իրավունքը»: Կարմիր խաչի և Կարմիր մահիկի շարժման միջազգային համաժողովը տարբեր առիթներով նաև ընդունել է բանաձևեր՝ ընդգծելով զինված հակամարտության պայմաննե-

[2] UN General Assembly, Res. 3220 (XXIX) (adopted by 95 votes in favour, none against and 32 abstentions) (ibid., § 76)

ռում իրենց հարազատների ճակատագրերի վերաբերյալ ընտանիքների տեղեկացված լինելու իրավունքը:

Համաձայն Միջազգային մարդասիրական իրավունքի (այսուհետ նաեւ՝ ՄՄԻ)՝ անհայտ կորչելու հետ կապված գոյություն ունի պետության երկու հիմնական պարտավորություն՝ կանխել մարդկանց անհետացումը եւ պարզել նրանց ճակատագիրը և գտնվելու վայրը:

Համաձայն Միջազգային մարդասիրական իրավունքի՝ զինված հակամարտության կողմերը պետք է տրամադրեն նույնականացման միջոցներ իրենց զինված ուժերի կամ զինյալ խմբերի համար: Ըստ ՄՄԻ-ի՝ կարևոր է նաև երաշխավորել ռիսկային գոտում գտնվող մարդկանց, ինչպիսիք են օրինակ երեխաները, վիրավորները և հիվանդները, ծերերը, հաշմանդամները, ազատազրկվածները և կալանավայրերում գտնվողները, հաշվառված լինելը: Այն նաև նախատեսում է մահացածների կամ նրանց մասունքների տնօրինումը և դրանց վերաբերյալ ողջ տեղեկատվության անցկացումը հաշվառման մատյաններ, ինչպես նաև մահվան վկայականների հանձնումը համապատասխան ընթացակարգով: Շարադրված միջոցառումներին հետևելը զինված հակամարտության ժամանակ կկանխի մարդկանց անհետացումը:

Անհայտ կորածների կարգավիճակն ու նրանց ընտանիքների իրավունքները կարգավորող առանձին օրենքի ընդունումն ու արդյունավետ կիրարկումը պետության պատասխանատու վերաբերմունքի դրսևորումն է անհայտ կորածների և նրանց ընտանիքի անդամների համար իրավական պաշտպանության երաշխիքների ապահովման տեսանկյունից, մասնավորապես՝ անհայտ կորչելու հանգամանքների ուսումնասիրության տեսակետից, որը ՀՀ որևէ օրենքով կամ նորմով չի կարգավորվում: Պետությունը պետք է նաև օրենքով ճանաչի պատերազմական գործողությունների ժամանակ անհայտ կորածի իրավական կարգավիճակը[3], և ըստ այդ կարգավիճակի՝ իրականացնի անհայտ կորածի հարազատների սոցիալական, հոգեբանական, ֆինանսական, կրթական և այլ իրավունքների իրականացման երաշխավորումը:

Օրինակ՝ Կոլումբիայում ընդունվել են մի քանի օրենքներ, որոնք անհայտ կորածների ընտանիքներին և հարազատներին ապահովում են սոցիալական պաշտպանության հասանելիություն: Անհետացած անձանց որոնման ազգային ռազմավարությամբ սահմանվել է պարտադիր մեթոդաբանություն, որին պետք է հետևեն դատական մարմինները անհետացած անձանց վերաբերյալ գործերի քննության ժամանակ:

2016 թվականի հունիսին Պերուում նույնպես ընդունվել է անհայտ կորած անձանց որոնումների մասին օրենք: Օրենքով սահմանված են Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի կողմից մշակված ուղեցույցում նախատեսված կարգավորումներ, որոնցով ամրագրված են զինված հակամարտության կամ երկրի ներսում բռնության հետևանքով անհայտ կորած անձանց կարգավիճակի օրենսդրական կարգավորման սկզբունքները:

Բոսնիայի և Հերցեգովինայի 2004 թվականին ընդունված «Անհայտ կորածների մասին»

[3] Անհայտ կորած անձանց իրավական կարգավիճակի անհրաժեշտության եւ հիմնավորումների մասին տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում՝ «Անհայտ կորածի իրավական կարգավիճակն ամրագրող միջազգային նորմերը և դրանց ամրագրումը որոշ պետությունների օրենսդրությունում» վերլուծական մասում: Վերուծությունն իրականացվել է «Թումանյան» փաստաբանական գրասենյակի կողմից:

օրենքով ամրագրված է անհայտ կորած անձանց ճակատագրերի մասին ճշմարտությունն իմանալու նրանց հարազատների իրավունքը, ինչպես նաև հետաքննության ընթացքի մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը: Օրենքով ստեղծվել է նաև «Անհայտ կորած անձանց ինստիտուտը», որը հանդիսանում է պետական հիմնարկ և օժտված է Բոսնիայի և Հերցեգովինայի ամբողջ տարածքում անհայտ կորած անձանց որոնման և նույնականացման գործողությունների իրականացնելու մանդատով: Օրենքով ստեղծվել են նաև անհայտ կորածների Կենտրոնական գրանցամատյան (տվյալների բազա) և անհայտ կորածների ընտանիքների համար հիմնադրամ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մշակել է «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ առաջարկելով այն պետական մարմիններին՝ հաշվի առնելով հակամարտության սրման մշտական վտանգը եւ պարբերաբար տարբեր մարմինների հետ ունեցել է օրենքի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ քննարկումներ:

2010-2011 թթ-ին «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագծի աշխատանքային տարբերակը մշակվեց ՀՀ արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից, ինչը սակայն ոչ հրատապ է համարվել ՀՀ կառավարության կողմից եւ չի ընդունվել:

Պետական մարմինները չեն կարևորել այդ օրենքի ընդունման նշանակությունը, կենսական անհրաժեշտությունը անհայտ կորածների և նրանց ընտանիքների համար:

2016 թվականի պատերազմական գործողությունների ժամանակահատվածում նորից արդիական դարձավ անհայտ կորածների խնդիրը, և հերթական անգամ արձանագրվեց, թե ինչ բացասական ազդեցություն ունի «Անհայտ կորածի մասին» օրենքի բացակայությունը, որով պետությունն օրենքի ուժով ստանձնած կլիներ Ժնևյան կոնվենացիաներով վերցրած պարտավորություններն ու կունենար դրանց իրականացման համար անհրաժեշտ իրավական եւ ինստիտուցիոնալ մեխանիզմները:

Նշենք, որ դեռևս 2007 թվականին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) ընդունել է Հարավային Կովկասում հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների վերաբերյալ 1553 (2007) բանաձևը, իսկ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Եվրոպայի խորհրդի (ԵԽ) անդամ պետություն, ստանձնել է ԵԽԽՎ բանաձևերի ու հանձնարարականների իրագործման պարտավորություն: Սակայն դա էլ անհրաժեշտ խթան չդարձավ պետության կողմից անհայտ կորածների հանդեպ օրենսդրական մակարդակում իր պարտավորությունները ստանձնելու համար:

2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո նոր իշխանությունը ևս հետևողական չեղավ այս խնդրի լուծմանը: Օրենքի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ 2020 թվականին վերստին դիմեցինք այդ ժամանակ ՀՀ արդարադատության նախարարին, սակայն որեւէ արդյունք չունեցանք:

Պետական համակարգն, ինչպես միշտ, հետևողական չեղավ, և ՀՔԱ Վանաձորի գրասենյակը նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ պաշտպանության նախարարությունից և ՀՀ արտաքին գործերի նախարարությունից դիրքորոշում է

ստանում միայն ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո, երբ ռազմական գործողությունների հետևանքով արդեն առկա են մեծ թվով անհայտ կորածներ, և նրանց հարազատներին աջակցելու ուղղությամբ պետությունը հերթական անգամ պետք է կատարի իր պարտավորությունները:

2021 թվականի փետրվարին ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնում է ՀՀ պաշտպանության նախարարության դիրքորոշման մասին, որ ներկա փուլում օրենքի ընդունումը նպատակահարմար չէ, և ներկայացված հարաբերությունները գրեթե ամբողջովին կարգավորված են ՀՀ օրենսդրությամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության, ՀՀ վարչապետի որոշումներով և ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով:

44-օրյա պատերազմական գործողությունների ընթացքում եւ դրանից հետո, անհայտ կորած անձանց ընտանիքների կողմից ահազանգերը վկայում են, որ հստակ չէ, թե որ կառույցներն են զբաղվում անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության խնդիրների լուծմամբ եւ ինչ լիազորություններ ունեն իրենց գործառույթների իրականացման համար, ինչ օրենսդրական նորմեր են ձևավորված անհայտ կորածների և նրանց ընտանիքների տարբեր իրավունքների իրականացման երաշխավորման համար:

Հիշեցնենք, որ դեռեւս ղարաբաղյան առաջին պատերազմից անմիջապես հետո ստեղծվել է Անհայտ կորածների որոնման, գերիներին եւ պատանդներին ազատելու ուղղությամբ գործող միջազգային աշխատանքային խումբ, որի համանախագահներ են հանդիսացել Բերնհարդ Կլազենը, Պաատա Զաքարեիշվիլին եւ Սվետլանա Գաննուշկինան: Խումբը պարբերաբար համագործակցել է երկրների կառավարությունների, հասարակական կազմակերպությունների, ԿԽՄԿ-ի, ԵԱՀԿ-ի հետ: Խմբի անդամները բազմաթիվ այցեր են կատարել հակամարտության տարածաշրջան 1989 թ-ից սկսած: Խումբը գրանցվել է 2000 թ-ի օգոստոսի 18-ին:

2000 թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ նախագահի թիվ ՆՀ-693 հրամանագրով ստեղծվեց Գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող Հանձնաժողով, այնուհետեւ 2018 թ. նոյեմբերի 19-ի ՀՀ վարչապետի թիվ ՆՀ-693 հրամանագրով այն փոխարինվել է նույն հարցերով զբաղվող Գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող միջգերատեսչական Հանձնաժողովով:

2020 թ-ի պատերազմական գործողությունների ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվեց Մարտական գործողությունների ընթացքում գերության մեջ հայտնված կամ գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և այլ անձանց տվյալների ճշտման և հավաքագրման հանձնաժողով, որը զբաղվել է զուտ անհայտ կորածների վերաբերյալ տվյալների հավաքագրմամբ: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ նման տվյալներ են հավաքագրում նաև ՀՀ ՊՆ և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի (ՀՀ ԶՈՒ ԳՇ) համապա-

տասխան ստորաբաժանումները՝ իրենց գործառույթների շրջանակում, ինչպես նաեւ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) եւ ՀՀ քննչական կոմիտեն (ՔԿ): Ավելին, պատերազմական գործողություններից հետո, 2020 թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ ստեղծվեց ևս մեկ միջգերատեսչական աշխատանքային խումբ «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության նկատմամբ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով զոհվածների դիակների, գերիների և անհայտ կորած անձանց հայտնաբերման և վերադարձի հետ կապված աշխատանքները համակարգելու նպատակով»[4]: Աշխատանքային խմբի ղեկավարը ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանն էր:

Նման մի քանի կառույցների կամ հանձնաժողովների ձեւավորման հանգամանքը վկայում է այն մասին, որ չկա մեկ հիմնական պետական մարմին, որը շարունակաբար կզբաղվեր անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների խնդիրներով, այդ թվում և հատկապես ճգնաժամային իրավիճակներում, որը կունենար համապատասխան գիտելիքներ եւ կարողություն, հմտություններ, ինստիտուցիոնալ հիշողություն, պատրաստված անձնակազմ, որով երաշխավորված կլիներ անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրների արդյունավետ լուծումը:

Առանձին մտահոգության խնդիր է անհայտ կորած անձանց ընտանիքների՝ իրենց հարազատների ճակատագրի, գտնվելու վայրի, կորչելու հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքի ապահովումը, պետության կողմից նման տեղեկատվության ձեռքբերման և տրամադրման իմաստով, չնայած հասկանալի է, որ դա նաեւ պայմանավորված է հակառակ կողմի համարժեք կամքի առկայությամբ:

Բացի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովման խնդրից, ընտանիքները բախվում են մի շարք այլ խնդիրների: Մասնավորապես՝ իրավական կարգավիճակի բացակայությունը հանգեցնում է նաեւ սոցիալական եւ այլ խնդիրների առաջացմանը: Անհայտ կորածի իրավական կարգավիճակի բացակայության պատճառով ընտանիքները, ինչպես նախկինում էին ստիպված մահացած ճանաչել իրենց հարազատին՝ դատարան դիմելու միջոցով, այժմ նույնպես ստիպված են դիմել դատարան՝ անհայտ բացակայող ճանաչելու համար, ինչն անթույլատրելի է այն առումով, որ դա թողնված է հարազատի կամքին. անհայտ կորածների շատ հարազատներ հրաժարվում են մահացած կամ անհայտ բացակայող ճանաչել իրենց հարազատին, բախվելով նաեւ մի շարք ընթացակարգային խնդիրների: Բացի այդ, պետությունն իր պարտականությունները կատարելու փոխարեն, անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների համար առաջացնում է լրացուցիչ բեռ՝ դատարան դիմելու առումով: 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո ընդունված մի շարք օրենսդրական փոփոխություններ զուտ հատվածային մոտեցում են եւ չեն հանդիսանում համակարգային լուծումներ, չեն համապատասխանում ՄՄԻ սկզբունքներին:

"Անհայտ կորածի մասին" օրենքի բացակայության պայմաններում անհայտ կորածների ընտանիքների սոցիալական ապահովության խնդիրների լուծման համար ընդունվեցին

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=148148

Կառավարության մի շարք որոշումներ եւ կատարվեցին օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես՝ մարտական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների հատուցումների կարգի վերաբերյալ[5] , որի ժամկետը մի քանի անգամ երկարաձգվեց, անհայտ բացակայող ճանաչվելու համար իրականացվեցին համապատասխան փոփոխություններ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում[6]:

Ինչ վերաբերում է 44-օրյա պատերազմական գործողությունների հետեւանքով անհայտ կորած անձանց վերաբերյալ պաշտոնական վիճակագրությանը, ապա հարկ է նշել, որ պատերազմի հետևանքով մահացած, վիրավոր, անհայտ կորած անձանց և գերիների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մերժվել է «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների համաձայն:

Պատերազմի հետևանքով անհայտ կորածների, զոհված զինծառայողների, քաղաքացիական անձանց և գերիների վերաբերյալ միասնական բազայի առկայության վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ տեղեկությունները հավաքագրվում են ՀՀ ՊՆ «Մարտական գործողությունների ընթացքում գերության մեջ հայտնված կամ գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և այլ անձանց տվյալների ճշտման և հավաքագրման հանձնաժողով ստեղծելու մասին» 09.11.2020 թ. N 1114-Լ հրամանի համաձայն, սակայն ՀՀ ՊՆ ԶՈՒ ԳՇ համապատասխան ստորաբաժանումների գործառույթներից ելնելով, իրենց կողմից ևս հավաքագրվում է համապատասխան տեղեկատվություն: ՀՀ ՊՆ ներկայացուցիչը տեղեկացրել է, որ ՀՀ ԶՈՒ ԳՇ ստորաբաժանումները տիրապետում են նաև զինծառայողների և պահեստազորայինների վերաբերյալ տեղեկատվությանը: Սակայն ռազմական գործողությունների վայր մեկնելուց առաջ չհաշվառված կամավորականների ու քաղաքացիական անձանց վերաբերյալ տվյալների հավաքագրումը և մշակումը դուրս է նշված ստորաբաժանումների լիազորությունների շրջանակից:

Գերեվարված զինծառայողների և քաղաքացիական անձանց վերաբերյալ ՀՀ ՊՆ-ից հայտնել են, որ տեղեկատվությունը հավաքագրվում և մշակվում է ՀՀ ԱԱԾ և ՀՀ ԱԳՆ կողմից:

44-օրյա պատերազմի հետևանքով անհայտ կորածների թվի և այլ տվյալների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար ՀՀ վարչապետի աշխատակազմը Կազմակերպության տեղեկատվության հարցումը վերահասցեագրել է ՀՀ պաշտպանության նախարարություն, որն էլ պատասխան գրությամբ տեղեկության տարմադրումը կրկին մերժել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ՊՆ 2015 թ. հուլիսի 9-ի N 9 հրամանի հավելվածի 1-ի 55-րդ կետի պահանջների համաձայն:

Հարկ է նշել, որ Կազմակերպությունը ՀՀ ՊՆ-ից պահանջել է տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնք իրենց բնույթով վերաբերում են հանրային նշանակություն ունեցող

[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=157616 ՀՀ կառավարության 2020 թ. դեկտեմբերի 24-ի 2001-Լ որոշում
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153492 ՀՀ կառավարության 10 հունիսի 2021 թվականի N 973-Լ որոշում
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157609 11 նոյեմբերի 2021 թվականի N 1832-Լ որոշում

[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=148978 ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 44

պաշտոնական տեղեկություններին: Այսինքն, ՀՀ ՊՆ-ն մերժում է Կազմակերպությանը տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնք ուղղակի վերաբերվում են մարդու իրավունքներին և որոնց տրամադրումը հետապնդում է գերակա հանրային շահ:

Բացի այդ, հայտնի է, որ «Հայկական միասնական տեղեկատվական կենտրոնը», որը ղեկավարվում է վարչապետի աշխատակազմին կից «Հանրային կապերի և տեղեկատվության» ՊՈԱԿ-ի կողմից, պատերազմական գործողությունների ընթացքում և դրանցից հետո տարածում էր տվյալներ զոհված զինծառայողների մասին: Ավելին, նշվում էին նաեւ նրանց անուն ազգանունները:

Հետևաբար՝ ՀՀ բաշտպանության նախարարության տրամաբանության համաձայն, ստացվում է, որ այդ ողջ ընթացքում հրապարակվել է անձնական տվյալների պաշտպանության և գաղտնիությունը խախտող տեղեկություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության նպատակը

Զեկույցի նպատակն է՝ ուսումնասիրել 44-օրյա պատերազմական գործողությունների ընթացքում եւ հետպատերազմական ժամանակահատվածում անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների խնդիրների, այդ ընտանիքների խնդիրների լուծման ուղղությամբ պետության կողմից իր պարտավորությունների կատարման վիճակը:

Ուսումնասիրության խնդիրները

Ուսումնասիրության խնդիրներն են՝ բացահայտել

- Անհայտ կորածների եւ նրանց ընտանիքների խնդիրները 44-օրյա պատերազմական գործողությունների ընթացքում եւ այդ գործողությունների դադարից հետո,
- Անհայտ կորածների եւ նրանց ընտանիքների խնդիրները կարգավորող օրենսդրական բացերը,
- Անհայտ կորածների եւ նրանց ընտանիքների նկատմամբ պետության պարտավորությունների կատարման վիճակը:

Տեղեկատվության հավաքագրման մեթոդը

Տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել է քանակական հարցազրույցների մեթոդը, որը հնարավորություն է տվել հավաքագրել տեղեկություններ խնդրի վերաբերյալ ՀՀ տարբեր բնակավայրերում բնակվող անհայտ կորած անձանց ընտանիքներից: Ուսումնասիրությունն իրականացվել է 2021 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում բնակվող 104 անհայտ կորածների ընտանիքների շրջանում:

Մարզերի ընտրություն. Ուսումնասիրության համար ընդգրկվել են ՀՀ 10 մարզերը և Երևան քաղաքը: Աշխարհագրական բաշխվածության մասին առավել մանրամասն ներկայացված է ներքոնշյալ աղյուսակ 2-ում:

Հանդիպումներն իրականացվել են այն ընտանիքների հետ, ովքեր դիմել են ՀՔԱ Վանաձորի գրասենյակ 2020 թ-ի պատերազմական գործողությունների ընթացքում՝ Կազմակերպությանը տվյալներ հաղորդելու նպատակով, ինչպես նաեւ այն ընտանիքների հետ, որոնք բացահայտվել են հարցազրույցների ընթացքում:

Իրականացվել են անմիջական հարցազրույցներ՝ հարցազրուցավար-հարցվող դեմ առ դեմ զրույցի միջոցով: Մինչ հարցազրույցների իրականացումը, հարցազրուցավարները մասնակցել են դասընթացի, որի ընթացքում ուսուցանվել են հարցազրուցավարման, հաղորդակցման, զգայուն տեղեկության հետ աշխատելու հմտությունները, ինչպես նաեւ հավանական հուզական այրման առաջացման կանխարգելման հմտությունները:

Որպես հետազոտության գործիք կիրառվել է ստանդարտացված հարցաթերթը, որը

բաղկացած է եղել փակ և կիսափակ հարցերից:

Հարցազրույցների ընթացքում հավաքագրված տվյալները վեր են լուծվել այնպես, որ անձնական տվյալները չբացահայտվեն, իսկ հարցազրույցի մասնակիցների գաղտնիությունը լինի ապահովված:

Անհայտ կորածների կորչելու հանգամանքների, նրանց ընտանիքների խնդիրների վերաբերյալ պատկերն ամբողջացվել է նրանց ընտանիքներից, հարազատներից, ՋԼՄ-ներից, ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համադրմամբ:

Աղյուսակ 1. Հարցվողների թիվն ըստ մարզերի եւ բնակավայրերի

Մարզ	**Քաղաք**	**Քաղաք/ հարցազրույց-ների թիվը**	**Գյուղ**	**Գյուղ/ հարցա-զրույցների թիվը**	**Ընդամենը**	**Տոկոս**
Արարատ	Արտաշատ	3	Արարատ	4	Արարատ	
	Մասիս	1	Դալար	3		
	Վեդի	1	Մխչյան	3		
			Սիս	1		
			Ոստան	1		
			Գեղանիստ	1		
			Ջրաշեն	1		
			Նոր Խարբերդ	1		
			Այնթափ	1		
			Սուրանեվան	1		
			Արմաշ	1		
Ընդամենը	**5**		**18**		**23**	**22%**
Արմավիր	Արմավիր	5	Արմավիր	3	Արմավիր	
	Էջմիածին	1	Դալարիկ	2		
			Փարաքար	2		
			Հացիկ	2		
			Քարակերտ	2		
			Մյասնիկյան	1		
			Սարդարապատ	1		
			Հայկավան	1		
			Թաիրով	1		
Ընդամենը	**6**		**15**		**21**	**10%**
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	3	Գլաձոր	1	Վայոց Ձոր	
			Գոմք	1		
			Հերհեր	1		
Ընդամենը	**3**		**3**		**6**	
Սյունիք	Սիսիան	4	Սերս	1	Սյունիք	
Ընդամենը	**4**		**1**		**5**	**5%**

Գեղարքունիք[7]			Կարմիր գյուղ	1	Գեղարքունիք	
Ընդամենը	**0**		**1**		**1**	
Լոռի	Վանաձոր	6	Լեռնավան	1	Լոռի	
	Ալավերդի	1	Շահումյան	1		
			Ծաթեր	1		
			Ագարակ	1		
			Սարչապետ	1		
			Լեռնանցք	1		
Ընդամենը	**7**		**6**		**13**	**13%**
Կոտայք			Ջրվեժ	1	Կոտայք	
			Ջովք	1		
			Նոր Գեղի	1		
Ընդամենը		**0**		**3**	**3**	**3%**
Շիրակ	Արթիկ	1	Լեռնակերտ	1	Շիրակ	
	Գյումրի	3	Գառնառիճ	1		
Ընդամենը	**4**		**2**		**6**	**6%**
Տավուշ	Իջևան	2	Կողբ	2	Տավուշ	
	Նոյեմբերյան	1	Գանձաքար	1		
			Վազաշեն	1		
Ընդամենը	**3**		**4**		**7**	**7%**
Արագածոտն	Ղազարավան	1			Արագածոտն	
	Աշտարակ[8]	1				
Ընդամենը	**2**				**2**	**2%**
Երևան	17				17	16%
Ընդամենը					**104**	**100%**

Նշված 104 ընտանիքներից 17-ը բնակվում են Երեւան քաղաքում, 34-ը նշված մարզերի քաղաքային եւ 53-ը գյուղական համայնքներում:

Քարտեզ 1. Անհայտ կորածների բնակության վայրերը



[7] Հարցազրույցն իրականացվել է Երևանում
[8] Հարցազրույցն իրականացվել է Երևանում

Հանդիպումների ընթացքում, բացի անհայտ կորչելու հանգամանքների վերաբերյալ տեղեկություններից, հավաքագրվել են նաեւ մինչ անհայտ կորչելը՝ զինծառայության ընթացքում առողջական վիճակի, զինծառայության ընթացքում հնարավոր խնդիրների, նրանց ընտանիքների սոցիալական ապահովության վիճակի վերաբերյալ տեղեկություններ:

Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը

Հարցմանը մասնակցել են ՀՀ բոլոր մարզերից եւ Երեւան քաղաքից 104 անհայտ կորած անձանց ընտանիքի անդամներ: Աղյուսակում ներկայացված է անհայտ կորած անձանց զինվորական ծառայության տեսակը: Ուսումնասիրության շրջանակում հարցված ընտանիքներից անհայտ կորածների գերակշիռ մասը հանդիսանում են պարտադիր ժամկետային զինծառայողներ՝ 48%:

Աղյուսակ 2. Անհայտ կորածի ծառայության տեսակը

Ծառայության տեսակ	Թիվ	Տոկոս
Պարտադիր ժամկետային	49	48%
Կամավորական	18	17%
Պահեստազոր/զորահավաք	15	14%
Պայմանագրային	16	15%
Սպա	5	5%
Ոստիկան	1	1%
Ընդամենը	**104**	**100%**

Անհայտ կորած անձանց հիմնական մասն ունեն միջնակարգ կրթություն՝ 45%, բարձրագույն կրթություն ունեցողները՝ 21%:

Աղյուսակ 3. Անհայտ կորածի կրթությունը

Կրթությունը	Թիվ	Տոկոս
Միջնակարգ (10-12-ամյա)	47	45%
Բարձրագույն	22	21%
Միջնակարգ մասնագիտական (տեխնիկում)	16	15%
Թերի բարձրագույն	12	12%
Թերի միջնակարգ (8-ամյա)	6	6%
Տեղեկատվություն չի տրամադրել	1	1%
Ընդամենը	**104**	**100%**

Հարցազրույցների շրջանակում ուսումնասիրել ենք նաեւ անհայտ կորածների ընտանեկան կարգավիճակը եւ ընտանիքի կազմը, ընտանիքի բնակարանային, կենցաղային, սոցիալական խնդիրներն ու կարիքները:

Աղյուսակ 4. Անհայտ կորածի ընտանեկան կարգավիճակը

Ընտանեկան կարգավիճակը	Թիվ	Տոկոս
Չամուսնացած	69	66%
Ամուսնացած	33	32%
Ամուսնալուծված	2	2%
Ընդամենը	**104**	**100%**

Հարցված ընտանիքներից անհայտ կորած անձանց 66%-ը ամուսնացած չէ, 32%-ը տոկոսն ամուսնացած է եւ 2%-ը՝ ամուսնալուծված:

Ուսումնասիրության ընթացքում քննարկվել են նաեւ անհայտ կորածների առողջական վիճակը մինչ զինվորական ծառայության անցնելը: Այսպիսով, առնվազ 31 (30%) հոգին ունեցել են առողջական խնդիրներ, որոնց գերակշիռ մասը պարտադիր ժամկետային զինծառայողներ են, իսկ մինչ զինծառայությունը առողջական խնդիրներ չունեցող պարտադիր ժամկետային զինծառայողներից 13-ը (27%) խնդիրներ ձեռք են բերել արդեն պատերազմի ընթացքում, որի մասին հայտնել են հարազատներին մինչ անհետանալը:

Աղյուսակ 5. Անհայտ կորածների առողջական խնդիրների առկայությունը պատերազմից առաջ և պատերազմական գործողությունների ընթացքում

	Պարտադիր ժամկետային		Պայմանագրային		Սպա		Կամավորական		Պահեստազորային/ զորահավաք		Ոստիկան		Ընդամենը			
	Մինչ պատերազմը	Պատերազմի ընթ.	Մինչ պատերազմը	Պատերազմի ընթ.	Մինչ պատերազմը	Պատերազմի ընթ.	Մինչ պատերազմը	Պատերազմի ընթ.	Մինչ պատերազմը	Պատերազմի ընթ.	Մինչ պատերազմը	Պատերազմի ընթ.	Մինչ պատերազմը	Տոկոս	Պատերազմի ընթ.	Տոկոս
Ոչ	31	29	15	15	5	4	11	12	9	10	1	1	72	69%	71	68%
Այո	18	13	1	1		1	6	2	6	3			31	30%	20	19%
Դժվարանում է պատասխանել		7					1	4		2			1	1%	13	13%
Ընդամենը	**49**		**16**		**5**		**18**		**15**		**1**		**104**	**100**	**104**	**100%**

Ըստ ընտանիքի կազմի, անհայտ կորած 104 անձանցից.

-1-ը բնակվել է 1 անձի՝ իր հոր հետ,

- 29 անհայտ կորած (28%) բնակվել է 2 անձի հետ, որոնցից

- 18-ի դեպքում այդ անձինք հանդիսացել են ծնողը կամ ծնողները կամ չափահաս

քույր եւ/կամ եղբայրը (17%)

- 2-ի դեպքում՝ ծնողը կամ ծնողները և անչափահաս քույր կամ եղբայրը (2%)
- 2-ի դեպքում՝ անհայտ կորածի կինը և չափահաս երեխան (2%) ,
- 6-ի դեպքում՝ անհայտ կորածի կինը, չափահաս և անչափահաս երեխան (6%)
- 1-ի դեպքում՝ ծնողը, կինը և անչափահաս երեխան/երը (1%):

38-ը (37%) բնակվել է 3 անձի հետ, որոնցից

- 22 -ի դեպքում այդ անձինք հանդիսացել են անհայտ կորածի ծնողը կամ ծնողները և չափահաս քույր և/կամ եղբայրները (21%),
- 6 -ի դեպքում՝ անհայտ կորածի ծնողը կամ ծնողները, չափահաս քույր և/կամ եղբայր/ները և տատիկ-պապիկ/ները (6%) ,
- 1 -ի դեպքում՝ անհայտ կորածի կինը և չափահաս երեխան/երը (1%) ,
- 2 -ի դեպքում՝ անհայտ կորածի կինը, չափահաս և անչափահաս երեխաները (2%),
- 1 -ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները կամ այլ հարազատները, կինը և չափահաս երեխան (1%),
- 6 -ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները կամ այլ հարազատները, կինը, չափահաս և անչափահաս երեխան (6%),

- 19 անհայտ կորած (18%) բնակվել է 4 անձի հետ, որոնցից

- 6 -ի դեպքում այդ անձինք հանդիսացել են անհայտ կորածի ծնող/ները և չափահաս քույր և/կամ եղբայրները (6%) ,
- 4 -ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները, չափահաս քույր և/կամ եղբայր/ները և տատիկ-պապիկ/ները (4%),
- 1 -ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները, քույր և/կամ եղբայր/ները, տատիկ-պապիկ/ները և այլ հարազատ/ներ (1%),,
- 8 -ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները, կինը, չափահաս երեխաները և այլ հարազատներ (8%):

- 7անհայտ կորած (7%) բնակվել է 5 անձի հետ, որոնցից

- 1-ի դեպքում այդ անձինք հանդիսացել են անհայտ կորածի ծնող/ները, չափահաս քույր և/կամ եղբայր/ները և տատիկ-պապիկ/ները (1%),
- 1-ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները, անչափահաս քույր և/կամ եղբայր/ները և տատիկ-պապիկ/ները (1%),
- 1-ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները, չափահաս քույր և/կամ եղբայր/ները, տատիկ-պապիկ/ները և այլ հարազատներ (1%),
- 1-ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները, անչափահաս քույր և/կամ եղբայր/ները, տատիկ-պապիկ/ները և այլ հարազատներ (1%),
- 3 -ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները, կինը, անչափահաս երեխաները և այլ հարազատ/ներ (3%):

- 10 անհայտ կորած (10%) բնակվել է 6 և ավելի անձի հետ, որոնցից

- 2 -ի դեպքում այդ անձինք հանդիսացել են անհայտ կորածի ծնող/ները, չափահաս քույր և/կամ եղբայր/ները և տատիկ-պապիկ/ները(2%) ,
- 3 -ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները, չափահաս քույր և/կամ եղբայր/ները, տատիկ-պապիկ/ները և այլ հարազատներ (3%),
- 3 -ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները, անչափահաս քույր և/կամ եղբայր/ները, տատիկ-պապիկ/ները և այլ հարազատներ(3%),
- 2 -ի դեպքում՝ անհայտ կորածի ծնող/ները, կինը, անչափահաս երեխա/ները և այլ հարազատներ(2%):

Նշենք, որ 6 և ավելի անձից բաղկացած 10 ընտանիքներից 4-ում բնակվում է 6 հոգի, 4-ում՝ 7 հոգի, 1-ում՝ 8 հոգի, 1-ում՝ 10 հոգի:

Աղյուսակ 6. Անհայտ կորած անձի ընտանիքում անչափահաս երեխաների և տարեցների առկայությունը

Անչափահասներ/ տարեցներ ընտանիքում	**Թիվ**	**Տոկոս**	**Քանի անձից է բաղկացած ընտանիքը**					
			1 անձ	**2 անձ**	**3 անձ**	**4 անձ**	**5 անձ**	**6 և ավելի անձ**
Անհայտ կորածները, ում ընտանիքում բնակվում են անչափահասներ	25	24%		9	3	7	3	3
Անհայտ կորածները, ում ընտանիքում բնակվում են տարեցներ	16	15%			6	5		5
Անհայտ կորածները, ում ընտանիքում բնակվում են և անչափահասներ և տարեցներ	10	10%			5	1	2	2
Անհայտ կորածները, ում ընտանիքում չեն բնակվում են անչափահասներ և տարեցներ	53	51%	1	20	24	6	2	-
Ընդամենը	**104**	**100**	**1**	**29**	**38**	**19**	**7**	**10**

Հարցազրույցների անցկացման պահին անհայտ կորած 104 անձանց ընտանիքներից **25**-ում (24%) բնակվել են անչափահաս երեխաներ՝ ներառյալ անհայտ կորածների անչափահաս քույր և/կամ եղբայրները, **16**-ում (15%) բնակվել են տարեցներ, **10**-ում (10%) բնակվել են և անչափահաս երեխաներ, և տարեցներ:

Այսպիսով, անհայտ կորած 104 անձանց կորչելու հետևանքներն անմիջական և ուղղակի ազդեցություն են ունեցել նրանց ընտանիքի անդամ հանդիսացող 355 անձանց վրա: Այսինքն առնվազն յուրաքանչյուր անհայտ կորած անձի հետ կապված նրա ընտանիքի չորս անդամներ ունեն առնվազն հոգեբանական աջակցության կարիք:

Ի դեպ, հարցված ընտանիքներից 51-ում կա 29 տարեց և առնվազն 41 անչափահաս երեխա (ոչ բոլորն են նշել ընտանիքում անչափասների թիվը):

Անհայտ կորածների ընտանիքների սոցիալ-տնտեսական խնդիրների նկարագիրը

Անհայտ կորածների ընտանիքների բնակարանային պայմանները

Հարցազրույցների ընթացքում փորձել ենք նաեւ դիտարկել անհայտ կորածների ընտանիքների բնակարանային պայմանները: Ըստ դիտարկումների՝ որոշ ընտանիքներ ունեն բնակարանային խնդիրներ: Նույնիսկ սեփական բնակարանում կամ առաձնատներում բնակվող ընտանիքների կացարանները կարիք ունեն վերանորոգման կամ բարեկարգման:

Այսպես, կազմակերպության կողմից այցելած 104 ընտանիքներից.

- 28-ը (27%) բնակվում են մոտավոր հաշվարկով յուրաքանչյուր անձի համար 10-15 քմ տարածքով բնակարանում,
- 19-ը (18%)՝ 5-10 քմ տարածքով բնակարանում,
- 18-ը (17%)՝ 15-25 քմ տարածքով բնակարանում,
- 13-ը (13%)՝ բնակվում են սեփական առանձնատանը, որը բավարար է ընտանիքների անդամների համար,
- 8-ը (8%) բնակվում են, ըստ իրենց գնահատման, բավարար չափի տարածքում,
- 6 (6%) հոգու հետ հարցազրույցներն իրականացվել են բնակարանից դուրս, հետեւաբար հնարավոր չէր դիտարկում կատարել,
- 6 (6%) հոգի չեն հայտնել ընտանիքի մեկ անձի հաշվարկով բնակարանի/տան մակերեսի մասին,
- 2-ը (2%) բնակվում են ընտանիքի մեկ անձի հաշվով մինչև 5 քմ տարածքով բնակարանում,
- 2-ը (2%) բնակվում են 30- 40 քմ տարածքով բնակարաններում,
- 1-ը՝ (1%) բնակվում է փոքր չափի տարածքում,
- 1-ը (1%)՝ բնակվում է, ըստ իրենց գնահատման, բավարար մեծ չափի տարածքում,

Աղյուսակ 7. Բնակելի տարածքի մակերեսը մեկ անձի հաշվով /մոտավոր գնահատական/

Ընտանիքի բնակելի տարածքը	Թիվ	Տոկոս
10-15 քմ	28	27%
5-10 քմ	19	18%
15-25 քմ	18	17%
Սեփական տուն	13	13%
Միջին չափի բնակարան/ բավարարում է	8	8%
Հարցազրույցն իրականացվել է բնակարանից դուրս՝ այլ վայրում/ չեն հայտնել	6	6%
Չեն հայտնել	6	6%
Մինչև 5քմ	2	2%

40 քմ	1	1%
33 քմ	1	1%
Շատ մեծ տուն	1	1%
Փոքր տուն	1	1%
Ընդամենը	**104**	**100%**

Նշենք, որ ուսումնասիրության ընթացքում հարցված ընտանիքների բնակարաններից միայն 57 -ն (55% -ը) են բարեկարգ կամ վերանորոգված, 27-ի (26%-ի) բնակարաններն ունեն վերանորոգման կարիք, 7-ի (7%-ի) պայմանները գնահատվել են վատ կամ շատ վատ, մյուս դեպքերում բնակարանները վերանորոգման կամ կառուցման փուլում են եղել: Ընտանիքներից մեկը բնակվել է վագոն-տնակում, որտեղ ապրում է նաեւ անչափահաս երեխա (տե՛ս աղյուսակ 8):

Նշենք, որ վատ կամ շատ վատ բնակարանային պայմաններ ունեցող 7 (7%) ընտանիքներից 3 %-ի դեպքում ընտանիքում աշխատող անձ չկա: Այնուամենայնիվ, նրանք հանդիսանում են «Կամուրջ» ծրագրի շահառու՝ պետության կողմից ստանալով ամսական երեք հարյուր հազար դրամ: Ընտանիքներից 4-ը, բացի «Կամուրջ» ծրագրի շահառու լինելը, ֆինանսական աջակցություն է ստացել մարզպետարանից կամ համայնքապետարանից:

Աղյուսակ 8. Անհայտ կորածների ընտանիքների բնակարանային պայմանները

Բնակարանային վիճակը	**Ընտանիքների թիվը**	**Տոկոս**
Բարեկարգ է/ վերանորոգված[9]	57	55%
Ունի վերանորոգման կարիք[10]	27	26%
Վատ պայմաններ[11]	6	6%
Հարցազրույցն իրականացվել է այլ վայրում, եւ հարցվողը չի նշել կարիքի մասին	5	5%
Վերանորոգման փուլում է	4	4%
Լավ	3	3%
Կիսակառույց /պատերազմից մոտ երկու ամիս առաջ էին սկսել/	1	1%
Շատ վատ՝ բնակվում են վագոն-տնակում, սակայն հողատարածք են ստացել, տուն պետք է կառուցեն	1	1%
Ընդամենը	**104**	**100%**

[9] 4 ընտանիք բնակվում է վարձակալած բնակարանում
[10] 2 ընտանիք բնակվում է վարձակալած բնակարանում
[11] 2 ընտանիք բնակվում է վարձակալած բնակարանում

Փորձել ենք նաեւ պարզել, թե ունեցած հողամասը որքանով է հնարավորություն տալիս ընտանիքներին հոգալ ընտանիքի հոգսերը, եւ ըստ հարցազրույցների պարզվել է, որ 38 ընտանիք ունի հողամաս, որոնցից 26-ը (68%-ը) մշակում են իրենց հողը, 6 ընտանիք (16%-ը) որպես խոչընդոտ նշել է ոռոգման ջրի բացկայությունը կամ վատ մատակարարումը (տե՛ս աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Անհայտ կորածների հարազատների հողամասի մշակման խնդիրներ

Ոռոգման ջրի, մշակելու հնարավորությունների, սարքավորումների վերաբերյալ տեղեկությունները	Թիվ	Տոկոս
Խնդիր չեն նշել, հողամասը մշակում են	26	68%
Ունեն ոռոգման ջրի խնդիր	6	16%
Չեն մշակում/ պատճառը չեն նշել[12]	4	11%
Առողջական խնդիրների պատճառով չեն կարողանում մշակել	1	3%
Միայն ծաղիկներ են, առանձնապես մշակելու կարիք չկա	1	3%
Ընդամենը	38	100

Անհայտ կորած անձանց ընտանիքների անդամների զբաղվածությունը

Անդրադառնալով անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների զբաղվածությանը եւ սոցիալական խնդիրներին՝ նշենք, որ հարցված 104 ընտանիքներից 28-ում (27%) որևէ աշխատանք ունեցող անձ չկա: Այդ 28 ընտանիքներից 20-ում (19%) կան թոշակառուներ:

104 ընտանիքներից 19-ում (18%) կան պետական հաստատությունների աշխատողներ, 44-ը (43%) աշխատում են մասնավոր, 11-ը (11%) եւ մասնավոր, եւ պետական հաստատություններում (տե՛ս աղյուսակ 10):

104 ընտանիքներից 48%-ի դեպքում ընտանիքում աշխատում է մեկ անձ, 18%-ի դեպքում՝ երկու եւ 7%-ի դեպքում 3 անձ:

Աշխատանք չունեցող վերոնշյալ 28 ընտանիքներից 9-ի դեպքում անհայտ կորածը կամավորական է, 4-ը՝ պահեստազորային, 7-ը՝ պարտադիր ժամկետային, 6-ը պայմանագրային, 1-ը՝ «Ես եմ» ծրագրով ծառայություն անցնող պարտադիր ժամկետային զինծառայող, 1-ը՝ սպա: Այսինքն՝ առնվազն 12 ընտանիքում (12%) միակ աշխատողը փաստացի հանդիսացել է անհայտ կորած անձը: Կամավորականների դեպքում հայտնի չէ, թե արդյոք վերջիններս աշխատանք ունեցել են, թե ոչ: Աշխատող չունեցող 28 ընտանիքներից 14-ում կան թոշակառուներ (1 դեպքում՝ նպաստառու), 5 ընտանիքում (5%)՝ անչափահաս երեխաներ, 6 ընտանիքում (6%)՝ և թոշակառուներ, և անչափահաս երեխաներ:

[12] 2-ը նշել է, որ ոռոգման ջրի խնդիր չունեն, ուղղակի հողամասը չենե մշակում: Պատճառը չի նշել

Աղյուսակ 10. Անհայտ կորած անձանց հարցված ընտանիքների եկամտի աղբյուրը

Ընտանիքում աշխատող-ների թիվը	Եկամտի աղբյուրը/ աշխատանքի ոլորտը												Ընտա-նիքների թիվը	Տոկոս
	Թոշակառու/ նպաստառու	%	Գործազուրկ/ եկամտի աղբյուր հայտնի չէ	%	Ոչ հասարակական	%	Մասնավոր	%	Մասնավոր և պետական	%	Սեփական	%		
1 հոգի					16	15%	32	31%			2	2%	50	48%
2 հոգի					2	2%	10	10%	7	7%			19	18%
3 հոգի					1	1%	2	2%	4	7%			7	7%
Աշխատող չկա	20	19%	8	8%									28	27%
Ընդամենը	**20**	**19%**	**8**	**8%**	**19**	**18%**	**44**	**42%**	**11**	**11%**	**2**	**2%**	**104**	**100%**

Հարցված ընտանիքների միջին ամսական եկամտի բաշխումը ներկայացված է Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. Անհայտ կորած անձանց հարցված ընտանիքների միջին ամսական եկամուտը

Միջին ամսական եկամուտը դրամային արտահայտությամբ	Թիվ	Տոկոս
69 000 – 150 000 դրամ	47	45%
Մինչեւ 68 000 դրամ	40	38%
151 000-250 000 դրամ	8	8%
251 000 եւ ավելի	7	7%
Չեն հայտնել	2	2%
Ընդամենը	**104**	**100%**

Հարցված ընտանիքների տնտեսական դրության վերաբերյալ ստացված տվյալները ներկայացված են Աղյուսակ 12-ում և 13-ում

Աղյուսակ 12. Անհայտ կորածների հարցված ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի բնութագիրը

Ընտանիքում անձանց թիվը / առանց անհայտ կորած անձի/	Ընտանիքում աշխատողների թիվը																																	
	Գումարը չի բավարարում սնունդ գնելու համար				%	Գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար				%	Գումարը բավարարում է միայն սնունդ գնելու և կոմունալ վարձերը վճարելու համար				%	Գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար				%	Գումարը բավարարում է սնունդ, հագուստ գնելու և կոմունալ վարձերը վճարելու համար				%	Գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար				%	Չի ցանկանում պատասխանել				%
	1 աշխատող	2 աշխատող	3 աշխատող	Գործազուրկ կամ թոշակառու		1 աշխատող	2 աշխատող	3 աշխատող	Գործազուրկ կամ թոշակառու		1 աշխատող	2 աշխատող	3 աշխատող	Գործազուրկ կամ թոշակառու		1 աշխատող	2 աշխատող	3 աշխատող	Գործազուրկ կամ թոշակառու		1 աշխատող	2 աշխատող	3 աշխատող	Գործազուրկ կամ թոշակառու		1 աշխատող	2 աշխատող	3 աշխատող	Գործազուրկ կամ թոշակառու		1 աշխատող	2 աշխատող	3 աշխատող	Գործազուրկ կամ թոշակառու	
1 անձ									1																									
2 անձ	1			1		13	2	1	6							1			1		1					1		1						
3 անձ				1		16	5	1	6							2	2									2	2				1			
4 անձ				2		3	3	1	4		1					1	1									3								
5 անձ						1	1	1	3										1															
6 և ավելի անձ						2	1		2								1	1								1	1	1						
Ընդ.	**1**	**0**	**0**	**4**	**5%**	**35**	**12**	**4**	**22**	**70%**	**1**	**0**	**0**	**0**	**1%**	**4**	**4**	**1**	**2**	**11%**	**1**	**0**	**0**	**0**	**1%**	**7**	**3**	**2**	**0**	**12%**	**1**	**0**	**0**	**0**	**1%**

Աղյուսակ 13. Անհայտ կորած անձանց հարցված ընտանիքների եկամուտների համապատասխանությունը կարիքներին

Որքանով է բավարարում եկամուտը անհայտ կորածների ընտանիքներին	Ընտանիքում աշխատողների թիվը				Ընդամենը	Տոկոս
	1 հոգի	2 հոգի	3 հոգի	Գործազուրկ կամ թոշակ-առու		
Գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար	35	12	4	22	73	70%
Գումարը չի բավարարում սնունդ գնելու համար	1			4	5	5%
Գումարը բավարարում է միայն սնունդ գնելու և կոմունալ վարձերը վճարելու համար	1				1	1%
Գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար	4	4	1	2	11	11%
Գումարը բավարարում է սնունդ, հագուստ գնելու և կոմունալ վարձերը վճարելու համար	1				1	1%
Գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար	7	3	2		12	12%
Չի ցանկացնում պատասխանել	1				1	1%
Ընդամենը	**50**	**19**	**7**	**28**	**104**	**100%**

Դիտարկելով անհայտ կորած անձանց հարցված ընտանիքների եկամուտների համապատասխանությունը նրանց կարիքներին, հարկ է արձանագրել, որ 104 ընտանիքներից 73-ի (70%-ի) եկամուտը բավարարում է միայն սնունդ գնելու համար: Ընտանիքների 5%-ի գումարը չի բավարարում նույնիսկ սնունդ գնելու համար: Ընտանիքներից միայն 12 –ն (12%-ը) են հայտնել, որ գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար:

Անհայտ կորած անձանց ընտանիքների ֆինանսական, առողջական եւ այլ խնդիրները

Ֆինանսական

Փորձել ենք նաեւ պարզել, թե անհայտ կորած անձանց ընտանիքներն ինչ խնդիրներ ունեն: Դրանք բազմազան են, թեեւ հիմնականում նշում են ֆինանսական եւ առողջական խնդիրները:

Այսպես, ընտանիքների 67%-ը ունեն վարկային պարտավորություններ, որից 45%-ը հարցազրույցների պահին դեռեւս շարունակել են ունենալ նման պարտավորություններ:

Այս ընտանիքների անհայտ կորած անձինք ըստ ծառայության տիպի ունեն հետևյալ պատկերը. 9 հոգի (9%-ը) կամավորական, 12-ը (12 %-ը)՝ պահեստազորային, 5 -ը (5%-ը)՝ պայմանագրային, 21 -ը (21%-ը)՝ ժամկետային:

Ընտանիքներից 15%-ն ունեն վարկային պարտավորություններ, սակայն բանկերի կողմից վարկի տոկոսները սառեցվել են. այս ընտանիքներից անհայտ կորած անձանց ծառայության պատկերը հետևյալն է. 4 հոգի (4%-ը)՝ կամավորական, 1-հոգի պահեստազորային, 8 հոգի (8%-ը)՝ պայմանագրային, 2-ը (2%-ը)՝ պարտադիր ժամկետային և 1 սպա: Ընտանիքներից միայն 7%-ի (որոնցից 2 հոգին պարտադիր ժամկետային, 2 հոգին պայմանագրային, և մեկական պահեստազորային, կամավորական, «Ես եմ» ծրագրով զինծառայություն անցնող) վարկային պարտավորություններն են ընդհանրապես ներվել (տե՛ս աղյուսակ 14):

Աղյուսակ 14. Անհայտ կորածի ընտանիքի ֆինանսական կարիքները և վարկային պարտավորությունները

Ֆինանսական կարիքներ/ վարկային պարտավորություններ	Ընտանիքների թիվը	Տոկոս
Ընտանիքն այս պահին ունի ունի վարկային պարտավորություններ	47	45%
Ընտանիքը չունի վարկային պարտավորություններ	26	25%
Բանկերի կողմից վարկի տոկոսները սառեցվել են	16	15%
Ֆինանսական պարտավորությունների մասին չեն նշել	8	8%
Բանկերի կողմից վարկային պարտավորությունները ներվել են	7	7%
Ընդամենը	**104**	**100%**

Վարկային պարտավորություններ ունեցող ընտանիքների 19%-ը պատերազմից հետո վարկային պարտավորությունները չեն կարողանում կատարել, ինչի պատճառով տուգանք է հաշվարկվում: Վարկային պարտավորությունների չկատարման պատճառով ընտանիք-

ներից 8%-ի գործը կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում է կամ դատարանում:

Առանձին մտահգության խնդիր է անհայտ կորած անձի կարգավիճակի բացակայության պատճառով նրանց հարազատների համար բազմաթիվ նոր խնդիրների առաջանալը: Մասնավորապես հարազատները բախվում են անհայտ կորած անձի անունից բանկերում գրավադրված ապրանքների վերադարձի, վարկի սառեցման եւ այլ հարցերի հետ կապված:

Կան ընտանիքներ, որոնք ստիպված են լինում անգամ վարկ ձեռք բերել իրենց կորած հարազատին գտնելու փնտրողական աշխատանքներ իրականացնելու համար: Առավել մանրամասն խնդիրներ ներկայացված են աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15. Անհայտ կորածների ընտանիքների վարկային պարտավորությունների կատարման վիճակը

Ֆինանսական պարտավորություններ ունեցող ընտանիքների խնդիրները	Ընտանիքների թիվը	Տոկոս
Պատերազմից հետո վարկային պարտավորությունները չեն կարողանում կատարել, ինչի պատճառով տուգանք է հաշվարկվում:	9	19%
Վարկային պարտավորությունների չկատարման պատճառով գործը ԴԱՀԿ-ում կամ դատարանում է	4	8%
Մինչ պատերազմը այլ անձի համար են վարկ վերցրել, ով մուծում չի կատարում, իսկ անհայտ կորածի ընտանիքը չի կարող վճարել:	3	6%
Բանկում անհայտ կորածի անունով գրավադրված ոսկու գումարը հարազատները ամիսներ առաջ վճարել են, բայց բանկը ոսկին չի վերադարձնում, ասելով՝ անհրաժեշտ է որպեսզի կամ տվյալ անձը ներկայանա կամ պետք է ներկայացնել մահվան վկայական կամ հարազատը հանդիսանա անհայտ կորածի իրավահաջորդը, որը փաստացի հնարավոր չէ: Իսկ ոսկին բանկում պահելու համար բանկը տույժեր է հաշվարկում:	2	4%
Բանկում/ վարկային կազմակերպությունում ապառիկ վարկ ունեցող անհայտ կորած անձի ընտանիքի անդամին հայտնում են, որ անհայտ կորածի կարգավիճակ ունենալու դեպքում հնարավոր չէ սառեցնել վարկը կամ դրա տոկոսագումարը	1	2%
Վարկը ներելու խնդրանքով բանկի կառավարչին դիմելուց հետո վերջինս հայտնել է «Այդ ի՞նչ մեծ գումար է (150.000 դրամ)», ակնարկելով, որ ընտանիքը «Կամուրջ» ծրագրի շահառու է և հավելելով «...կամ էլ սպասիր՝ ամուսինդ գերի է կվերադառնա՝ կվճարի»	1	2%
Անհայտ կորածի անունով վարկային պարտավորություն ունեն: Վերջինիս յութուբյան ալիքում տեղադրված տեսանյութերի դիտումներից ստացված գումարը բանկը գանձում է առանց տեղեկացնելու	1	2%
Աշխատանք չունենալու պատճառով ստիպված վարկ են վերցրել, որպեսզի անհայտ կորածին գտնելու համար կարողանան գնալ տարբեր տեղեր, դիմել տարբեր կառույցների	1	2%

Անհայտ կորածի զինվորական հայրը պատերազմի ամբողջ ընթացքում եղել է առջնագծում, սակայն վարկերի հետ կապված որևէ արտոնություն չի ստացել: Աշխատավարձից պահվում է:	1	2%
Անհայտ կորածի ընտանիքը պարբերաբար դիմում է ներկայացնում բանկին՝ վարկերի մասով որոշակի արտոնություններ ստանալու նպատակով՝ ոչ մի արդյունք:	1	2%
Բանկ տեղեկանք են ներկայացրել, որ անձը անհայտ բացակայող է, սակայն բանկը չի ընդունել, անձին սև ցուցակում է ներառել չվճարելու պատճառով	1	2%
Ֆինանսական պարտավորությունների հետ կապված խնդիրներ մասին չեն նշել	22	47%
Ընդամենը	**47**	**100**

Առողջական

Անհայտ կորած անձանց հարցված ընտանիքներից 73%-ում արձանագրվել են առողջական խնդիրներ ունեցողներ, որոնցից 42%-ի մոտ այդ առողջական խնդիրները եղել են մինչ նրանց հարազատի անհայտ կորչելը, իսկ 31%-ի մոտ առողջական խնդիրներն առաջացել են հարազատի անհայտ կորչելուց հետո (տե՛ս աղյուսակ 16):

Աղյուսակ 16. Անհայտ կորածի ընտանիքի անդամների առողջական վիճակը

Առողջական խնդիրների առկայություն	**Ընտանիքների թիվը**	**Տոկոս**
Առողջական խնդիրներ ունեցել են մինչ հարազատի անհայտ կորչելը	44	42%
Առողջական խնդիրներն առաջացել կամ սրվել են հարազատի անհայտ կորչելուց հետո	32	31%
Առողջական խնդիրներ չեն նշել	27	26%
Չեն պատասխանել հարցին	1	1%
Ընդամենը	**104**	**100%**

Կրթական

Անհայտ կորածների ընտանիքներից 89%-ում չեն նշել կրթական կարիքների մասին, քանի որ չունեն ուսանողներ: Որոշ ընտանիքներ հայտնել են, որ անհայտ կորածի երկու երեխաները, անհայտ կորածի ընտանիքի այլ անդամներ սովորում են վճարովի հիմունքներով և մինչ այժմ ոչ մի աջակցություն չեն ստացել ուսման վճարի հարցում: Սակայն հարկ է նշել, որ որոշ դեպքերում, երբ կրթություն ստանալու համար ֆինանսական խնդիրներ են առաջացել, դրանք լուծվել են կամ միջազգային կազմակերպությունների, կամ մարզպետարանի, կամ հարազատների կողմից (տե՛ս աղյուսակ 17):

Աղյուսակ 17. Անհայտ կորածների ընտանիքի անդամների կրթական խնդիրները

Կրթական խնդիրները	Ընտանիք-ների թիվը	Տոկոս
Ընտանիքում սովորող/ ուսանող չկա կամ կրթական կարիքներ չունեն	93	89%
Անհայտ կորածի քրոջ ուսման վարձը վճարվում է ՀՕՖ-ի կողմից	1	1%
Անհայտ կորածի կրտսեր եղբոր խոհարարական դասընթացի գումարը վճարվել է մարզպետարանի կողմից	1	1%
Անհայտ կորածի կրտսեր եղբոր խոհարարական քույրը սովորում է վճարովի հիմունքներով, վարձը դեռևս չեն վճարել	1	1%
Անհայտ կորածի երկու երեխաները սովորում վճարովի հիմունքներով և մինչ այժմ ոչ մի աջակցություն չեն ստացել ուսման վճարի հետ կապված	1	1%
Անհայտ կորածի քույրը վարսահարդարում է սովորում՝ մասնավոր ոլորտում	1	1%
Անհայտ կորածի երեխան հաճախում է հաշմանդամություններ ունեցող երեխաների համար նախատեսված վարժարան, որի վճարը հոգում են հարազատները (35000 դրամ)	1	1%
Անհայտ կորածի քույրը կամ եղբայրը սովորում վճարովի հիմունքներով: Ուսման վարձը զեղչվել է հարազատի՝ անհայտ կորչելու հիմքով	1	1%
Անհայտ կորածի մայրն ու քույրն ուսանող են: Համալսարանում քրոջն ասել են, որ եղբոր անհայտ կորչելու հանգամանաքը չի կարող հաշվի առնվել զեղչի համար	1	1%
Անհայտ կորածի քույրը սովորում է մագիսրատուրայում, սակայն ոչ մի արտոնությունից չեն օգտվել:	1	1%
Անհայտ կորածի քույրը սովորում է համալսարանում վճարովի հիմունքներով	1	1%
Անհայտ կորածն է ուսանող եղել մինչ զորակոչվելը	1	1%
Ընդամենը	**104**	**100%**

Անհայտ կորածների ընտանիքների սոցիալական երաշխիքները եւ սոցիալական ապահովության վիճակը

Պատերազմական գործողություններից հետո կառավարությունն ընդունեց մի շարք որոշումներ եւ փոփոխություններ, որոնցով հնարավոր դարձավ ժամանակավոր լուծել անհայտ կորածների ընտանիքների սոցիալական աջակցության ընթացիկ խնդիրները:

Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծած պատերազմի հետևանքով գտնվելու վայրն **անհայտ (այսուհետ՝ անհայտ կորած) զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների փոխհատուցումն** իրականացվում է «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի կողմից՝ «Կամուրջ» ֆինանսավորման ծրագրի շրջանակներում:

Մինչ հիմնադրամի շահառու դառնալը պատերազմի հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին տրամադրվում է ամսական 300.000 դրամ աջակցություն՝

համաձայն ՀՀ Կառավարության *10 դեկտեմբերի 2020 թվականի* «Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետեվանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների աջակցության միջոցառումը հաստատելու մասին» *N 2001-Լ որոշմամբ*[13], որը նախատեսում էր աջակցությունը տրամադրել 6 ամսվա համար: Այնուհետեւ նշված ժամկետը փոփոխվել է եւ աջակցությունը տրամադրվել է 9 ամիս ժամկետով՝ համաձայն ՀՀ կառավարության 10 հունիսի 2021 թվականի N 973-Լ որոշման[14] եւ 12 ամիս ժամկետով՝ համաձայն ՀՀ կառավարության 11 նոյեմբերի 2021 թվականի N 1832-Լ որոշման[15]

Նման փոփոխությունները վկայում են սոցիալական աջակցության տրամադրման հայեցողական մոտեցման մասին, որը չի կարող հանդիսանալ համակարգային լուծում, քանի դեռ սահմանված չեն օրենքով որպես անհայտ կորածի ընտանիքին սոցիալական աջակցություն ապահովելու պետության պարտավորություն:

Հարցված ընտանիքների գերակշիռ մասը՝ **96%-ը,** օգտվել եւ շարունակում է օգտվել այդ աջակցությունից (տե՛ս աղյուսակ 18):

Միեւնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ սկզբնական շրջանում ընտանիքները տեղյակ չէին նման սոցիալական աջակցության մասին, որոշ դեպքերում տեղեկացված չէին աջակցությունից օգտվելու ընթացակարգերի մասին, իսկ որոշ դեպքերում խոչընդոտներ էին ունենում համապատասխան անվանացանկերում ընդգրկվելու կամ հիմնավորող փաստաթղթեր ձեռք բերելու հարցում (տե՛ս աղյուսակ 19):

Աղյուսակ 18. Անհայտ կորածի ընտանիքին տրամադրած պետական աջակցության տեսակը

Անհայտ կորածի ընտանիքին տրամադրված պետական աջակցության տեսակը	Ընտանիքների թիվը	Տոկոս
Ընտանիքը «Կամուրջ» ծրագրի շահառու է (300000 դրամ՝ 9 ամիս)	100	96%
Չեն ստացել կամուրջ ծրագրով նախատեսված՝ ամսական 300000 դրամը, քանի որ անհայտ կորածը ծնողազուրկ էր: Հիմնադրամից եղբորը հորդորել են իր անունով դիմում ներկայացնել, սակայն դրանից հետո ևս չեն օգտվել «Կամուրջ» ծրագրով նախատեսված աջակցությունից	1	1%
10 մլն դրամ՝ անհայտ բացակայող ճանաչվելու արդյունքում	1	1%
Աջակցության մասին չի նշել	1	1%
Օգտվել են հանրային պաշտպանի ծառայություններից	1	1%
Ընդամենը	**104**	**100%**

[13] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=157616
[14] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153492
[15] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157609

Աղյուսակ 19. Ցուցակ, որում ներառված է անհայտ կորածի անունը

	Թիվ	Տոկոս
Անհայտ կորածների	89	86%
Ենթադրյալ գերիների	8	8%
Զոհվածների	4	4%
Դժվարանում է պատասխանել	3	3%
Ընդամենը	104	100%

Բացի նշված աջակցությունից, որոշ ընտանիքներ նաեւ ստացել են աջակցություն այլ պետական մարմիններից, մասնավոր կառույցներից, ՏԻՄ մարմիններից, անհատներից, երբեմն նույն ընտանիքը աջակցություն է ստացել մի քանի մարմիններից: Ընտանիքները ֆինանսական, պարենային, կենցաղային ապրանքների տեսքով աջակցություն են ստացել անհատների, եկեղեցու կամ ՏԻՄ մարմինների կողմից: Որոշ դեպքերում ստացել են նաեւ հոգեբանական աջակցություն (տե՛ս աղյուսակ 20):

Աղյուսակ 20. Անհայտ կորածի ընտանիքին տրամադրված ոչ պետական աջակցության տեսակը եւ աջակցություն տրամադրող մարմինը

Ոչ պետական աջակցության տեսակը եւ աջակցություն տրամադրող մարմինը	**Մասնավոր անհատի կողմից**	**ՏԻՄ մարմինների կողմից**	**Եկեղեցի**	**Ընդամենը**
Գումար	1	27[16]	1	**29**
Սնունդ	11[17]	11		22
Գյուղատնտեսական ապրանքներ / 100 հատ հավի ճուտ		6[18]		6
Հագուստ	2	1		3
Կենցաղային պարագաներ (տակդիր երեխայի համար)		1		1
Հոգեբանական ծառայություն	1			1
Անվճար վիրահատություն		1		1
Աջակցության տեսակը չի նշվում	2	4		6
«Լիդիան Արմենիա»-ից 5 ամիս էլեկտրաեներգիայի ծախսի գումար	1			1
Ոռոգման ջրի գումար		1		1
Ընդամենը	**18**	**52**	**1**	**71[19]**

[16] 4 հոգի մի քանի ՏԻՄ մարմիններից մի քանի անգամ գումար է ստացել

[17] 1 ընտանիք ԱՄՆ-ից՝ անհատից ստանում է ամսական գումար 100 ԱՄՆ դոլարի չափով

[18] 4 ընտանիք ստացել է նաև գումար ՏԻՄ մարմիններից

[19] Որոշ դեպքերում 1 ընտանիքին տրամադրվել է տարբեր տեսակի աջակցություն տարբեր կառույցների/անհատների կողմից՝ մասնավոր կամ պետական

Նշենք, որ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծած պատերազմի հետևանքով անհայտ կորածների և նրանց ընտանիքների անդամների փոխհատուցումն իրականացվում է «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի կողմից՝ հիմնադրամի շահառու դառնալուց հետո:

Անհայտ կորած զինծառայողների ընտանիքի անդամների կողմից «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի շահառու դառնալու համար անհայտ կորածի ընտանիքի անդամը դառնում է Հիմնադրամի շահառու զինծառայողի՝ դատական կարգով անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում, ինչը դժվարություններ է առաջացնում ընտանիքների համար, քանի որ երբեմն նրանք կամ տեղեկացված չեն այդ հնարավորության մասին, կամ տեղյակ չեն ընթացակարգերից:

Հարցվող 104 ընտանիքներից միայն 49-ն են (47%) դիմել դատարան՝ իրենց հարազատին անհայտ բացակայող ճանաչելու համար, որոնցից 37%-ը անվճար փաստաբանի միջոցով, 6%-ը՝ անձամբ, 3%-ը չի մանրամասնել, 1%-ը հասարակական կազմակերպության միջոցով եւ 1%-ը դժվարացել է պատասխանել (տե՛ս աղյուսակ 21):

Աղյուսակ 21. Հարազատին անհայտ բացակայող ճանաչելու համար դատարան դիմածների թիվը

Դիմել են դատարան	Թիվ	Թիվ		Տոկոս
		Եթե այո՝ ում միջոցով և ինչպես են դիմել		
Ոչ	55			53%
Այո	49	Անվճար փաստաբանի միջոցով	38	37%
		Անձամբ	**6**	6%
		Չի մանրամասնել	3	3%
		«Կարիտաս» կազմակերպության միջոցով	**1**	1%
		Դժվարանում է պատասխանել	**1**	1%
ԸՆդամենը	**104**			**100%**

Նշենք նաեւ, որ ընտանիքների 88 %-ը տեղյակ չէ, թե ինչ պարտավորություններ ունի պետությունն իրենց առջեւ: Միայն 15 %-ն է տվել դրական պատասխան՝ մանրամասնելով այդ պարտավորությունները, մասնավորապես՝ «տեղեկությունների տրամադրում», «Ֆինանսական եւ այլ տեսակի աջակցություն, անվճար կամ արտոնյալ պայմաններով բուժօգնության տրամադրում հարազատներին», «պատերազմական հանցագործությունների ուղղությամբ քննության իրականացում եւ մեղավոր անձանց բացահայտում» եւ այլն:

Անհայտ կորած անձանց զորակոչի եւ զինվորական ծառայության վայրի փոփոխության վերաբերյալ տվյալներ

Ուսումնասիրության շրջանակում 104 անհայտ կորած անձինք, ըստ բնակության վայրի, տարբեր տարածաշրջաններից են, մասնավորապես՝ 23-ը (22%) Արարատի մարզից, 16-ը (15%) Երեւանից, 11-ը (11%) Լոռու մարզից, 5-ը (5%) Շիրակից, 1-ը (1%) ԱՀ/ԼՂ ՊԲ/ Լաչինի շրջանից, 2-ը (2%) ԱՀ/ԼՂ ՊԲ/ Շահումյանի շրջանից, 1-ը (1%) Արագածոտնի մարզից, 2-ական (2%) Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզերից, 7-ական (7%) Տավուշի եւ Վայոց Ձորի մարզերից, 4-ը (4%) Սյունիքից եւ երկուսի մասին տվյալներ չեն հայտնել:

Ըստ ծառայության տեսակի պատկերը հետեւյալն է՝

– 49 պարտադիր ժամկետային զինծառայողներ (27%),
– 18 կամավորականներ (17%),
– 16 պայմանագրային ժամկետային զինծառայողներ (16%),
– 15 պահեստազորային զինծառայողներ (14%),
– 5 սպա (5%),
– 1 ոստիկան (1%):

Ի դեպ, նշենք, որ 49 անհայտ կորածներից 10 ժամկետային զինծառայողներ զորակոչվել են 2020 թ. ամառային զորակոչի ընթացքում՝ պատերազմական գործողություններից ընդամենը մեկ-երկու ամիս առաջ:

> *«Ս-ը ընդամենը 2 ամսվա զինծառայող է եղել ու նորմալ չի տիրապետել զենքին, մարտական ծառայությանը: Հրամանատարությունը գնացել է նորակոչիկների մոտ, ասել է, որ իրենց 2 դուխով զինվոր է պետք: Ս-ն դուրս է եկել շարքից և ներկայացել: Նրան տարել են դիրքեր»:*

Աղյուսակ 22-ում ներկայացված են պարտադիր ժամկետային զինծառայողների սկզբնական ծառայության վայրի եւ արդեն ծառայության ընթացքում տեղափոխված վայրերի մասին տեղեկությունները՝ ըստ հարազատների հաղորդած տվյալների:

Աղյուսակ 22. Անհայտ կորած պարտադիր ժամկետային զինծառայողների ծառայության սկզբնական վայրը՝ մինչ պատերազմական գործողությունների սկիզբը

Անհայտ կորած ժամկետային զինծառայողների ծառայության սկզբնական վայր	Ժամկետային զինծառայողների թիվը	Առաջին զորակոչման վայրից այլ վայր չեն տեղափոխվել	Ծառայության ընթացքում այլ վայրեր տեղափոխվածներ/ թիվը	
ԱՀ/Լ Մարտունի 2	8	2	Ջրական/Ջաբրայիլ	2
			Վարանդա/ Ֆիզուլի	1
			Հադրութ	3

ՀՀ Արմավիրի մարզ	5		Հադրութ	2
			Որոտան/ Կուբաթլու	1
			Զրական/Զաբրայիլ	1
			Իվանյան/Խոջալու	1
ԱՀ/ԼՂ Մատաղիս	4		Թալիշ	4
ԱՀ/ԼՂ Հադրութ	5	4	Վարանդա/ Ֆիզուլի	1
ԱՀ/ԼՂ Զաբրայիլ	3	3		
ԱՀ/ԼՂ Ասկերան	3	3		
ՀՀ Սյունիքի մարզ	3	3	Զրական/Զաբրայիլ	
ՀՀ Վայոց Ձորի մարզ, Վայք	4	3	Նախիջևան	1
ԱՀ/ԼՂ Որոտան/ Կուբաթլու	2	2		
ԱՀ/ԼՂ Մարտունի	2	1	Վարանդա/ Ֆիզուլի	1
ՀՀ Արագածոտնի մարզ, Մուղնի	1		Զրական/Զաբրայիլ	1
ՀՀ Շիրակի մարզ	2		Վարանդա/ Ֆիզուլի	1
			Արա Լեռ	1
ԱՀ/ԼՂ Ստեփանակերտ	1		Արա լեռ	1
ԱՀ/ԼՂ Մարտունի 3	1	1		
ԱՀ/ԼՂ Իվանյան/Խոջալու	1	1		
ԱՀ/ԼՂ Թալիշ	1	1		
ՀՀ Լոռու մարզ, Վանաձոր	1		Իջևան	1
ՀՀ Տավուշի մարզ, Իջևան	1	1		
Երևան	1		Մատաղիս	1
Ընդամենը	**49**	**25**	**24**	

Ինչպես տեսնում ենք, անհայտ կորած 49 պարտադիր ժամկետային զինծառայողներից 25-ը (51%) զինծառայության ընթացքում՝ մինչ պատերազմական գործողությունները, իրենց սկզբնական զորակոչման վայրից այլ զորամաս չեն տեղափոխվել: Մասնավորապես՝

- ԱՀ/ԼՂ Մարտունի 2 զորամաս զորակոչված 8 զինծառայողներից 2-ը,
- ԱՀ/ԼՂ Հադրութի զորամաս զորակոչված 5 զինծառայողներից 4-ը,
- ԱՀ/ԼՂ Զաբրայիլ զորակոչված 3 զինծառայողները,
- ԱՀ/ԼՂ Ասկերան զորակոչված 3 զինծառայողները,
- ՀՀ Սյունիքի մարզ զորակոչված 3 զինծառայողները,
- ՀՀ Վայոց Ձորի մարզ զորակոչված 4 զինծառայողներից 3-ը,
- ԱՀ/ԼՂ Կուբաթլուի զորամաս զորակոչված 2 զինծառայողները,
- ԱՀ/ԼՂ Մարտունիի զորամաս զորակոչված 2 զինծառայողներից 1-ը,
- ԱՀ/ԼՂ Մարտունի 3 զորամաս զորակոչված 1 զինծառայողը,

- ԱՀ/ԼՂ Խոջալուի զորամաս զորակոչված 1 զինծառայողը,
- ԱՀ/ԼՂ Թալիշի զորամաս զորակոչված 1 զինծառայողը,
- ՀՀ Տավուշի մարզի (Իջևան) զորամաս զորակոչված 1 զինծառայողը:

Անհայտ կորածներից 24-ը զինծառայության ընթացքում՝ մինչ պատերազմական գործողությունները, իրենց սկզբնական զորակոչման վայրից տեղափոխվել են այլ զորամասեր: Մասնավորապես՝

- ԱՀ/ԼՂ Մարտունի 2 զորամաս զորակոչված 8 զինծառայողներից 2-ը տեղափոխվել են Ջաբրայիլ, 1-ը՝ Ֆիզուլի, 3-ը՝ Հադրութ:
- ՀՀ Արմավիրի մարզի զորամասեր զորակոչված 5 զինծառայողներից 2-ը տեղափոխվել են Հադրութ, 1-ը Կուբաթլու, 1-ը Ջաբրայիլ, 1-ը Խոջալու:
- ԱՀ/ԼՂ Մատաղիս զորակոչված 4 զինծառայողներ տեղափոխվել են Թալիշ:
- ԱՀ/ԼՂ Հադրութ զորակոչված 5 զինծառայողներից 1-ը տեղափոխվել է Ֆիզուլի:
- ՀՀ Վայոց Ձորի մարզ զորակոչված 4 զինծառայողներից 1-ը տեղափոխվել է Նախիջևան:
- ԱՀ/ԼՂ Մարտունիի զորամաս զորակոչված 2 զինծառայողներից 1-ը տեղափոխվել է Ֆիզուլի:
- ՀՀ Արագածոտնի մարզի Մուղնիի զորամաս զորակոչված 1 զինծառայող տեղափոխվել է Ջաբրայիլ:
- ՀՀ Շիրակի մարզի զորամասեր զորակոչված 2 զինծառայողներից 1-ը տեղափոխվել է Ֆիզուլի, 1-ը՝ Արալեռ:
- ԱՀ/ԼՂ Ստեփանակերտի զորամաս զորակոչված 1 զինծառայող տեղափոխվել է Արալեռ:
- ՀՀ Լոռու մարզի զորամասերից մեկը զորակոչված 1 զինծառայող տեղափոխվել է Իջևան:
- Երևանի զոորամասերից մեկը տեղափոխված 1 զինծառայող տեղափոխվել է ԱՀ/ԼՁ Մատաղիսի զորամաս:

> *«Հոկտեմբերի 23-ին պայթունից փրկված 28 զինվորի տանում են զորամաս, իսկ հոկտեմբերի 24-ին հրամանատար՝Հարութ Հարթինյանի հրամանով՝ նորից հանում դիրքեր: Մի գիշերվա մեջ, անընդհատ զինվորներին տեղից տեղ են տեղափոխել»:*

Համաձայն «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների (այսուհետ՝ շարքային կազմի պարտադիր զինծառայողներ) ծառայության վայրեր նշանակումը, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասում նշված զինծառայողների, իրականացվում է կենտրոնացված ձևով և վիճակահանությամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտ-

պանության նախարարի հրամանով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-4-րդ մասերի պահանջները:20

Ինչպես տեսնում ենք, վիճակահանությամբ ծառայության վայրեր նշանակվելուց հետո 24 զինծառայող տեղափոխվել է այլ վայր:

Հասկանալի է նաեւ, որ նույն օրենքի հոդված 27-ը սահմանում է, որ շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով ծառայության այլ վայր կարող են տեղափոխվել ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, սակայն պարզ չէ, թե ծառայողական անհրաժեշտությունը կոնկրետ ինչ հանգամանքներով է պայմանավորված, բացի այդ, տվյալ հանգամանքը հակասում է իրավական որոշակիության սկբունքին:

Աղյուսակ 23. Անհայտ կորած պարտադիր ժամկետային զինծառայողների զորակոչման 2-րդ վայրը և ռազմական գործողությունների ընթացքում տեղափոխված վայրը

Անհայտ կորած ժամկետային զինծառայողների զորակոչման 1-ին վայր	Ժամկետային զինծառայողների թիվը	Մինչ պատերազմը ծառայության այլ վայր չտեղափոխվածներ/1-ին զորակոչման վայրից միանգամից ռազմական գործողությունների վայր տեղափոխվածներ ըստ վայրերի		Անհայտ կորած ժամկետային զինծառայողների զորակոչման 2-րդ վայր	Ռազմական գործողությունների վայրեր	Այլ զինծառայության վայր տեղափոխվածների թիվը
ԱՀ/Լ Մարտունի 2	8	Ջրական/Ջաբրայիլ	1	Ջրական/Ջաբրայիլ	Ջրական/Ջաբրայիլ	2
		Վարանդա/Ֆիզուլի	1	Վարանդա/Ֆիզուլի	Վարանդա/Ֆիզուլի	1
				Հադրութ	Հադրութ	1
					Կարմիր Շուկա	1
					Վարանդա/Ֆիզուլի	1
ՀՀ Արմավիրի մարզ	5			Հադրութ	Հադրութ, Թուզարան	1
					Կարմիր շուկա	1
				Որոտան/ Կուբաթլու	Որոտան/ Կուբաթլու	1
				Ջրական/Ջաբրայիլ	Թալիշ	1
				Իվանյան/Խոջալու	Մատաղիս	1

20 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=158649

ԱՀ/ԼՂ Մատաղիս	4			Թալիշ	Թալիշ	3
					ՍԻՍ ՀՏԿ[21]	1
ԱՀ/ԼՂ Հադրութ	5	Հադրութ	3	Վարանդա/Ֆիզուլի	Վարանդա/ Ֆիզուլի	1
		Վարանդա/ Ֆիզուլի	1			
ԱՀ/ԼՂ Զր-ական/Զաբրա-յիլ	3	Զրական/ Զաբրայիլ	3			
ԱՀ/ԼՂ Ասկերան	3	Հադրութ - Արա Լեռ միջանկյալ տարածք	1			
		Զրական/ Զաբրայիլ	1			
		Արա լեռ	1			
ՀՀ Սյունիքի մարզ	3	Զրական/ Զաբրայիլ	3			
ՀՀ Վայոց Ձորի մարզ, Վայք	4	Զրական/Զա-բրայիլ	2	Նախիջևան	Զրական/ Զաբրայիլ	1
		Իշխանաձոր	1			
ԱՀ/ԼՂ Որոտան/ Կուբաթլու	2	Զաբրայիլ/ Սամվելավան	1			
		Կովսական / Զանգելան	1			
ԱՀ/ԼՂ Մարտ-ունի	2	Մարտունի 2	1	Վարանդա/Ֆիզուլի	Վարանդա/ Ֆիզուլի	1
ՀՀ Արագ-ածոտնի մարզ, Մուղնի	1			Զրական/Զաբրայիլ	Զրական/ Զաբրայիլ	1
ՀՀ Շիրակի մարզ	2			Վարանդա/Ֆիզուլի	Վարանդա/Ֆի-զուլի	1
				Արա Լեռ	Ախոզ գյուղ	1
ԱՀ/ԼՂ Ստեփան-ակերտ	1			Արա լեռ	Հորադիս	1
ԱՀ/ԼՂ Մարտունի 3	1	Մարտունի 3	1			
ԱՀ/ԼՂ Իվանյան/ Խոջալու	1	Մատաղիս	1			

[21] Հսկիչ տեխնիկական կետ

ԱՀ/ԼՂ Թալիշ	1	Թալիշ	1			
ՀՀ Լոռու մարզ, Վանաձոր	1			Իջևան	Խնձորեսկ-Իշխանաձոր	1
ՀՀ Տավուշի մարզ, Իջևան	1	Խնձորեսկ	1			
Երևան	1			Մատաղիս	Մատաղիս	1
Ընդամենը	**49**		**25**			**24**

Աղյուսակ 24-ում ներկայացված է պահեստազորայինների, սպաների, ոստիկանների, պայմանագրային զինծառայողների և կամավորականների՝ ռազմական գործողությունների մասնակցելու վայրը, որտեղ ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորել են:

Նմանապես, համաձայն «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի՝ պայմանագրային զինծառայողները ծառայության նոր վայր տեղափոխվում են ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, սակայն այստեղ եւս հարց է առաջանում, թե ծառայողական անհրաժեշտությունը պատշաճ հիմնավորումներ են ունեցել, թե ոչ:

Աղյուսակ 24. Պահեստազորայինների, սպաների, ոստիկանների, պայմանագրային զինծառայողների և կամավորականների՝ ռազմական գործողությունների մասնակցելու վայրը

Պահեստազորայինների, սպաների, ոստիկանների, պայմանագրային զինծառայողների և կամավորակ-անների՝ ռազմական գործողությունների մասնակցելու վայրը	**Պահեստազորայիններ/ զորահավաք**	**Սպա**	**Ոստիկան**	**Պայմանագրային**	**Կամավորական**	**Ընդամենը**	**Տոկոս**
Զրական/Զաբրայիլ	4	3		6	7	20	36%
Կովսական /Զանգելան	6			4	5	15	27%
Արցախ, Հադրութից դեպի Կարմիր շուկա ճանապարհ				3		3	5%
Հադրութ				1	2	3	5%
Ֆիզուլի՝ Վարանդա	2				1	3	5%
Մարտունի	1	1				2	4%
Որոտան/ Կուբաթլու					2	2	4%
Այգեհովիտ	1					1	2%
Իշխանաձոր				1		1	2%
Մատաղիս		1				1	2%

Հորադիսից Ջաբրայիլ՝ Ջրական ընկած հատված, Արաքսավան /քանդված շենքեր/				1		1	2%
Հորադիս					1	1	2%
Տիգրանավան	1					1	2%
Ստեփանակերտ			1			1	2%
Ընդամենը	**15**	**5**	**1**	**16**	**18**	**55**	**100%**

Ստորեւ աղյուսակ 25-ում ներկայացված է, ըստ հարազատների հայտնած տվյալների, անձանց անհայտ կորչելու վայրը:

Աղյուսակ 25. Անհայտ կորածների անհայտ կորչելու վայրը

Անհայտ կորչելու բնակավայրը	**Անձացն թիվը**	**Տոկոս**
Ջրական (Ջաբրայիլ)	34	33%
Կովսական (Ջանգելան)	16	15%
Վարանդա (Ֆիզուլի)	10	10%
Հադրութ	8	8%
Մատաղիս	5	5%
Մարտունի	5	5%
Կարմիր շուկա	2	2%
Որոտան/ Կուբաթլու	2	2%
Հորադիս	2	2%
Թալիշ	4	4%
Քաշաթաղ (Այգեհովիտ, Սամվելավան)	2	2%
Գորիս	1	1%
Թուզարան	1	1%
Խնձորեսկ-Իշխանաձոր հատված	1	1%
Հորադիսից Ջաբրայիլ (Ջրական) ընկած հատված, Արաքսավան	1	1%
Հադրութ - Արա Լեռ միջանկյալ տարածք	1	1%
Ստեփանակերտ	1	1%
Արա լեռ	1	1%
Իշխանաձոր	1	1%
Հադրութից - Կարմիր շուկա միջանկյալ տարածք	3	3%
Արցախ, ՍԻՍ ՀՏԿ	1	1%
Խնձորեսկ	1	1%
Տիգրանավան	1	1%
Ընդամենը	**104**	**100%**

Նշենք, որ անհայտ կորած անձանցից 40-ը (39%-ը) պատերազմական գործողություններին մասնակցել է 2020 թ. սեպտեմբերի 27-30-ն ընկած ժամանակահատվածում, իսկ 64-ը՝ (62%) 2020 հոկտեմբերից 1-ից մինչեւ պատերազմական գործողությունների ավարտը (տե՛ս աղյուսակ 26):

Սեպտեմբերի 27-ից պատերազմական գործողություններին մասնակցած անձանցից

- 28-ը պարտադիր ժամկետային զինծառայողներ են (որից 1-ը՝ «Ես եմ» ծրագրով ծառայություն անցնող ժամկետային զինծառայող),
- 7-ը՝ կամավորական,
- 3-ը՝ սպա
- 2-ը՝ պայմանագրային զինծառայողներ,
-

Հոկտեմբերից պատերազմական գործողություններին մասնակցած անձանցից

- 21-ը՝ պարտադիր ժամկետային զինծառայողներ են (որից 1-ը՝ «Ես եմ» ծրագրով ծառայություն անցնող ժամկետային զինծառայող),
- 15-ը՝ պահեստազորային,
- 14-ը՝ պայմանագրային,
- 11-ը՝ կամավորական,
- 2-ը՝ սպա,
- 1-ը՝ ոստիկան:

Ինչպես տեսնում ենք, անհայտ կորածների գերակշիռ մասը (33%), ըստ հարազատների ունեցած վերջին տվյալների, անհայտ կորել է Ջրականում, 15%-ը Ջանգելանում (Կովսական), 10%-ը Վարանդայում, 8%-ը Հադրութում, ինչը վկայում է պատերազմական գործողությունների թեժ կետերի մասին, որի վերաբերյալ հիմնավորված տեղեկություններ ունենալու համար առաջանում է մարտական գործողությունների վարման, ղեկավարման, ինչպես նաեւ անհայտ կորածների անհայտ կորչելու հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրության, քննության անհարաժեշտության հարցը:

> *«Մեր տեղեկություններով՝ մի քանի զինծառայողներ գնացել են Թալիշ՝ առաջադրանքի: Նրանց հետ է եղել նաև գնդապետ Սևակ Աբրահամյանի կապավորը (ով միշտ պետք է հրամանատարի հետ լիներ): Նա ասեց, որ Գ-ը մահացած էր, նրան իջացրել է ու մյուսներին օգնել: Հարցրեցինք, թե ո՞ւր է մարմինը, պատասխանեց, որ ադրբեջանցիներն են վերցրել, որ հետո փոխանակեն: Նա չի ասում, թե որտեղ են խմբի մյուս զինվորները: Դիմել ենք Քննչական կոմիտե, որպեսզի կապավորին հարցաքննեն, բայց դեռ չեն հարցաքննել: Իսկ Գ-ի անմիջական հրամանատարը մեզ ասեց, որ ինքն անձամբ է փակել Գ-ի աչքերը, այսինքն՝ հստակ տեսել է, որ զոհված է եղել: Սակայն, օրեր անց, կեսգիշերից հետո զանգել է և ասել, որ սնարյադ է ընկել ու ինքը չի տեսել Գ-ին: Մատաղիսի զորմասի բուժքույրը, ով*

ճանաչել է Գ-ին, մեզ տեղեկացրեց, որ նա հիվանդանոցում է, ոչ թե զոհված և հենց հարմար պահ լինի, ինքն անձամբ հեռախոսը կփոխանցի Գ-ին, որպեսզի զանգի ընտանիքին: Հետո բուժքույրը խուսափողական պատասխաններ տվեց: Վերջերս էլ պարզեցինք, որ բուժքույրը աշխատանքից ազատվել կամ հեռացվել է: Մեզ հասած տվյալները հակասում են իրար»:

Աղյուսակ 26. Պատերազմական գործողություններին անհայտ կորած անձի մասնակցության ժամանակահատվածը

Ժամանակահատված	**Թիվ**	**Տոկոս**
2020 թ. սեպտեմբերի 27 - 30-ն ընկած ժամանակահատված	40	39%
2020 հոկտեմբերից մինչև 2020թ նոյեմբերի 9-ը	64	62%
Ընդամենը	**104**	

Հարկ ենք համարում անդրադառնալու նաեւ պատերազմական գործողություններին մասնակցության ժամկետներին ըստ օրերի, որը ներկայացվում է ստորեւ գծապատկերում.

1. *«Որդուս ծառայակիցներից մեկը հայտնել է, որ հոկտեմբերի 30-ին տեսել է նրան: Ես պատերազմական գործողություններից ավարտից հետո մեկնել եմ Արցախ՝ խոսել սպաներից մեկի հետ. ասել է դեպքը տեղի է ունեցել հոկտեմբերի 26-ին, բայց ես ասեցի, որ որդուս հետ հոկտեմբերի 28-ին եմ խոսել: Ասաց՝ ուրեմն 28-ին է եղել դեպքը: Ասեցի, որ Ա-ին հոկտեմբերի 30-ին էլ տեսնող է եղել: Ոչինչ չպատասխանեց: Հետո զորամասի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալի հետ խոսեցի, հարցրեցի՝ զեկուցագիր կա՞ այն մասին, որ զինծառայող է կորել, ինչից հետո նոր զեկաուցագիր են կազմել այդ մասին: Նաև հարցրեցի՝ որ դիրքեր եք ուղարկել՝ սաղավարտ, զրահաբաճկոն եղե՞լ է հագին: Ասեց, եթե մեր մոտ չկա, ուրեմն եղել է»:*
2. *«Հոկտմեբերի 18-ին Իջևանից Արցախ տեղափոխվելիս՝ Հ-ը Խնձորեսկից զանգեց ու ասեց, որ իրենց որպես կենդանի թիրախ են տանում: Մեր տվյալներով՝ Իջևանի պահեստազորը հրաժարվել է գնալ, դրա համար ժամկերտայիններին են տարել: Հ-ն կամավոր է մեկնել: Հոկտեմբերի 19-ին որդուս հետ չկարողացա կապ հաստատել, զանգեցի վաշտի հրամանատարին, ով ասեց, որ տղաների հետ ամեն ինչ կարգին է, փոխանցեց զորմասաի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալի հեռախոսահամարը, ով զինծառայողների հետ էր, սակայն նրա հետ կապ հաստատել չհաջողվեց: Երկու օր անց ծառայակիցներից մեկը՝ հայտնեց, որ դեպքից առաջ ինքը դիրքից իջել է՝ բահ բերելու, այդ պահին հրետակոծություն է սկսվել: Հրետակոծությունից հետո բարձրացել է՝ տղաները պառկած են եղել (զոհված), շարժել է, տեսել, որ ողջ չեն ու փախել: Նրա պատմելով Հ-ի վրա հետքեր չեն եղել: Մի քանի օր անց ադրբեջանական կողմը տեսնայութ հրապարակեց տվյալ տարածքից, որտեղ երևացին*

տղաների մարմինները, բայց Հ-ը այնտեղ չի եղել: Դասակից 6 հոգի անհայտ կորած են: Կապ հաստատեցինք զորմասաի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ Նվեր Մանգասարյանի հետ, ով ասեց, որ տղաները զոհվել են ու ինքը քանակով դի է դուրս բերել այդ տարածքից, այսինքն՝ քանի հոգու տարել է, նույնքան դի է դուրս բերել: Իսկ երբ գնացինք անձամբ իր՝ Մանգասարյանի մոտ, հերքեց, որ նման բան է ասել»:

Գծապատկեր 1. Պատերազմական գործողություններին անհայտ կորած անձի մասնակցության սկիզբը՝ ըստ ծառայության տեսակների եւ ըստ օրերի



Գծապատկերից կարող ենք տեսնել, որ անհայտ կորած 49 պարտադիր ժամկետային զինծառայողների

- մեծ մասը՝ 27-ը (26 %) պատերազմական գործողություններին սկսել է մասնակցել պատերազմական գործողությունների հենց առաջին օրվանից՝ սեպտեմբերի 27-ից,
- 3-ական (3 %) զինծառայողներ՝ հոկտեմբերի 3-ից, 9-ից, 14-ից,
- 2-ական (2 %) զինծառայողներ հոկտեմբերի 4-ից և 12-ից,
- 1-ական (1%) զինծառայողներ սեպտեմբերի 28-ից, հոկտեմբերի 1-ից, 2-ից, 7-ից, 8-ից, 11-ից, 17-ից, 18-ից և 31-ից:

Անհայտ կորած պայմանագրային 16 զինծառայողների

- մեծ մասը՝ 7-ը՝ (7 %) պատերազմական գործողությունների վայր է տեղափոխվել պատերազմի 12-րդ օրը՝ հոկտեմբերի 9-ին,
- 4-ը (4%)՝ հոկտեմբերի 21-ին, 2-ը (2%)՝ սեպտեմբերի 27-ին,
- 1-ական (1 %) պայմանագրային զինծառայող՝ հոկտեմբերի 15-ին, 16-ին և 17-ին:

15 պահեստազորայիններից

- 6-ը (6%) պատերազմական գործողությունների սկսել է մասնակցել հոկտեմբերի 21-ին,
- 2-ական (2%) զինծառայող հոկտեմբերի 17-ին և 18-ին,
- 1-ական (1%) զինծառայողներ հոկտեմբերի 5-ին, 8-ին, 15-ին, 24-ին, 26-ին:

5 սպաներից

- 3-ը (3 %) պատերազմական գործողությունների սկսել է մասնակցել հենց առաջին օրվանից՝ սեպտեմբերի 27-ից,
- 1-ական (1 %) զինծառայողներ՝ հոկտեմբերի 9-ից և 20-ից:

18 կամավորականներից

- 3-ը (3 %) մեկնել են ռազմական գործողությունների մասնակցելու հոկտեմբերի 21-ին,
- 2-ական (2 %) կամավորականներ՝ սեպտեմբերի 28-ին, 29-ին և 30-ին, հոկտեմբերի 27-ին,
- 1-ական (1 %) կամավորականներ՝ սեպտեմբերի 27-ին, հոկտեմբերի 1-ին, 4-ին, 14-ին, 20-ին, 24-ին, 26-ին:

1 ոստիկանը (1 %) ռազմական գործոգությունների վայր է տեղափոխվել հոկտեմբերի 3-ին:

Ներկայացնում ենք նաեւ անհայտ կորած անձանց կողմից հարազատների հետ վերջին անգամ կապ հաստատելու ժամանակահատվածը ստորեւ գծապատկերում.

Գծապատկեր 2. Անհայտ կորածների՝ հարազատների հետ կապի դուրս գալու վերջին ամսաթիվը



Գծապատկերից երևում է, որ անհայտ կորած 49 պարտադիր ժամկետային զինծառայողներից

- 7-ը (7%) հարազատների հետ վերջին անգամ խոսել է մինչ պատերազմական գործողություններր սկիզբը՝ սեպտեմբերի 26-ին,
- 4-ական (4%) զինծառայողներ՝ հոկտեմբերի 1-ին, 7-ին և 9-ին,
- 3-ական (3%) զինծառայողներ՝ սեպտեմբերի 27-ին և 14-ին,
- 2-ական զինծառայողներ (2 %) հոկտեմբերի 4-ին, 8-ին, 17-ին, 18-ին, 24-ին, 31-ին,
- 2 անհայտ կորած զինծառայողների հարազատներ չեն հիշում վերջին անգամ իրենց հարազատի հետ հեռախոսազրույցի ամսաթիվը,
- 1-ական (1%) զինծառայողներ վերջին անգամ ընտանիքի անդամներին են զանգահարել սեպտեմբերի 28-ին, 30-ին, հոկտեմբերի 2-ին, 3-ին, 11-ին, 12-ին, 15-ին, 16-ին, 22-ին, 28-ին:

Անհայտ կորած 16 պայմանագրային զինծառայողներից

- 4-ը (4 %) հարազատների հետ վերջին անգամ խոսել է հոկտեմբերի 9-ին,
- 3-ը (3 %)՝ հոկտեմբերի 20-ին,
- 2-ական (2%) զինծառայողներ՝ հոկտեմբերի 10-ին և 17-ին,
- 1-ական (1 %) զինծառայողներ՝ հոկտեմբերի 11-ին, 15-ին, 18-ին, 21-ին, 22-ին:

Անհայտ կորած 15 պահեստազորային զինծառայողներից

- 5-ը (5 %) հարազատների հետ վերջին անգամ խոսել է հոկտեմբերի 20-ին,
- 2-ական (2%) զինծառայողներ՝ հոկտեմբերի 9-ին և 17-ին,
- 1-ական (1 %) զինծառայողներ՝ հոկտեմբերի 13-ին, 18-ին, 21-ին և 24-ին:

Անհայտ կորած 5 սպաներից

- 1-ական հոգի (1%) հարազատների հետ վերջին անգամ խոսել է սեպտեմբերի 26-ին, հոկտեմբերի 11-ին, 12-ին, 20-ին և 25-ին:

Անհայտ կորած 18 կամավորականներից

- 3-ական (3%) հարազատների հետ վերջին անգամ խոսել է հոկտեմբերի 2-ին, 17-ին, 20-ին,
- 1-ական (1%) կամավորականներ՝ սեպտեմբերի 28-ին, հոկտեմբերի 5-ին, 7-ին, 10-ին, 13-ին, 15-ին, 21, 24-ին, 26-ին:

Անհայտ կորած 1 ոստիկանը հարազատների հետ վերջին անգամ խոսել է հոկտեմբերի 3-ին:

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ տվյալներից, ժամկետային զինծառայողների եւ սպաների գերակշիռ մասը պատերազմական գործողություններում ներգրավվել է հենց առաջին օրը՝ սեպտեմբերի 27-ին, եւ նրանցից շատերը վերջին անգամ հարազատների հետ կապ ունեցել են պատերազմական գործողությունների նախօրեին, որից հետո այլեւս կապի չեն դուրս եկել: Սպաներից միայն մեկն է, որը վերջին անգամ կապ է հաստատել պատերազմական գործողությունների նախօրեին, մյուսները, այնուամենայնիվ, կարողացել կապ հաստատել հոկտեմբեր ամսվա ընթացքում եւս:

Ամփոփելով ըստ օրերի անհայտ կորչելու տվյալները եւ հաշվի առնելով անհայտ կորած անձանց հետ հարազատների ունեցած վերջին հաղորդակցումը՝ կարող ենք եզրահանգել, որ անհայտ կորած անձինք առավել հաճախ անհետացել են 2020 թ-ի հոկտեմբերի 9-ին, հոկտեմբերի 17-ին, հոկտեմբերի 20-ին, եւ պատերազմի առաջին օրը:

Անհայտ կորած անձանց նույնականացման և դրա վերաբերյալ նրանց հարազատներին տեղեկությունների տրամադրման գործընթացի վիճակի նկարագրությունը

Անհայտ կորած անձանց հնարավոր մահվան փաստը բացահայտելու համար նույնականացման նպատակով ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կետրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են ԴՆԹ նմուշառումներ ընտանիքի անդամներից:

Ըստ լրատվամիջոցներին տված հարցազրույցի՝ ՀՀ առողջապահության նախարարութ-

յունը հայտնել է, որ 2021 թ. մայիսի 5–ի դրությամբ դատաբժշկական փորձաքննության է ենթարկվել պատերազմի զոհերի 3752 մարմին և մասունք, որոնցից 70 փորձանմուշ գտնվում է փորձաքննության ընթացքում: Մինչև մայիսի 4-ը կատարվել է զոհերի դիակի և մասունքի 2875 փորձաքնմուշների դատագենետիկական փորձաքննություն, որոնցից 2580 փորձանմուշ նույնականացվել է[22]:

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկության՝ 2021 թ-ի հունիսի 1-ի դրությամբ կատարվել է 3756 դիակի և մասունքի դատաբժշկական փորձաքննություն:

ՀՀ քննչական կոմիտեն նաև հայտնել է, որ 2021 թ-ի օգոստոսի 16-ին 53 բարդ փորձանմուշ դատագենետիկական փորձաքննություն կատարելու նպատակով ուղարկվել է Նիդերլանդներ, որոնց պատասխանները ստացել են:

Ըստ այդմ՝ 53 փորձանմուշներից 44-ը նույնականացվել է նախկինում արդեն նույնականացված մարմիններին, 5 փորձանմուշ որևէ ծնողի ԴՆԹ նմուշի հետ չի նույնականացվել, 2 փորձանմուշով նույնականացվել է մեկ նոր անձ, 2 փորձանմուշով ԴՆԹ պրոֆիլ հնարավոր չէ ստանալ:

Բացի այդ՝ 2021 թ. նոյեմբերին ևս 47 բարդ փորձանմուշ դատագենետիկական փորձաքննություն կատարելու նպատակով ուղարկվել է Նիդերլանդներ, որոնց պատասխանները դեռևս չեն ստացվել 2021 թ-ի դեկտեմբերի 24-ի դրությամբ:

Կազմակերպության կողմից հարցված 104 ընտանիքներից նմուշառում վերցվել է 99 (95%) անհայտ կորածների հարազատներից: Կրկնակի նմուշառում վերցվել է 43 (43%) ընտանիքից: Կրկնակի նմուշառման դեպքում 43 ընտանիքից 2-ը (5%) նմուշառումը իրականացրել են արտերկրում:

Աղյուսակ 27. Անհայտ կորածներից թիվը, ում հարազատներից իրականացվել է ԴՆԹ նմուշառում

Իրականացվել է արդյոք ԴՆԹ նմուշառում	ԴՆԹ իրականացրած ընտանիքների թիվը	Տոկոս	Որտեղ է իրականացվել ԴՆԹ նմուշառումը		Կրկնակի ԴՆԹ նմուշառում իրականացվել է/ որտեղ		Կրկնակի ԴՆԹ նմուշառում չի իրականացվել
			ՀՀ	Արտերկիր	ՀՀ	Արտերկիր	
Այո	99	95%	99	0	41	2	56
Ոչ	5	5%					
Ընդամենը	**104**	**100**	**99**	**0**	**41**	**2**	**56**

Մյուս 5 անձանց դեպքում հարազատների հրաժարվել են նմուշառումից: Մեկ դեպքում նմուշ չհանձնելու պատճառը եղել է կասկածը, որ իրենց հարազատը գտնվում է գերության մեջ: Երկու դեպքում ընտանիքները հայտնել են, որ ադրբեջանական կողմի տարածած

[22] https://news.am/arm/news/644135.html

տեսանյութում նմանեցրել են անձին իրենց հարազատին, իսկ երկու դեպքում ուղղակի չեն ցանկացել նմուշառում կատարել:

Աղյուսակ 28. Անհայտ կորած անձանց հարազատներից ԴՆԹ նմուշառում չիրականացնելու պատճառը

Պատճառը	Ընտանիքների թիվը	Տոկոս
Գերիների տեսանյութեր են տեսել համացանցում, որտեղ անձանցից մեկին նմանեցրել են անհայտ կորած իրենց հարազատին	2	40%
Մտածում են գերի է	1	20%
Չեն ուզում	2	40%
Ընդամենը	**5**	**100%**

Հատկանշական է, որ ընտանիքներն առաջին նմուշառման նույնականացումը հաստատող կամ հերքող արդյունքների վերաբերյալ տեղեկությունները ստացել են նվազագույնը մեկ ամիս անց, առավելագույնը 11 ամիս անց, որոշ դեպքերում նույնիսկ ընտանիքները չեն հիշում, թե երբ են իրենց տեղեկացրել նույնականացման արդյունքների մասին:

Նույնականացման գործընթացի հետ կապված բազմաթիվ են ընտանիքների մտահոգությունները: Կազմակերպությունը ահանգանգեր է ստացել այն մասին, որ ամիսներ շարունակ ԴՆԹ նմուշների համընկնում չի գրանցվել, սակայն հենց որ ընտանիքներն սկսել են ներգրավվել սոցիալական աջակցության ծրագրերից օգտվելու համար դատարան դիմելու գործընթացում, իրենց մի քանի օր անց տեղեկացրել են, որ ունեն համընկնում, ինչը կասկածի տեղիք է տվել հարազատների մոտ եւ վերջիններս դադարեցրել են այդ գործընթացին իրենց մասնակցությունը՝ մտավախություն ունենալով, որ պետությունը կդադարեցնի իրենց հարազատի որոնողական աշխատանքները:

> *«Երբ ԴՆԹ-ի հետ համապատասխանություն եղավ, սակայն մենք չընդունեցինք, քանի որ ակնհայտ անհամապատասխանություն կար մեր տղայի և մեզ ցույց տված աճյունի միջև, մեք հրաժարվեցինք դա ընդունել, ոմն Մարության ասեց հիմա դիակը տարեք թաղեք, 2 օրից կհանեք կասեք մերը չի: Եվ մարզպետարանից, և՛ զինկոմիսարիատից ասում են վերցրեք դին տարեք, գոնե աջակցությունից կօգտվեք: Բայց մեզ իրենց աջակցությունը պետք չի, մեզ մեր տղան է պետք: Դիմել ենք Կառավարությանը, վարչապետին, որ ԴՆԹ-ն ուղարկենք արտերկիր, բայց ասեցին, որ պատասխանը 6 ամսից է լինելու: Այն մարմինը, որ մեզ առաջարկել են իբրև մեր տղայի մարմին, մեր հարակից գյուղում Ազատամուտում դեռևս փետրվարին հուղարկավորվել է մեկ ուրիշ ընտանիքի կողմից:*

Աղյուսակ 29. Անհայտ կորած անձանց հարազատներից առաջին անգամ ԴՆԹ նմուշառում իրականացնելուց և պատասխանի տրամադրման միջև ընկած ժամանակահատվածը

Համընկնում եղել է		**Տոկոս**	**Համընկնում չի եղել**		**Տոկոս**	**Դժվարանում է պատասխանել/ չգիտի**	**Տոկոս**	**Ընդամենը**
2 ամիս անց	5	5%	1 ամիս անց համընկնում չկա	3	3%			
4 ամիս անց	5	5%	2 ամիս անց համընկնում չկա	1	1%			
6 ամիս անց	4	4%	3 ամիս անց համընկնում չկա	1	1%			
9 ամիս անց	5	5%	7 ամիս անց համընկնում չկա	1	1%			
3 ամիս անց	2	2%	8 ամիս անց համընկնում չկա	12	12%			
7 ամիս անց	2	2%	9 ամիս անց համընկնում չկա	23	23%			
8 ամիս անց	1	1%	10 ամիս անց համընկնում չկա	11	11%			
Չի հիշում	3	3%	11 ամիս անց համընկնում չկա	12	12%			
Ընդամենը	**27**	**27%**	**64**		**65%**	**8**	**8%**	**99**

Ուշագրավ է, որ նույնականացումը հաստատող արդյունքների մասին ընտանիքները տեղեկություններ ստանում են տարբեր մարմիններից (տե՛ս աղյուսակ 33): Այսինքն՝ գոյություն չունի միասնական մոտեցում այս հարցին, ինչը հարազատների համար առաջացնում է մեծ անկանխատեսելիություն և անվստահություն այս գործընթացի նկատմամբ: Միևնույն ժամանակ, ընտանիքների համար հստակ չէ, թե որ կառույցին կարելի է դիմել տեղեկություն ստանալու համար: Հիմնականում այդ տեղեկություն հայտնողը թե առաջին նույնականացման, եւ թե կրկնակի նույնականացման դեպքում եղել է Դատաբժշկական գիտագործնական կենտրոնը, սակայն եղել են դեպքեր, երբ ընտանիքներն են դիմել եւ միայն դիմելուց հետո են տեղեկացել, որ նմուշների համընկնում է տեղի ունեցել:

Աղյուսակ 30. ԴՆԹ հետազոտության արդյունքների մասին հայտնած կառույցը /առաջին անգամ/

	Թիվ	Տոկոս
Դատաբժշկական գիտագործնական կենտրոն[23]	18	66%
Չեն հիշում	4	15%
Քննիչ	3	11%
Ռազմական բժիշկ	1	4%
Ընտանիքն իր միջոցներով է իմացել	1	4%
Ընդամենը	**27**	**100%**

[23] 1 դեպքում Դատաբժշկից գրավոր պատասխան են խնդրել, պատասխանել է «Դուք շատ եք հասկանում էդ թղթից, որ տամ»

Ի տարբերություն առաջին նմուշառման գործընթացի, կրկնակի նմուշառման դեպքում որոշ անձանց նույնականացումը կատարվել է ավելի շուտ՝ երեք օրից մինչեւ մեկ ամսվա ընթացքում, չնայած գերակշիռ մասը վերստին ամիսներ է տեւել (տե՛ս աղյուսակ 31): Նմանատիպ խնդիրները ընտանիքների մոտ կասկածներ եւ անվստահություն է առաջացրել:

Աղյուսակ 31. Անհայտ կորած անձանց հարազատներից կրկնակի ԴՆԹ նմուշառում իրականացումից և պատասխանի տրամադրման միջև ընկած ժամանակահատվածը

			Կրկնակի ԴՆԹ նմուշառման պատասխանի ժամկետը					
Համընկնում եղել է		**Տոկոս**	**Համընկնում չի եղել**		**Տոկոս**	**Դժվարանում է պատասխանել/ չգիտի**	**Տոկոս**	**Ընդ.**
Նույն ամսին է հաստատվել	2		1 ամիս անց համընկնում չկա	3				
3 օր անց	1		2 ամիս անց համընկնում չկա	2				
15 օր անց	1		4 ամիս անց համընկնում չկա	3				
1 ամիս անց	3		5 ամիս անց համընկնում չկա	2				
2 ամիս անց	3		6 ամիս անց համընկնում չկա	5				
3 ամիս անց	1		7 ամիս անց համընկնում չկա	2				
4 ամիս անց	1		8 ամիս անց համընկնում չկա	2				
5 ամիս անց	1		9 ամիս անց համընկնում չկա	1				
			10 ամիս անց համընկնում չկա	2				
			11 ամիս անց համընկնում չկա	1				
Ընդամենը	**13**	**30%**	**23**		**53%**	**7**	**16%**	**43**

Աղյուսակ 32. ԴՆԹ հետազոտության արդյունքների մասին հայտնող մարմինը /երկրորդ անգամ/

	Թիվ	Տոկոս
Դատաբժշկական գիտագործնական կենտրոն	7	54%
Դատաբժշկական գիտագործնական կենտրոն և քննիչ	1	8%
Չեն հիշում	2	15%
Քննիչ	1	8%
Ռազմական բժիշկ	1	8%
Ընտանիքն իր միջոցներով է իմացել	1	8%
Ընդամենը	**13**	**100%**

Նմուշները հիմնականում՝ 36%-ի դեպքում վերցվել են միաժամանակ եւ հորից եւ մորից, 24%-ի դեպքում միայն մորից, 17%-ի դեպքում միայն հորից, մյուս դեպքերում ծնողներից և զավակներից կամ հարազատ եղբորից (տե՛ս աղյուսակ 33):

Անդրադառնալով միայն մեկ հարազատից վերցված նմուշառումների թվին, նշենք, որ կա նման 47 (46%) դեպք: Մասնավորապես՝ 25 դեպքում ԴՆԹ նմուշառում է կատարվել անհայտ կորածի միայն մորից, 18 դեպքում միայն հորից, 3 դեպքում միայն որդուց, 1 դեպքում միայն եղբորից:

Ընդ որում, միայն հորից կատարված նմուշառման 18 դեպքերից (17 %) 2 դեպքում է (2 %), որ անհայտ կորած անձանց հարազատները չեն նշել այլ հարազատներ, ում հետ բնակվում են և ումից հնարավոր կլիներ ԴՆԹ նմուշառում կատարել: Այսպես, նրանցից մեկը բնակվել է միայն հոր հետ, իսկ 1-ը՝ կնոջ ու անչափահաս երեխայի հետ, և հայտնի չէ, թե արդյոք վերջինս ունեցել է այլ արյունակից հարազատներ, թե ոչ:

Միայն մորից ԴՆԹ նմուշառման իրականացման 25 դեպքերից (24 %) 4 դեպքում (4 %) անհայտ կորած անձինք բնակվել են մոր, կնոջ և անփափահաս երեխայի հետ, 1 դեպքում միայն մոր, 1 դեպքում մոր, մահացած եղբոր կնոջ և անչափահաս երեխաների հետ:

Անհայտ կորածի միայն երեխայից (որդուց) ԴՆԹ նմուշառման իրականացման 3 (3%) դեպքերում էլ ընտանիքում բնակվել են այլ անձինք, ումից ևս հնարավոր էր եղել վերցնել նմուշառումը, մասնավորապես՝ 1 դեպքում ընտանիքում բնակվել են նաև անհայտ կորածի հայրը, մայրը, անչափահաս երեխան (և կինը), 1 դեպքում՝ մայրը, անչափահաս երեխան (և կինը), 1 դեպքում մյուս չափահաս երեխան (և կինը):

Միայն եղբորից ԴՆԹ նմուշառման իրականացման 1 դեպքում (1 %) անհայտ կորածի ընտանիքում բնակվել են նաև արյունակից այլ հարազատներ՝ տատիկ, պապիկ, մորեղբայր:

Աղյուսակ 33. Անհայտ կորածի հարազատը, ումից կատարվել է ԴՆԹ նմուշառում

Հարազատ, ումից է վերցվել ԴՆԹ նմուշառումը	Թիվ	Տոկոս
Հայր և մայր	37	36%
Մայր	25	24%
Հայր	18	17%
Մայր և եղբայր	5	5%
Որդի	3	3%
Մայր և որդի	3	3%
Հայր, մայր, եղբայր	2	2%
Հայր և եղբայր	1	1%
Հայր և որդի	1	1%
Մայր և դուստր	1	1%
Հայր, մայր, եղբայր, որդի	1	1%
Որդի և դուստր	1	1%
Եղբայր	1	1%
ԴՆԹ նմուշառում չի իրականացվել	5	5%
Ընդամենը	**104**	**100%**

Մտահոգիչ է այն փաստը, որ նմուշառման, ԴՆԹ հետազոտման նպատակը ընտանիքներին պատշաճ կերպով չի բացատրվել: Մոտ 84%-ի դեպքում ընտանիքներին ընդհանրապես չի բացատրվել ԴՆԹ հետազոտության նպատակը, միայն 12%-ին հայտնել են, որ ԴՆԹ հետազոտությունն իրականացվում է կասկածելի մասունքի հետ նույնականացումը պարզելու նպատակով կամ ուղղակի ընդհանուր պարզաբանում է ներկայացվել (տե՛ս աղյուսակ 34):

Աղյուսակ 34. Անհայտ կորածների ընտանիքների թիվը, ում բացատրվել են ԴՆԹ նմուշառման իրականացնելու հիմքերը

Բացատրվել են արդյոք ԴՆԹ նմուշառման իրականացնելու հիմքերը		**Տոկոս**	**Ինչպես է բացատրվել ԴՆԹ հետազոտություն իրականացնելու հիմքերը**	
Այո	12	11%	Կասկածելի մասունքի հետ նույնացումը պարզելու նպատակով	9
			Հնարավոր մահվան դեպքում նույնականացնելու համար	2
			Ընդհանուր ԴՆԹ իրականացման նպատակներն են ներկայացվել	1
Ոչ	87	84%		
ԴՆԹ չի իրականացվել	5	5%		
Ընդամենը	**104**	**100%**		

Հաստատված նույնականացումներ ունեցող բոլոր 27 ընտանիքներն առաջարկվել է ընդունել իրենց հարազատի մարմինը կամ մասունքները:

Աղյուսակ 35. Անհայտ կորածների ընտանիքների թիվը, ում առաջարկվել են հարազատներին մարմինը կամ մարմնի մասունքները

Առաջարկվել է արդյոք հարազատներին մարմինը կամ մարմնի մասունքները	**Ընտանիքների թիվը**	**Տոկոս**
Այո	27	26%
Ոչ /համընկնում չի եղել/	72	69%
Նմուշառումից հրաժարվել են	5	5%
Ընդամենը	**104**	**100 %**

Հատկանշական է, որ ընտանիքներից 22-ը (81 %), ում առաջարկվել է հարազատի մարմինը կամ մասունքները, նկատել են իրենց հարազատի եւ իրենց հանձնված մարմնի կամ մասունքների միջեւ կառուցվածքային տարբերություններ (տե՛ս աղյուսակ 36):

Աղյուսակ 36. Անհայտ կորածների ընտանիքների թիվը, որոնք տեսանելի անհամապատասխանություն են նկատել անհայտ կորած անձի և իրենց ներկայացված անձի մասունքների կառուցվածքների միջև

Արդյոք հարազատները նկատել են տեսանելի անհամապատասխանություն անհայտ կորած անձի և որպես այդպիսին իրենց ներկայացված անձի մասունքների կառուցվածքների միջև	Ընտանիքների թիվը	Տոկոս
Այո	22	81%
Հարցին չի պատասխանել	5	19%
Ընդամենը	**27**	**100%**

1. *«Նոյեմբերի 23-ին ամուսնուցս ԴՆԹ նմուշառում է վերցվել: Որոշ ժամանակ անց համացանցում գերիների նկարների մեջ տեսել ենք Ա-ին նման մի զինծառայողի, ինչի կապակցությամբ դիմել ենք քննչական մարմիններին: Դիմելու հաջորդ օրը՝ 4 ամիս անց 2021 թ. մարտին տեղեկացրին, որ ԴՆԹ համընկնում է եղել: Սակայն վստահ չենք, որ մասունքը իրենն է, քանի որ ծնոտը չէր համապատասխանում իր ծնոտի կառուցվածքին: ԴՆԹ-ի հաստատվելու նույն օրը ինձնից (մորից) ևս ԴՆԹ նմուշառում է կատարվել, որի հետ համընկնում մինչ այժմ չկա: Ինձնից վերցված ԴՆԹ նմուշի վրա նշվել է ամուսնուս անունը: Հարցրեցի՝ ինչու, ասացին իբր՝ ստուգելու համար, թե արդյոք ամուսիններ ենք, թե ոչ:*
2. *«ԴՆԹ-ն հաստատվելուց հետո զանգեցին ինձ (հորը), հայտնեցին համընկնման մասին և ասեցին, որ կարող են իրենք մարմինը բերել: Սակայն մենք հրաժարվեցինք, քանի որ ուզում էիք անձամբ գնալ, ճանաչել հետո միայն ընդունել դին: Ճանաչման ժամանակ պարզ անհամապատասխանություններ նկատեցինք՝ ականջների, ոտքի չափսի, մարմնի վրա խալերի առկայության, վզի խաչի: Այդ պատճառով չենք ընդունել մարմինը: Իսկ երկրորդ անգամ, երբ արդեն եղբորից են ԴՆԹ նմուշառում վերցրել, մի քանի օրից տեղեկացրեցին, որ նախորդ անգամ ԴՆԹ համընկնումը թյուրիմացություն է եղել:*
3. *«Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ բարկացած հարցրեցի, թե ինչպես է լինում, որ բոլոր սպաները վերադարձել են իսկ ժամկետային զինվորները՝ ոչ: Վարդանյանը /քննիչ/ նշեց անունս: Նույն օրը զանգեցին, ասեցին, որ ԴՆԹ-ն համընկել է: Ինձ նախ ասեցին, որ մարմինն ամբողջական չէ, որ մասունքներ են: Ես բոլոր ծախսերը հոգացի, գնացի մասունքները բերելու, բայց տեսա, որ ամբողջական մարմին է և ատամնաշարը չի համապատասխանում: 2021թ-ի օգոստոսի վերջին անհայտ կորածների հանձնաժողովից զանգել էին հարևանիս, ում որդին ևս անհայտ կորած է, տվյալները թարմացնելու համար, նա որդուս անունը ևս ասել է: Նրան պատասխանել են, իբր մենք օգոստոսի 2-ին հողարկավորել ենք որդուս մարմինը: Դիմեցի նրանց, պատասխանեցին, որ թյուրիմացություն է տեղի ունեցել և ներողություն խնդրեցին:*

4. «Երկու անգամ ԴՆԹ համընկնման մասին դրական պատասխան ենք ստացել: Առաջին անգամ համընկնման մասին հայտնել են այն բանից հետո, երբ զանգել ենք նորություն իմանալու: Իսկ երկրորդ անգամ համընկնման մասին հայտնել են, Կառավարության շենքի դիմաց Նիկոլ Փաշինյանի օգնական Նաիրի Սարգսյանի հետ ընդհարվելուց, ապա մեկ այլ օգնական Գագիկ Իսախանյանի հետ զրուցելուց 20 րոպե անց: Մենք ԴՆԹ համընկնումներին չենք հավատում, քանի որ աճյունը ածխացած է, անճանաչելի, ատամները փչացած, չնայած, որ Հ-ի բոլոր ատամներն առողջ են եղել զորակոչվելուց առաջ: Այդ պատճառով աճյունը չենք հողարկավորում:

Մասնավորապես՝ 15%-ի դեպքում նկատել են ատամնաշարի տարբերություն, 11%-ի դեպքում հանձնված ոսկորն ընդհանրապես անճանաչելի է եղել, 7%-ի դեպքում չի համապատասխանել ոտքի չափը, մյուս բոլոր դեպքերում նկատվել են միաժամանակ մի քանի անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ատամնաշարի կառուցվածքի, մարմնի մասերի չափսի, գանգի կառուցվածքի, ծնոտի ձևի, մարմնի ընդհանուր կազմվածքին, մարմնի վրա առկա նշաններին, անձի մոտ գտնվող առարկաներին: Որոշ դեպքերում ընտանիքին հայտնել են, որ անհայտ կորածը տանկի վրա է եղել ու այրվել է, սակայն մասունքն այրված չի եղել: Բացակայել է վերնահագուստը, մարմնի նշանը՝ խալը չի եղել: Թղթերում էլ նշված է եղել, որ կրծքավանդակի շրջանում վնասվածք ունի և ականի պայթյունից է մահը վրա հասել (առավել մանրամասն տե՛ս աղյուսակ 37):

Աղյուսակ 37. Անհայտ կորած անձի և որպես այդպիսին իրենց ներկայացված անձի մասունքների կառուցվածքների միջև անհամապատասխանությունը

Անհայտ կորած անձի և իրենց ներկայացված անձի մասունքների կառուցվածքների միջև անհամապատասխանություն	Անձանց թիվը	Տոկոս
Չի համապատասխանել ատամնաշարի կառուցվածքը	4	15%
Անճանաչելի ինչ-որ ոսկոր են տվել (այլ տարածքից գտած)	3	11%
Չի համապատասխանել ոտքի չափը	2	7%
Չի համապատասխանել գանգի կառուցվածքը	1	4%
Չի համապատասխանել ծնոտի ձևը	1	4%
Չի համապատասխանել գանգի կառուցվածքը, ատամնաշարի կառուցվածքը, ծնոտի ձևը	1	4%
Դեմքն անճանաչելի է եղել, Չի համապատասխանել մարմնի կառուցվածքը	1	4%
Չի համապատասխանել ատամնաշարի կառուցվածքը, ոտքի չափը	1	4%
Չի համապատասխանել ատամնաշարի կառուցվածքը, ոտքի չափը, մարմնի կառուցվածքը՝ տղան նիհար էր, առաջարկել են գեր անձի մարմին	1	4%
Չի համապատասխանել ատամնաշարի կառուցվածքը, հասակը	1	4%

Չի համապատասխանել ատամնաշարի կառուցվածքը, հասակը, դաջվածքը	1	4%
Չի համապատասխանել ականջների չափսը, մարմնի վրայի առկա խալը, ինչպես նաև վզին առկա շղթան թելից՝ մեջը խաչ, բայց անհայտի շղթան ու խաչը եղել են արծաթե	1	4%
Մարմինը չի համապատասխանել ատամնաշարի կառուցվածքը, ոտքի չափսը ածխացած է, անճանաչելի, ատամները փչացած, չնայած, որ անհայտ կորածի բոլոր ատամաներն առողջ են եղել զորակոչվելուց առաջ	1	4%
Չի համապատասխանել ձեռքի մատները, եղունգների ձևը, ոտքի մատները	1	4%
Անճանաչելի մարմին է եղել	1	4%
Ընտանիքին ասել են, որ անհայտ կորածը տանկի վրա է եղել ու այրվել, սակայն մասունքն այրված չի եղել: Բացակայել է վերնահագուստը, մարմնի նշանը՝ խալը չի եղել: Թղթերում էլ նշված է եղել, որ կրծքավանդակի շրջանում վնասվածք ունի և ականի պայթյունից է մահը վրա հասել	1	4%
Հարցին չի պատասխանել	5	19%
Ընդամենը	**27**	**100 %**

«Մարտ ամսին ադրբեջանական կողմը 12 աճյուն է վերադարձրել, որոնց մեջ նաև իբր Զ-ի և իր ծառայակիցների դիերն են եղել: Զ-ի մարմինը դեմքից անճանաչելի էր, մարմնի կառուցվածքը չէր համապատասխանում, բացի այդ, հագին եղել է սև վադալազկա, ինչը տարօրինակ է, քանի որ Զ-ը ուսից վիրավոր էր ու չէր կարող այդպիսի հագուստ կրել: Դատաբժշկական կենտրոնում այրել են հագուստը, առանց մեր թույլտվությունը ստանալու: Մեզ վերադարձրել են Զ-ի զինգրքույկը, բանկային քարտը և թղթադրամ: Եվ չնայած նրան, որ իրերը եղել են անթերի վիճակում, մեզ հայտնել են, որ դրանք 3 ամիս հողի տակ են եղել: Մենք պարզել ենք, որ իրերը զորմասում՝ Մհեր Սահակյանի չհրկիզվող պահարանում դրված են եղել: Ես (եղբայրը) գտել եմ նաև այն տղային, որ ի սկզբանե գտել է Զ-ի իրերը: Նա ասաց, որ իրերը գետնին են եղել՝ չվնասված, բայց Զ-ն այդ տարածքում չի եղել:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ նույնականացումը հաստատող կամ հերքող արդյունքների վերաբերյալ տեղեկությունները ստացվում են ոչ ողջամիտ ժամկետներում, արդյունքների մասին ընտանիքները տեղեկություններ ստանում են տարբեր մարմիններից, ինչը վկայում է պետության կողմից ընտանիքների տեղեկություններ ստանալու իրավունքն ապահովելու միասնական մոտեցման բացակայության մասին, ինչն էլ իր հերթին առաջացնում է անկանխատեսելիություն և անվստահություն գործընթացի նկատմամբ: Անվստահություն է առաջացել նաեւ անհայտ կորածի եւ ընտանիքներին հանձնված մարմնի կամ մասունքների միջեւ կառուցվածքային տարբերությունները: Բացի այդ, ընդհանուր առմամբ, ԴՆԹ հետազոտման նպատակը ընտանիքներին պատշաճ կերպով չի բացատրվել:

«Ս-ի անունը հրապարակվել է զոհվածների ցուցակում, սակայն այն նաև ներառված է եղել անհայտ կորածների ցուցակում, քանի որ մարմինն այդ պահի դրությամբ չէր գտնվել: ԴՆԹ նմուշառում է իրականացվել հորից: 4 ամիս անց տեղեկացրեցին, որ ԴՆԹ նմուշառումը համընկել է, սակայն ունենալով կասկածներ՝ կրկնակի ԴՆԹ փորձաքննության ենք դիմել: Ես եմ հանձնել (մայրը): Կարճ ժամանակ անց Զարուհի Մաթևոսյանը (ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակից) զանգով տեղեկացրեց, որ Դատաբժշկական գիտագործնական կենտրոնից իրեն բանավոր տեղեկացրել են, որ ԴՆԹ նմուշի հետ համընկնում չի եղել, և խորհուրդ տվեց ներկայանալ կենտրոն եւ հանդիպել տնօրենի հետ: Այնտեղ գնալու ճանապարհին զանգեցին և ասացին, որ կրկնակի ԴՆԹ նմուշների հիման վրա հաստատվել է, որ Ս-ը մահացած է: Մեզ հայտնեցին, որ եթե մասունքը չվերցնենք, ապա իրենք այն կհողարկավորեն եղբայրական գերեզմանում: Մենք էլ ստիպված հողարկավորեցինք: Սակայն քանի որ գտնվել էին միայն վերջույթները, հողարկավորեցինք փակ դագաղով: Բայց չենք հավատում ԴՆԹ փոխձաքննության արդյունքներին, քանի որ մեր ստացած տվյալները հակասական են:

Ուսումնասիրության ընթացքում փորձել ենք պարզել, բացի նմուշառումից, հարազատների հետ տարբեր պետական մարմինների կողմից իրականացվող այլ աշխատանքների վիճակը: Ըստ հարցազրույցների մասնակից 104 ընտանիքներից 40-ի (38%)՝ իրենցից վերցվել են բացատրություններ (տե՛ս աղյուսակ 38): Բացի ԴՆԹ-ի իրականացումից, անհայտ կորածի հարազատներից վերցրել են այլ տեսակի բացատրություններ, մասնավորապես՝ 58%-ի դեպքում քննչական մարմինների եւ ԱԱԾ կողմից, 25%-ի դեպքում միայն քննչական մարմինների կողմից, 10%-ի դեպքում ԱԱԾ կողմից, 5%-ի դեպքում քննչական մարմինների, դատախազության եւ ԱԱԾ կողմից, իսկ 3%-ի դեպքում ռազմական ոստիկանության կողմից (տե՛ս աղյուսակ 39):

Աղյուսակ 38. Անհայտ կորածի հարազատներից բացատրություն վերցնելու փաստը

	Թիվ	Տոկոս
Այո	40	38%
Ոչ	63	61%
Դժվարանում է պատասխանել	1	1%
Ընդամենը	**104**	**100%**

Աղյուսակ 39. Բացատրություն վերցրած մարմինը

	Թիվ	Տոկոս
Քննչական մարմինների, ԱԱԾ	23	58%
Քննչական մարմիններ	10	25%

ԱԱԾ	4	10%
Քննչական մարմինների, Դատախազության, ԱԱԾ	2	5%
ՌՈ	1	3%
Ընդամենը	**40**	**100 %**

Դիտարկելով անհայտ կորած անձանց հարազատներից բացատրություններ վերցնելու փաստը եւ դրանով զբաղվող տարբեր մարմինների ներգրավվածությունը՝ կարող ենք պնդել, որ ոչ բոլոր անհայտ կորածների հարազատներից են բացատրություններ վերցրել: Բացատրություն վերցնող մարմինները ոչ բոլոր դեպքերում են նույնը, այսինքն՝ որոշ ընտանիքներից միաժամանակ մի քանի մարմին է բացատրություն վերցրել, որոշներից մեկ մարմին, իսկ որոշ ընտանիքներից ընդհանրապես որեւէ մարմին բացատրություն չի վերցրել: Բացի այդ, հայտնի չէ, թե որքանով են այդ գործողությունները կապված անձանց անհայտ կորչելու հանգամանքները պարզելու հետ եւ արդյոք դրանք իրականացվել են հարուցված քրեական գործերի շրջանակում: Այս հարցերը նույնպես վկայում են պետության կողմից անհայտ կորածների և նրանց հարազատների իրավունքների հանդեպ միատեսակ, մշակված և իրավականորեն հիմնավորված քաղաքականության բացակայության մասին:

Հետազոտությամբ դիտարկել ենք նաեւ անհայտ կորած անձանց կորչելուց հետո հարազատների մոտ առաջացած խնդիրների բնույթը եւ նրանց նկատմամբ պետական մարմինների վերաբերմունքը: **Հիմնական խնդիր է հանդիսացել եւ հանդիսանում է պետական մարմինների կողմից անհայտ կորածների հարազատներին տեղեկությունների տրամադրումը /78%/ և պետական մարմինների վատ կամ անտարբեր վերաբերմունքը /43%/:** Հարազատները մասնավորապես նշում են այն հանգամանքը, որ պետական մարմինները տեղեկություններ չեն տրամադրում, կատարվող հարցումներին չեն պատասխանում, բացի այդ խնդիրների շարքում նշում են հակասական տվյալների տրամադրումը: Որոշ դեպքերում հարազատները նշում են, որ չեն պատասխանում իրենց զանգերին կամ տվյալներ հարազատներից են հարցնում:

Աղյուսակ 40. Պետական մարմինների կողմից պարտավորությունների կատարման հետ կապվածԱնհայտ կորածների ընտանիքների/ հարազատների խնդիրները անձի անհայտ կորչելուց հետո

Հարազատների խնդիրներ իրենց հարազատի կորչելուց հետո	Ընտանիքների թիվը	Տոկոս
Տեղեկատվության ստացման	46	44%
Տեղեկատվության ստացման, վերաբերմունք պետական մարմինների կողմից	36	34%
Վերաբերմունք պետական մարմինների կողմից	9	9%
Հրաժարվել են պատասխանել	7	7%
Ոչ մի խնդիր	5	5%

Չի հայտնել՝ մտածելով, որ կարող է անդրադառնալ իրենց տղայի որոնողական աշխատանքների վրա	1	1%
Ընդամենը	**104**	**100%**

Աղյուսակ 41. Անհայտ կորածի հարազատների տեղեկատվության ստացման հետ կապված խնդիրները

Խնդիրների նկարագրությունը	**Ընտանիքների թիվը**	**Տոկոս**
Տեղեկություններ չեն հայտնում	30	66%
Դիմումներին, գրությունների չեն պատասխանում	6	13%
Հակասական տվյալներ են հայտնում տարբեր կառույցներ	6	13%
Միայն հորդորում են սպասել	2	4%
Հարազատներից են փորձում տեղեկություններ ստանալ	1	2%
Չեն ընդունում, չեն պատասխանում զանգերին	1	2%
Ընդամենը	**46**	**100%**

Վերաբերմունքի առումով կարող ենք փաստել, որ հիմնականում պետական մարմինները դրսեւորում են անտարբերություն (տե՛ս աղյուսակ 42):

Աղյուսակ 42. Անհայտ կորածի հարազատների նկատմամբ վերաբերմունքը

Վերաբերմունքի նկարագրությունը	**Ընտանիքների թիվը**	**Տոկոս**
Անտարբերություն	5	56%
Ամեն ինչ ի միջի այլոց են անում	1	11%
Ընդունում են, լսում, բայց չեն զբաղվում	1	11%
Չեն ընդունում, հորդորում են սպասելլ	1	11%
Պետությունը չի հետաքրքրվում անհայտ կորած անձի ընտանիքի անդամների սոցիալական վիճակով	1	11%
Ընդամենը	**9**	**100%**

Հարազատները նաեւ մանրամասնել են, թե ինչպես է դրսեւորվում պետական մարմինների անտարբերությունը իրենց նկատմամբ, երբ փորձում են որեւէ տեղեկություն ստանալ:

Աղյուսակ 43. Անհայտ կորածի հարազատների նկատմամբ վերաբերմունքը տեղեկատվության ստացման համար դիմելու դեպքում

Վերաբերմունքի նկարագրությունը	Ընտանիքների թիվը	Տոկոս
Դիմումներին, գրությունների չեն պատասխանում, երբեմն բանավոր հորդորում են սպասել	17	46

Տեղեկություններ չեն հայտնում	13	36
Հարազատներից են փորձում տեղեկություններ ստանալ	2	6
Անտարբեր են, բացի այն որ տեղեկություններ չեն հայտնում	1	3
Պատասխանում են միայն վիճելուց հետո, այն էլ՝ ոչ սպառիչ պատասխան են տալիս	1	3
Շատ դժգոհ են պետական մարմինների վերաբերմունքից	1	3
Նախկինում ընտանիքի անդամների հեռախոսազանգերին պատասխանում էին, հետագայում նույնիսկ այդպես որևէ տեղեկություն չէին հայտնում	1	3
Ընդամենը	**36**	**100%**

Իրենց հարազատներին գտնելու համար ընտանիքները միաժամանակ դիմել են տարբեր կառույցների, գերակշիռ մասը (88%-ը) դիմել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեին, 85%-ը ՀՀ ՊՆ, 82%-ը Անհայտ կորածների հարցերով հանձնաժողովին, 57%-ը Մարդու իրավունքների պաշտպանին, 47%-ը ԱՀ ՊՆ-ին, 45%-ը Արցախում/Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուսական խաղաղապահ ուժերին, 26%-ը ՀՀ-ում տարբեր դեսպանատների, 10%-ը ԱԱԾ, բացի այդ առանձին դեպքերում դիմել են պատգամավորների, փաստաբանների եւ այլ անձանց կամ մարմինների: Առավել մանրամասն ներկայացված է աղյուսակ 44-ում:

Աղյուսակ 44. Մարմիններ, որոնց դիմել են անհայտ կորածների հարազատները

Մարմիններ, որոնց դիմել են անհայտ կորած անձանց հարազատները նրանց գտնելու նպատակով[24]	**Ընտանիքների թիվը**	**Տոկոս**
ԿԽՄԿ	92	88%
ՀՀ ՊՆ	88	85%
Անհայտ կորածների հարցերով հանձնաժողով	85	82%
Մարդու իրավունքների պաշտպան	59	57%
ԱՀ ՊՆ	49	47%
Ռուսական խաղաղապահներ, որոնք տեղակայված են Արցախում/Լեռնային Ղարաբաղում	46	45%
Դեսպանատներ ՀՀ-ում / ԱՄՆ, Ֆրանսիա, Իրան/ՌԴ	27	26%
Քննչական կոմիտե	12	12%
ԱԱԾ	10	10%
ՄԻԵԴ / ՄԻԵԴ-ի ներկայացուցչություն ՀՀ-ում	7	7%
ՀՀ վարչապետ	5	5%
Սիրանուշ Սահակյան	2	2%
Տարածքային զինկոմիսարիատ	1	1%
ՀՀ ոստիկանապետ	1	1%

[24] Բոլոր ընտանիքները դիմել են մեկից ավելի կառույցների և/ կամ անհատների

ԱԳՆ	1	1%
Արտերկրում /ՌԴ, Ֆրանսիա/ գտնվող հարազատների միջոցով դիմել են այդ երկրների որոշ կառույցների/ չի մասնավորեցվում, թե որ՝ հիմնականում ԿԽՄԿ/	1	1%
Լույսի Ճրագ կազմակերպություն	1	1%
Նազելի Բաղդասարյան/ քաղաքական գործիչ	1	1%
Արարատ Միրզոյան/ քաղաքական գործիչ	1	1%
Աննա Հակոբյան/ ՀՀ վարչապետի կին	1	1%
Արտակ Գլստյան/ քաղաքական գործիչ	1	1%
Միքայել Մելքումյան/ քաղաքական գործիչ	1	1%
Արտակ Զեյնալյան/ փաստաբան	1	1%
Նաիրա Զոհրաբյան/ քաղաքական գործիչ	1	1%
Արթուր Այվազյան՝ «Մանախե/ Ազատամարտիկ	1	1%

Հարազատները տարբեր պետական մարմիններին դիմել են թե պատերազմի ընթացքում, թե պատերազմական գործողությունների ավարտից հետո:

Ի դեպ, ինչպես նշել ենք, ՀՔԱ Վանաձորի գրասենյակին, որպես հասարակական կազմակերպություն, դիմել են մոտ 700 անհայտ կորածի հարազատներ:

Ըստ հարցազրույցների մասնակիցների գերակշիռ մեծամասնության՝ անհայտ կորած անձանց հարազատներին ՀՀ պաշտպանության նախարարությունը որևէ տեղեկություններ չի հայտնել թե պատերազմական գործողությունների ընթացքում (76%-ի դեպքում), թե պատերազմական գործողությունների ավարտից հետո (75%-ի դեպքում): Պատերազմական գործողությունների ընթացքում (5%-ի դեպքում) եւ պատերազմական գործողությունների ավարտից հետո (8%-ի դեպքում) ՀՀ պաշտպանության նախարարությունն արձագանքել է, սակայն հստակ ոչինչ չի տեղեկացրել:

Մյուս բոլոր դեպքերում կամ հակասական պատասխաններ են հաղորդում, կամ կցկտուր տվյալներ են տրամադրում, երբեմն նաեւ իրենք են զանգահարում հարազատներին՝ տվյալներ ստանալու համար: Առավել մանրամասն հասանելի է աղյուսակ 46-ում:

Աղյուսակ 46. ՀՀ ՊՆ արձագանքը՝ անհայտ կորած անձանց հարազատների դիմելուց հետո

ՀՀ ՊՆ արձագանքը՝ անհայտ կորած անձանց հարազատների դիմելուց հետո	Պատերազմական գործողությունների ընթացքում	Տոկոս	Պատերազմական գործողություններից հետո	Տոկոս
Ոչինչ չեն հայտնել/ արձագանք չկա	67	76%	66	75%
Հստակ ոչինչ չեն ասում	4	5%	7	8%

ՊՆ-ն հարազատներից է փորձում տեղեկություններ իմանալ			4	5%
Հարդորել են սպասել	2	2%	2	2%
Անընդհատ հակասական պատասխաններ են տալիս	1	1%	1	1%
Զորամասից հարազատներին են զանգում ու տեղեկություն ուզում			1	1%
Զանգել՝ կանչել են ՊՆ, նկարները ընդունել, զրուցել հարազատների հետ	1	1%		
Անհայտ կորածի կատարած զանգերի, տեղաշարժերի մասով դիմել են ԱԱԾ, որտեղից հայտնել են, որ դիմումի պատասխանն ուղարկել է ՊՆ: ՊՆ-ից զանգով տեղեկացել են, որ իրենց մոտ ԱԱԾ-ից գրություն չի ստացվել			1	1%
ԳՇ-ից տեղեկացրել են, թե իբր ստացել են ինչ-որ փաստաթուղթ, որը հավաստում է, որ իբր անձը գերի է, սակայն հետո այն հերքվել է	1	1%		
Հայտնել են, որ հետախուզությունը անձի հետ խոսել է, ցուցումներ տվել շրջափակումից դուրս գալու նպատակով			1	1%
Զանգով հայտնել են որ այդ տարածքում մարմին չի հայտնաբերվել	1	1%	1	1%
Անտարբեր վերաբերմունք են ցուցաբերել	1	1%	1	1%
Վաշտի հրամանատարը տվել է զորմասի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալի հեռախոսահամարը, ով տղաների հետ է եղել, սակայն նրա հետ կապ հաստատել չի հաջողվել	1	1%		
Որոշ տեղեկություններ հայտնել է հրամանատարը	1	1%		
Որոշ տեղեկություններ են հայտնել դեպքից	1	1%		
Հայտնել են, որ անձը այրվել է և հորդորել սպասել մինչև աճյունը գտնեն	1	1%		
Ծնողներից և հարատներից են փորձում տեղեկություններ իմանալ			2	2%
Հրաժարվել է պատասխանել հարցին	1	1%	1	1%
Պատերազմի ընթացքում չեն դիմել	5	6%		
Ընդամենը	88		88	

Ինչ վերաբերում է անհայտ կորածների հարցերով հանձնաժողովի արձագանքին, կրկին մեծամասամբ ոչինչ չեն հայտնել կամ չեն արձագանքել հարազատների հարցերին:

Ըստ հարցազրույցների մասնակիցների գերակշիռ մեծամասնության՝ անհայտ կորած անձանց հարազատներին անհայտ կորածների հարցերով հանձնաժողովը ոչինչ չի հայտ-

նել թե պատերազմական գործողությունների ընթացքում (89%), թե պատերազմական գործողությունների ավարտից հետո (74%): Պատերազմական գործողությունների ընթացքում 4% դեպքում եւ պատերազմական գործողությունների ավարտից հետո 5% դեպքում անհայտ կորածների հարցերով հանձնաժողովը հորդորել են սպասել՝ հայտնելով, որ իրենք դրանով զբաղվում են կամ կատարվում են որոնողական աշխատանքներ, սակայն հստակ ոչինչ չի տեղեկացրել: Մյուս բոլոր դեպքերում կամ հակասական պատասխաններ են հաղորդում, կամ որոշակի տվյալներ են տրամադրում, երբեմն նաեւ իրենք են զանգահարում հարազատներին՝ տվյալներ ստանալու համար:

Առավել մանրամասն հասանելի է աղյուսակ 47-ում:

Աղյուսակ 47. Անհայտ կորածների հարցերով հանձնաժողովի արձագանքը՝ անհայը կորած անձանց հարազատների դիմելուց հետո

Անհայտ կորածների հարցերով հանձնաժողովի արձագանքը՝ անհայը կորած անձանց հարազատների դիմելուց հետո	**Պատերազմական գործողությունների ընթացքում**	**Տոկոս**	**Պատերազմական գործողություններից հետո**	**Տոկոս**
Ոչինչ չեն հայտնել/ արձագանք չկա կամ	76	89%	63	74%
Հստակ ոչինչ չեն հայտնել	1	1%	7	8%
Տվյալները հարազատների կողմից փոխանցելուց հետո կրկին տվյալներ են պահանջել, քանի որ իրենց մոտից անհետացել են			1	1%
Հայտնել են, որ անհայտ կորածի անունը տևական ժամանակ զոհվածների ցուցակում է			1	1%
Հայտն ել են, որ զորամասից փախուստի դեպք է եղել և որ անհրաժեշտ է գնալ քննչական կոմիտե			1	1%
Ասել են, որ նորության դեպքում կհայտնեն			1	1%
Աշխատակիցն հայտնել է, որ իր մոտ ենթադրյալ գերիների ցուցակ կա և որ անձն այդ ցուցակում է			1	1%
Հորդորել են ԴՆԹ հանձնել			1	1%
Ծնողներից և հարազատներից են փորձում տեղեկություններ իմանալ			2	2%
Հորդորել են սպասել/ կատարվում են որոնողական աշխատանքներ/ զբաղվում են	3	4%	4	5%
Ասում են, «ԴՆԹ-ն հաստատվել է, մարմինը հողարկավորեքե			1	1%
Որոշ մանրամասներ են հայտնել դեպքի վայրից[25]			1	1%

[25] «Զռիկներ» կոչված տեղանքում երկու անգամ դիվերսիա է եղել, հնարավոր է այդպես անհետացած լինի, ԱԹՍ կամ մեկ այլ զենք, տեխնիկա այդ տեղանքում չի գործադրվել

Անընդհատ հակասական պատասխաններ են տալիս	1	1%		
Հրաժարվել է պատասխանել հարցին	1	1%	1	1%
Պատերազմի ընթացքում չեն դիմել	3	4%		
Ընդամենը	**85**	**100%**	**85**	**100%**

Հարազատների մոտ կեսը իրենց անհայտ կորած հարազատի մասին տեղեկություններ ստանալու հարցով դիմել են նաեւ ԱՀ պաշտպանության նախարարություն, որը սակայն թե պատերազմական գործողությունների ընթացքում (59%-ի դեպքում), թե դրանցից հետո (57%-ի դեպքում) հիմնականում ոչինչ չի հայտնել կամ չի արձագանքել որեւէ կերպ: Պատերազմական գործողությունների ընթացքում (6%-ի դեպքում դեպքում) եւ պատերազմական գործողությունների ավարտից հետո (12%-ի դեպքում դեպքում) ԱՀ ՊՆ-ի կողմից ոչ մի հստակ պատասխան չեն տրամադրել: Եվ պատերազմական գործողությունների ընթացքում եւ դրանց ավարտից հետո (4% -ի դեպքում) հարազատներին ԱՀ ՊՆ-ից հայտնել են հակասական տվյալներ: Առավել մանրամասն հասանելի է աղյուսակ 48-ում:

Աղյուսակ 48. Լեռնային Ղարաբաղի/Արցախի ՊԲ արձագանքը՝ անհայտ կորած անձանց հարազատների դիմելուց հետո

ԱՀ ՊՆ արձագանքը՝ անհայտ կորած անձանց հարազատների դիմելուց հետո	**Պատերազմական գործողությունների ընթացքում**	**Տոկոս**	**Պատերազմական գործողություններից հետո**	**Տոկոս**
Ոչինչ չեն հայտնել/ արձագանք չկա	29	59%	28	57%
Ոչ մի հստակ պատասխան չեն տալիս	3	6%	6	12%
Զբաղվում են			2	4%
Անընդհատ հակասական պատասխաններ են տալիս	2	4%	2	4%
Հարազատներից են փորձել տեղեկություններ իմանալ			2	4%
Հարազատներին հնարավորություն են տվել մասնակցել որոնողական աշխատանքներին			2	4%
Աշխատակիցը հայտնել է, որ այլևս իրեն չզանգեն ու հարցերով չանհանգստացնեն			1	2%
Զրուցել են, ընդունել անհայտ կորածի նկարները	1	2%		
Զորամասից մանրամասներ են հայտնել դեպքի մասին, համաձայն որի՝ անհայտ կորած անձը պատերազմական հործողությունների ընթացքում ուղարկվել է առաջադրանքի			1	2%
Հորդորել են սպասել	1	2%	1	2%

Զորմասից տրամադրվել է տեղեկանք՝ ԱՀ ՊՆ նախարարի կողմից ստորագրված, համաձայն որի՝ անձը գերի է: Փաստաթղթի հիման վրա նրան աշխատանքից ազատել են (պայմանագրային զինծառայող):			1	2%
Անտարբեր վերաբերմունք են ցուցաբերել	1	2%	1	2%
Հայտնում են, որ անձը մահացել է պայթյունի հետևանքով	1	2%		2%
6-ամիս անց ընտանիքին են վերադարձրել անձի հեռախոսն ու ծխախոտի տուփը անվնաս վիճակում, ասելով, որ գտնվել է որոնողական աշխատանքների ժամանակ			1	2%
Հրաժարվել է պատասխանել	1	2%	1	2%
Պատերազմի ընթացքում չեն դիմել	10	20%		
Ընդամենը	**49**		**49**	

46 անհայտ կորածի ընտանիք անհայտ կորած հարազատի մասին տեղեկություններ ստանալու հարցով անգամ դիմել է Արցախում/Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուսական խաղաղապահ ուժերին: 76%-ի դեպքում ոչինչ չեն հայտնել կամ որեւէ կերպ չեն արձագանքել: 7 %-ին բանավոր հայտնել են, որ Ադրբեջանը հերքում է նման տվյալներով գերի ունենալու փաստը: 1 հոգի (2 %) նշել է, որ Արցախում/Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուսական խաղաղապահ զորքերի հրամանատար Մուրադովն իրենց հայտնել է, որ Հայաստանից մարդ չի ընդունում, աշխատում են միայն Ղարաբաղցիների հետ: Առավել մանրամասն հասանելի է աղյուսակ 49-ում:

Աղյուսակ 49. տեղակայված ռուսական խաղաղապահ ուժերի արձագանքը՝ անհայը կորած անձանց հարազատների դիմելուց հետո

Արցախում/Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուսական խաղաղապահ ուժերի ներկայացուցիչների արձագանքը՝ անհայտ կորած անձանց հարազատների դիմելուց հետո	**Պատերազմական գործողություններից հետո**	**Տոկոս**
Ոչինչ չեն հայտնել/ արձագանք չկա	35	76%
Բանավոր ասում են, որ Ադրբեջանը հերքում է նման տվյալներով գերի ունենալու փաստը	3	7%
Հորդորում են սպասել	2	4%
Թույլատրել են մասնակցել որոնողական աշխատանքներին	1	2%
Փորձել են իրենց մոտ առկա ցուցակներում ճշտել, սակայն անունը՝ չի եղել ոչ մի տեղ	1	2%
Անտարբեր վերաբերմունք են ցուցաբերել	1	2%
Բանավոր պատասխանել են, որ «ադրբեջանցիները երդվում են իրենց մոտ ընդամենը 45 ռազմագերի և 2 քաղաքացիական գերի ունենե	1	2%

Արցախում ՌԴ խաղաղապահների հրամանատար Մուրադովն իրենց հայտնել է, որ Հայաստանից մարդ չի ընդունում, աշխատում են միայն Ղարաբաղցիների հետ	1	2%
Լուր ունենալու դեպքում կկապվեն	1	2%
Ընդամենը	**46**	**100%**

Անհայտ կորած անձանց հարազատների դիմելուց հետո մարդու իրավունքների պաշտպանը եւս հիմնականում հետագա տեղեկություններ չի հայտնել, մասնավոր դեպքերը ներկայացված են աղյուսակ 50-ում:

Աղյուսակ 50. Մարդու իրավունքների պաշտպանի արձագանքը՝ անհայտ կորած անձանց հարազատների դիմելուց հետո

Մարդու իրավունքների պաշտպանի արձագանքը	**Պատերազմական գործողությունների ընթացքում**	**Տոկոս**	**Պատերազմական գործողություններից հետո**	**Տոկոս**
Ոչինչ չեն հայտնել/ արձագանք չկա	2	3%	51	86%
Ռաֆայել անունով մի մարդ հարազատներին դիմումի ձև է ուղարկել, լրացրել են և ուղարկել ՄԻԵԴ			1	2%
ՄԻՊ-ին դիմել է Դատաբժշկական փորձաքննության կենտրոնի գործունեության հետ կապված, բայց արձագանք չի ստացել			1	2%
Անտարբեր վերաբերմունք են ցուցաբերել			1	2%
Տեսանյութ են ներկայացրել, պատասխանել են, որ իրենք էլ այդ տեսանյութը ունեն, բայց Ադրբեջանական կողմը չի հաստատում			1	2%
Աշխատանքները դեռ շարունակվում են/ զբաղվում են			1	2%
Ադրբեջանը չի հաստատում			1	2%
Հայտնել են, որ եթե խմբից 1 զիվոր է, կորած, ապա այդ 1-ի համար ոչինչ չեն կարող անել			1	2%
Հայտնել են, որ եթե տեսանյութ լիներ կզբաղվեինք			1	2%
Պատերազմի ընթացքում չեն դիմել	57	97%		
Ընդամենը	**59**	**100**	**59**	**100**

Այսպիսով, ինչպես արդեն նշել ենք գոյություն ունեն անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների խնդիրներով, տեղեկությունների հավաքագրմամբ եւ փոխանակմամբ զբաղվող մի քանի պետական կառույց, որոնք միաժամանակ նույն գործառույթներն

են իրականացրել պատերազմական գործողությունների ընթացքում, սակայն նրանցից ոչ մեկը չի կարողացել ապահովել անհայտ կորած անձանց ընտանիքների տեղեկությունների ստացման իրավունքի իրականացումը, ինչպես նաեւ տարբեր խնդիրների լուծումը: Այդ պատճառով ընտանիքները դիմել են հնարավոր բոլոր մարմիններին՝ իրենց խնդիրների լուծման ակնկալիքով, սակայն ինչպես վերոգրյալում է ներկայացվում, ընտանիքների խնդիրները հիմնականում լուծում չեն ստացել, պետական եւ այլ մարմինների նկատմամբ ընտանիքների վստահությունը չի բարձրացել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ուսումնասիրելով 44-օրյա պատերազմական գործողությունների ընթացքում եւ հետպատերազմական ժամանակահատվածում անհայտ կորածների եւ նրանց ընտանիքների խնդիրները, նրանց նկատմամբ պետության կողմից վերցրած պարտավորությունների կատարման վիճակը՝ հանգում ենք հետեւյալ եզրակացությանը.

1. անհայտ կորած անձանց ընտանիքների իրենց հարազատի գտնվելու վայրի և ճակատագրի մասին տեղեկություն ստանալու իրավունքը արդյունավետ կերպով չի ապահովվել պետության կողմից, մասնավորապես՝
   - ընտանիքներին չի տրամադրվել տեղեկություն անհայտ կորած անձանց կորչելու հանգամանքների վերաբերյալ, անհայտ կորած անձանց գտնվելու վայրի եւ ճակատագրի վերաբերյալ,
   - ընտանիքներին չի տրամադրվել պատշաճ տեղեկություն նույնականացման նշանակության, ողջամիտ ժամկետներում նույնականացման իրականացման եւ դրանց արդյունքների վերաբերյալ,
2. ՀՀ պաշտպանության նախարարությունը 44-օրյա պատերազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած անձանց թվի վերաբերյալ տեղեկության տրամադրումը մերժել է հիմնավորելով մերժումը «Անձնական տվյալների մասինե ՀՀ օրենքի եւ «Տեղեկատվության ազատության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների համաձայն,
   - 44-օրյա պատերազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած անձանց թվի վերաբերյալ տեղեկություն ստանալու պահանջը ներկայացվել է ՀՀ վարչապետին, սակայն ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից տեղեկատվության հարցումը վերահասցեագրվել է ՀՀ պաշտպանության նախարարություն, որն էլ պատասխան գրությամբ տեղեկության տրամադրումը կրկին մերժել է «Տեղեկատվության ազատության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասինե ՀՀ օրենքի և ՀՀ ՊՆ 2015 թ. հուլիսի 9-ի N 9 հրամանի հավելվածի 1-ի 55-րդ կետի պահանջների համաձայն: **Այսինքն՝ հանրությանը տեղեկությունների տրամադրումը մերժվում է առանց իրավական հիմք նշելու, առանց տրամադրելու բավարար և հիմնավոր տեղեկություններ՝ տեղեկատվության հրապարակման արգելքի վերաբերյալ, առանց ներկայացնելու մերժման հստակ պատճառները: Մերժվել է այնպիսի տեղեկությունների տրամադրումը, որոնք ուղղակի վերաբերվում են մարդու իրավունքներին և որոնց տրամադրումը հետապնդում է գերակա հանրային շահ:** Բացի այդ, գաղտնիք համարվող տեղեկությունները պարբերաբար հրապարակվել են պաշտոնական մարմինների կայքերում եւ նրանց կողմից լրատվամիջոցների հարցերին ի պատասխան,
3. անհայտ կորած անձանց վերաբերյալ առկա չէ մեկ միասնական տեղեկատվական

բազա, որտեղ հավաքագրված կլինեին անհայտ անձանց վերաբերյալ ամբողջական տվյալները,

4. պետական տարբեր մարմիններ իրականացրել են միևնույն լիազորությունները եւ գործառույթները պատերազմական գործողությունների ընթացքում եւ հետպատերազմական շրջանում,
5. անհայտ կորած անձանց վերաբերյալ միասնական տեղեկատվական բազայի եւ անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների իրավունքների և խնդիրների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրմամբ եւ փոխանակմամբ զբաղվող մեկ միասնական մարմնի բացակայության եւ միաժամանակ նույն գործառույթներն իրականացնող մի քանի կառույցի պատճառով անհայտ կորած անձանց ընտանիքների համար որոշակի չէ, թե որ մարմնին կարող են դիմել տարբեր հարցերի առնչությամբ տեղեկություններ ստանալու համար, որի հետեւանքով չի ապահովվել անհայտ կորած անձանց ընտանիքների իրենց հարազատի ճակատագրի և գտնվելու վայրի մասին տեղեկություն ստանալու և այլ իրավունքների երաշխավորումն ու արդյունավետ իրականացումը,
6. անհայտ կորած անձանց ընտանիքների հետ տարվող աշխատանքների համար պատասխանատու մարմինները չունեն համապատասխան գիտելիքներ եւ հմտություններ, պատրաստված անձնակազմ, ընտանիքների իրավունքների պաշտպանության խնդիրների արդյունավետ լուծումն ապահովելու համար,
7. նույնականացումը հաստատող կամ հերքող արդյունքների վերաբերյալ տեղեկությունները ստացվում են ոչ ողջամիտ ժամկետներում, արդյունքների մասին ընտանիքները տեղեկություններ ստանում են տարբեր մարմիններից, ինչը վկայում է պետության կողմից ընտանիքների տեղեկություններ ստանալու իրավունքն ապահովելու միասնական մոտեցման բացակայության մասին, ինչն էլ իր հերթին առաջացնում է անկանխատեսելիություն և անվստահություն գործընթացի նկատմամբ: Միեւնույն ժամանակ, ընտանիքների համար հստակ չէ, թե որ կառույցին կարելի է դիմել տեղեկություն ստանալու համար: Հիմնականում այդ տեղեկություն հայտնողը թե առաջին նույնականացման, եւ թե կրկնակի նույնականացման դեպքում եղել է Դատաբժշկական գիտագործնական կենտրոնը, սակայն եղել են դեպքեր, երբ ընտանիքներն են դիմել եւ միայն դիմելուց հետո են տեղեկացել, որ նմուշների համընկնում է տեղի ունեցել,
8. Անվստահություն են առաջացրել նաեւ անհայտ կորածի եւ ընտանիքներին հանձնված մարմնի կամ մասունքների միջեւ կառուցվածքային տարբերությունները,
9. պատերազմի անմիջական և ուղղակի ազդեցությունը կրած անհայտ կորած անձանց ընտանիքները ունեն բազմաթիվ կարիքներ, մասնավորապես՝ սոցիալական, իրավական, ֆինանսական, հոգեբանական աջակցության,
10. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ անհայտ կորածի իրավական կարգավիճակի բացակայությունը ստիպում է նրանց հարազատներին դիմելու դատարան իրենց հարազատին անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու հա-

մար, սոցիալական աջակցության որոշ խնդիրներ լուծելու նպատակով, սակայն նույնիսկ նշված կարգավիճակները չեն ապահովում անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների իրավունքների եւ շահերի ամբողջական և լիարժեք պաշտպանությունը,

11. ոչ համակարգային եւ իրավիճակային մոտեցմամբ օրենսդրական մասնակի լուծումները վկայում են սոցիալական աջակցության տրամադրման հայեցողական մոտեցման մասին, որը չի կարող հանդիսանալ համակարգային, քանի դեռ անհայտ կորածի ընտանիքին սոցիալական աջակցություն ապահովելու պետության պարտավորությունը սահմանված չէ օրենքով.
մասնավորապես՝ ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքները ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով[26], որպեսզի օգտվեն պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցությունից, անհայտ կորածը պետք է հարազատների դիմումով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվի: Նույնիսկ դատական կարգով անհայտ բացակայող ճանաչելու պարագայում, ընտանիքները կանգնում են մի շարք սոցիալական խնդիրների առջև, օրինակ՝ չեն կարող որևէ իրավական գործողություն կատարել անհայտ բացակայող ճանաչված անձին պատկանող գույքի նկատմամբ: Բացի դա, դատական կարգով անհայտ բացակայողի կարգավիճակը որևէ պարտականություն չի առաջացնում պետության համար, այն ընդամենը կարգավիճակ է, որի միջոցով ընտանիքի անդամները կարող են օգտվել պետության կողմից զինծառայողների ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերից:
12. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով ծառայողական անհրաժեշտությունից ելնելով զինծառայողներին ծառայության այլ վայր տեղափոխելու հանգամանքը պարզ չէ, ինչպես նաեւ հստակ չէ, թե ծառայողական անհրաժեշտությունը կոնկրետ ինչ հանգամանքներով է պայմանավորված, որը հակասում է իրավական որոշակիության սկբունքին,
13. անհայտ կորած անձանց ընտանիքների ներկայացուցիչների հանդեպ պետական մարմինների առանձին աշխատակիցների կողմից դրսևորվում է անհարգալից և անմարդկային վերաբերմունք:

[26] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով անհայտ կորածների եւ նրանց ընտանիքների խնդիրների ուսումնասիրության հիման վրա կայացված եզրակացություններից ներկայացնում ենք հետեւյալ առաջարկությունները.

ՀՀ Ազգային ժողովին եւ ՀՀ կառավարությանը

- ընդունել «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքը եւ օրենսդրությամբ սահմանել «անհայտ կորածի» իրավական կարգավիճակի վերաբերյալ իրավակարգավորումները,
- «Անհայտ կորածի մասինե ՀՀ օրենքի իրավական կարգավորումներով ամրագրել անհայտ կորածներին փնտրելու, գտնելու, նույնականացնելու և հարազատներին վերադարձնելու պետության պարտավորությունը և դրանց իրականացման հստակ, կանխատեսելի իրավական ընթացակարգերը,
- ստեղծել առանձին մասնագիտացված պետական մարմին՝ (օրինակ՝ անհայտ կորածների տեղեկատվական բյուրո կամ կոմիտե) բացառելով միաժամանակ նույն գործառույթներն իրականացնող մի քանի կառույցների գոյությունը, որը պատասխանատու կլինի անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների իրավունքների և խնդիրների երաշխավորման, լուծումներ տալու համար. մասնավորապես տեղեկությունների հավաքագրմամբ եւ փոխանակմամբ, անհայտ կորած անձանց ընտանիքների տեղեկությունների ստացման իրավունքի ապահովմամբ,
- անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների հետ տարվող աշխատանքների համար պատասխանատու մարմնին ապահովել համապատասխան գիտելիքներով եւ հմտություններով, անհրաժեշտ մարդկային, տեխնիկական եւ ֆինանսական ռեսուրսներով,
- «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի իրավական կարգավորումներով ամրագրել անհայտ կորած անձանց ընտանիքներին անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը անհայտ կորածների գտնվելու վայրի եւ ճակատագրի ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին պատերազմական գործողությունների ժամանակ եւ հետպատերազմական ժամանակահատվածում,
- «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի իրավական կարգավորումներով ամրագրել անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքները, առողջական, իրավական եւ կրթական աջակցության տրամադրումը:

ՀՀ պաշտպանության նախարարությանը

- ապահովել անհայտ կորած անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների հրապարակումը, զերծ մնալ գաղտնիք չհամարվող տեղեկությունների տրամադրումը մերժելուց, տեղեկությունների տրամադրումը մերժելու դեպքում հստակ նշել իրավական հիմքը, տրամադրել բավարար և հիմնավոր տեղեկություններ՝ տեղեկատ-

վության հրապարակման արգելքի վերաբերյալ, հստակ ներկայացնել մերժման հստակ պատճառները: Տեղեկատվությունը մերժելու կամ տրամադրելու հարցում առաջնորդվել գերակա հանրային շահով:

ՀՀ գլխավոր շտաբին

– Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով ծառայողական անհրաժեշտությունից ելնելով զինծառայողներին ծառայության այլ վայր տեղափոխելու դեպքում հստակեցնել ծառայողական անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները՝ դրանով իսկ ապահովելով իրավական որոշակիության սկբունքը:

Դատաբժշկական գիտագործնական կենտրոնին

– Անհայտ կորած անձանց ընտանիքներին տրամադրվել պատշաճ տեղեկություն նույնականացման նշանակության մասին,
– նույնականացումը հաստատող կամ հերքող արդյունքների վերաբերյալ տեղեկությունները տրամադրել ողջամիտ ժամկետներում, արդյունքների մասին ընտանիքներին տեղեկություններ տրամադրելու հարցում ցուցաբերել միասնական մոտեցում, ինչը կարող է նվազեցնել անկանխատեսելիությունը և անվստահությունը գործընթացի նկատմամբ:

Միջազգային կազմակերպություններին

Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովին
– ԵԽԽՎ նստաշրջանում քննարկել 2007 թվականին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) կողմից ընդունված Հարավային Կովկասում հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների վերաբերյալ 1553 (2007) բանաձևը եւ 1797 (2007) հանձնարարականի կատարման վերաբերյալ հարցը՝ 44-օրյա պատերազմի համատեքստում

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարին
– Հատուկ զեկույցով անդրադառնալ անհայտ կորած անձանց ճակատագրի և գտնվելու վայրի վերաբերյալ նրանց ընտանիքների տեղեկություններ ստանալու իրավունքի վիճակի հարցին, Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների՝ ՀՀ-ի և Ադրբեջանի կողմից պարտավորությունների կատարմանը

ՄԱԿ Մարդու իրավունքների գերագույն գլխավոր հանձնակատարին
– ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդում քննության առնել 44-օրյա պատերազմի ընթացքում անհայտ կորածների իրավունքների խնդրին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Անհայտ կորածի իրավական կարգավիճակն ամրագրող միջազգային նորմերը և դրանց ամրագրումը որոշ պետությունների օրենսդրությունում

(իրականացվել է «Թումանյանե փաստաբանական գրասենյակի կողմից)

Հայաստանի Հանարապետության օրենսդրությամբ զինված հակամարտության կամ երկրի ներսում բռնության հետևանքով անհայտ կորած անձանց ու նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության վերաբերյալ նորմատիվային ամբողջական կարգավորում առկա չէ, որով պետությունը պարտականություն կունենա անհայտ կորածներին փնտրելու, գտնելու, նույնականացնելու և ընտանիքներին վերադարձնելու:

Այլ կերպ ասած, բացակայում է իրավական կարգավորումը կազմակերպելու, իրականացնելու և վերահսկելու անհայտ կորած անձի որոնման բոլոր անհրաժեշտ աշխատանքները, ներառյալ մարդկային մասունքների վերականգնումը և նույնականացումը, ինչպես նաև համագործակցելու անհայտ կորածների ընտանիքների հետ և պարբերաբար տրամադրելու տեղեկություն իրականացվող որոնողական աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ:

Ներպետական օրենսդրության մեջ նման իրավական կարգավորումների բացակայությունը չի համապատասխանում Հայաստանի միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Թեև Հայաստանում 2018 թվականին ստեղծվել է գերիների, պատանդների և անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով[27], սակայն այն չի ապահովում զինված հակամարտության կամ երկրի ներսում բռնության հետևանքով անհայտ կորած անձանց ու նրանց ընտանիքների իրավունքների ու շահերի ամբողջական պաշտպանությունը:

Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիաներին կից Ժնևի 1977 թվականի լրացուցիչ արձանագրության[28] 32-րդ հոդվածի համաձայն՝ սույն բաժնի *(Անհայտ կորած և մահացած անձինք)* դրույթները կիրառելիս կոնֆլիկտի մեջ գտնվող բարձր Պայմանավորվող Կողմերը և Կոնվենցիայում և սույն Արձանագրության մեջ հիշատակված միջազգային մարդասիրական կազմակերպությունները իրենց գործունեության մեջ ելնում են իրենց հարազատների ճակատագրի մասին իմանալու ընտանիքների իրավունքից:

Ժնևյան կոնվենցիաները վավերացնելով՝ Հայաստանը պարտավորություն է ստանձնել ընդունել անհայտ կորածների ու նրանց ընտանիքների իրավունքների ու շահերի պաշտպանությունն ապահովող իրավական կարգավորումներ (օրենք):

---

[27] ՀՀ վարչապետի 19.11.2018 թվականի թիվ 1535-Ա որոշում

[28] Ընդունվել է 08.06.1977 թվականին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 07.12.1993 թվականին

Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի կողմից մշակվել է ուղեցույց[29], որն առաջարկում է զինված հակամարտության կամ երկրի ներսում բռնության հետևանքով անհայտ կորած անձանց կարգավիճակի օրենսդրական կարգավորման սկզբունքները, մարդկանց անհետացման կանխման և անհայտ կորած անձանց ու նրանց հարազատների իրավունքների ու շահերի պաշտպանության միջոցները:

Ուղեցույցի նպատակն է կատարել իրավական բազայի համապարփակ վերլուծություն և օգնել պետություններին ավարտին հասցնել անհայտ կորած անձանց վերաբերյալ ներպետական օրենսդրության ընդունումը:

Համաձայն ԿԽՄԿ ուղեցույցի՝ օրենքի նպատակն է կանխել մարդկանց անհետացումը և ապահովել զինված հակամարտության կամ բռնության պայմաններում անհայտ կորած անձի որոնմանն աջակցելը և անհայտ կորած անձանց և նրանց հարազատների իրավունքներն ու շահերը պաշտպանելը:

ԿԽՄԿ ուղեցույցը, ի թիվս այլնի, առաջարկում է, որ օրենքով ամրագրվի՝

- անհետացումից պաշտպանված լինելու իրավունքը: Անհայտ կորած անձի կարևորագույն իրավունքն է, որ նրան փնտրեն և գտնեն,

- անհայտ կորածների իրավունքներն ու շահերը ենթակա են պաշտպանության ցանկացած ժամանակ՝ մինչև նրանց ճակատագրի պարզումը կամ նրանց մահվան փաստի հաստատումը,

- մարդն իրավունք ունի իմանալ իր կորած հարազատների ճակատագրի մասին, այդ թվում՝ նրանց գտնվելու վայրի մասին, իսկ մահվան դեպքում՝ մահվան հանգամանքների և թաղման վայրի մասին (եթե այն հայտնի է), ինչպես նաև նրանց աճյունները ստանալու իրավունք: Իշխանությունները պարտավոր են հարազատներին տեղեկացնել որոնման ընթացքի և արդյունքների մասին,

- կորած անձանց փնտրելու, ինչպես նաև անհայտ կորածների հարազատներին տեղեկատվություն տրամադրելու պարտականություն ունեցող մարմնի ստեղծումը,

- անձի մահը հաստատվելու դեպքում որոնողական աշխատանքները չեն ավարտվում, քանի դեռ չեն գտնվել նրա մասունքները (բացառությամբ եթե անձի հարազատը չի խնդրում դադարեցնել որոնումները): Այն բանից հետո, երբ պարզվել է անհայտ կորած անձի մահվան փաստը, անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ աճյունները գտնելու և արտաշիրիմելու և պատշաճ հուղարկավորելու համար կամ հուղարկավորության վայրը գտնելու և այն նշելու համար,

- պետության պարտականությունը ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները աճյունները նույնականացնելու համար: Դրա անհնարինության դեպքում պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել աճյունների նկատմամբ արաժանապատիվ վարվելու համար,

- քրեական պատասխանատվություն սահմանվի այն պաշտոնատար անձանց նկատ-

[29] Հիմնարար սկզբունքներ/Անհայտ կորածների մասին ուղենիշային օրենք: Զինված հակամարտության կամ երկրի ներսում բռնության հետևանքով անհայտ կորած անձանց կարգավիճակի վերաբերյալ օրենսդրական կարգավորման սկզբունքները: Մարդկանց անհետացումը կանխելու և անհայտ կորած անձանց և նրանց հարազատների իրավունքներն ու շահերը պաշտպանելու միջոցները https://www.icrc.org/ru/document/rukovodyashchie-principy-modelnyy-zakon-o-propavshih-bez-vesti-licah

մամբ, ովքեր կհրաժարվեն տեղեկություն տրամադրել անհայտ կորած անձանց մասին նրանց հարազատներին կամ դիտավորյալ սխալ տեղեկություն կտան, կամ կօգտագործեն այդ տեղեկությունները օրենքով չսահմանված նպատակներով, ինչպես նաև աճյունների հետ ոչ պատշաճ վերաբերմունքի համար:

Հայաստանը 2002 թվականի ապրիլի 26-ին վավերացնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասինե 1950 թվականի եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) և նրա թիվ 1, 4, 6, 7 արձանագրությունները՝ ստանձնել է Կոնվենցիայով պաշտպանվող անձի իրավունքները և ազատությունները ապահովելու պարտավորություն:

Անձի անհետացումը հնարավոր մահաբեր հանգամանքներում պետության վրա դնում է անհետացած անձի կյանքի իրավունքը պաշտպանելու ուղղությամբ կոնկրետ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն Կոնվենցիայի 2-րդ հոդվածից բխող դրական պարտավորության լույսի ներքո[30]:

Անձի անհետացումը այնպիսի պայմաններում, ինչպիսին ռազմական գործողություններն են, ինքնին համարվում է կյանքին սպառնացող:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում քննություն անցկացնելու պետության պարտավորությունը դիտարկվում է որպես Կոնվենցիայի 2-րդ հոդվածին ներհատուկ պարտավորություն, որը, մասնավորապես, պահանջում է, որ կյանքի իրավունքը «պաշտպանված լինի օրենքովե: Թեև այս պարտավորությունը չկատարելը կարող է հետևանքներ ունենալ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքի (իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք) համար, սակայն 2-րդ հոդվածի ընթացակարգային պարտավորությունն իրենից ներկայացնում է առանձին պարտավորություն[31]: Այն կարող է առանձին և անկախ «միջամտությանե արձանագրման հիմք հանդիսանալ:

Պետության համար դրական պարտավորության առաջացման համար պետք է ապացուցվի, որ տվյալ պահին իրավասու մարմիններն իմացել են կամ պետք է իմանային, որ մեկ կամ մի քանի անձանց կյանքն իրական և անմիջական եղանակով վտանգված է եղել երրորդ անձի հանցավոր գործողությունների բերումով և այդ իրավասու մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում չեն ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք ողջամտորեն կարող էին անկասկած վերացնել նման վտանգը[32]:

Անհետացումներն իրենցից ներկայացնում են մի առանձին երևույթ, որը բնորոշվում է այնպիսի իրավիճակով, երբ հարազատները շարունակաբար առերեսվում են անորոշության և պատահածի վերաբերյալ բացատրությունների և տեղեկությունների բացակայության հետ, ընդ որում, այս առումով նշանակալի տարրերը երբեմն կարող են նույնիսկ դիտավորյալ թաքցվել կամ քողարկվել: Այս իրավիճակը հաճախ երկար է տևում՝ դրանով իսկ երկարացնելով անհայտ կորած անձանց հարազատների տանջանքը:

[30] Քոքուն ընդդեմ Թուրքիայի, գանգատ 27305/95, §132, Օսմանօղլուն ընդդեմ Թուրքիայի, գանգատ 48804/99, §75

[31] Իլհանն ընդդեմ Թուրքիայի, գանգատ 22277/93 §§ 91-92,

[32] Մաստրոմատեոն ընդդեմ Իտալիայի, գանգատ 37703/97, §68, Փոլ և Օդրի Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության, գանգատ 46477/99, §55

Անհետացած անձի և նրա գտնվելու վայրի վերաբերյալ հետագա բացատրությունների բացակայությունը կազմում է լրացուցիչ հատկանշական տարր, որը ստեղծում է շարունակական իրավիճակ: Հետևաբար նման դեպքերում ընթացակարգային հնարավոր պարտավորությունը պահպանվում է այնքան ժամանակ, մինչև անձի ճակատագիրը չպարզվի. անհրաժեշտ քննության շարունակական բացակայությունը դիտվում է որպես շարունակական խախտում առաջացնող իրողություն: Այդպես է պատահում, նույնիսկ երբ հնարավոր է վերջնականապես համարել, որ տուժողը մահացած է[33]:

Եվրոպական Կոնվենցիայի և վավերացված միջազգային փաստաթղթերի ուժով պետությունը կրում է պարտավորություն կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում պաշտպանել անհետացած անձանց կյանքի իրավունքը, ինչը պետք է դրսևորվի անհայտ կորածներին շարունական փնտրելու, գտնելու, նույնականացնելու և վերադարձնելու գործողություններով: Այսինքն՝ պետությունը պարտավոր է կազմակերպել, իրականացնել և վերահսկել անհայտ կորած անձի որոնման բոլոր անհրաժեշտ աշխատանքները, ներառյալ մարդկային մնացորդների վերականգնումը և նույնականացումը, ինչպես նաև համագործակցել անհայտ կորածների ընտանիքների հետ և պարբերաբար տրամադրել տեղեկություն իրականացվող որոնողական աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ:

Տեղեկացված լինելու իրավունքը պաշտպանվում է նաև Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայով, ամրագրված է միջազգային մարդասիրական իրավունքում:

2007 թվականի մարտի 7-ին Եվրոպայի խորհրդի միգրացիայի, փախստականների և ազգաբնակչության հարցերով հանձնաժողովը հրապարակել է զեկույց Արցախի Հանրապետության, Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների հետևանքով Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում անհայտ կորած անձանց վերաբերյալ[34]:

2007 թվականին ԵԽԽՎ-ն ընդունել է անհայտ կորածների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների վերաբերյալ 1553 (2007) բանաձևը[35], իսկ Հայաստանը՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն, ունի ստանձնած պարտավորություն ԵԽԽՎ բանաձևերի ու հանձնարարականների իրագործման վերաբերյալ:

Բանաձևում մասնավորապես ասվում է՝ Անհայտ կորածների ճակատագրի մասին իմանալու իրավունքը նրանց ընտանիքների հիմնարար իրավունքն է և պետք է երաշխավորվի պետության կողմից: Տեղեկացված լինելու իրավունքը ամրագրված է միջազգային մարդասիրական իրավունքում: Միջազգային սովորութային իրավունքի նորմերը, որոնք կիրառելի են և միջազգային, և ոչ միջազգային զինված հակամարտությունների կոնտեքստում, սահմանում են զինված հակամարտության յուրաքանչյուր կողմի պարտավորությունը ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները զինված հակամարտության հետևանքով անհայտ կորած անձանց հաշվառման համար և ընտանիքների անդամներին տրամադրել նրանց ճակատագրի վերաբերյալ իրենց ունեցած ցանկացած տեղեկատվություն:

Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետությունների վրա դնում է իրենց քաղա-

[33] Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի» [ՄՊ], § 148

[34] https://pace.coe.int/en/files/11642?__cf_chl_jschl_tk__=MRSjQL7vr_8foLgdtyuYRAUk5A.nZ_oO_K.78pqhdLI-1642747523-0-gaNycGzNCH0

[35] http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17541&lang=en

քացիների համար ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության նկատմամբ արդյունավետ հարգանքի իրավունք երաշխավորելու դրական պարտավորություն[36]:

Ավելին, նման պարտավորությունը կարող է ենթադրել հստակ միջոցների ձեռնարկում, մասնավորապես՝ արդյունավետ և հասանելի ընթացակարգի ստեղծում, որը կոչված կլինի պաշտպանել անձնական կյանքի իրավունքը[37] կամ այնպիսի նորմատիվային դաշտի ստեղծում, որի շրջանակներում կնախատեսվի դատական և գործադիր մեխանիզմ, որը կոչված կլինի պաշտպանել անհատների իրավունքները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ խնդրո առարկա միջոցների իրագործումը տարբեր համատեքստերում[38]:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի պաշտպանությունը ներառում է ոչ միայն պետության կողմից մասնավոր կյանքին միջամտելուց ձեռնպահ մնալը, այլև պետության պոզիտիվ պարտականությունը՝ անհրաժեշտ և արդյունավետ օրենսդրական և իրավակիրառ միջոցներով երաշխավորելու և ապահովելու այն: Հետևապես, պետությունը նախ ինքը չպետք է միջամտի այս հիմնական իրավունքին, բացառությամբ Կոնվենցիայով և Սահմանադրությամբ թույլատրված դեպքերի, ապա նաև պարտավոր է սահմանել ոչ միայն իր, այլև երրորդ անձանց կողմից այս հիմնական իրավունքի խախտումների դեպքում դրանցից արդյունավետ պաշտպանվելու համար անհրաժեշտ ընթացակարգեր և կառուցակարգեր, և վերջապես պարտավոր է նաև գործնականում ապահովել այս հիմնական իրավունքի պաշտպանությունը:

Զինված հակամարտությունների ժամանակ անհայտ կորած անձանց ճակատագրի վերաբերյալ անորոշությունը դաժան իրականություն է ստեղծում նրանց ընտանիքների համար: Ընտանքի անդամները տեղեկություններ չունենալով իրենց հարազատի մասին ապրում են անորոշության մեջ չիմանալով, թե իրենց հարազատները ողջ են, թե մահացած, արդյունքում կրելով հոգեկան տառապանք՝ հուսահատորեն փորձում են գտնել կամ որևէ կերպ տեղեկություններ են փնտրում:

Անհայտ կորածի հարզատների հոգեկան տառապանքը շարունակվումէ նաև մարտական գործողությունների ավարտից, խաղաղության հաստատումից հետո:

2003 թվականի անհետ կորած անձանց վերաբերյալ պետական և ոչ պետական փորձագետների մասնակցությամբ միջազգային խորհրդաժողովում[39] ճանաչվել է, որ իրենց հարազատների ճակատագրի և գտնվելու վայրի մասին տեղեկատվության սպասող ընտանիքները առանձնահատուկ կարիքներ ունեն: Դրանք ներառում են վարչական, տնտեսական, հոգեբանական աջակցության կարիքները, նրանց տառապանքների ճանաչման անհրաժեշտությունը և արդարության հաստատման պահանջը:

Բացի այդ, անհրաժեշտ է հաստատել անհայտ կորած անձանց իրավական կարգավիճակը որպեզի հստակեցվի նաև նրանց ընտանիքների իրավական կարգավիճակը: Դա կարելի է անել, օրինակ, ազգային իրավական համակարգերում անհայտ կորածի կարգավիճակ

[36] Նիտեցկին ընդդեմ Լեհաստանի, գանգատ 65653/01

[37] Էյրեյն ընդդեմ Իռլանդիայի, գանգատ 6289/73 § 33

[38] Ա.Բ. և Ց.-ն ընդդեմ Իռլանդիայի, գանգատ 25579/05

[39] The Missing: Action to resolve the problem of people unaccounted for as a result of armed conflict or internal violence and to assist their families International Conference of Governmental and Non Governmental Experts (Geneva, 19-21 February 2003), conference acts, https://www.icrc.org/en/doc/assets/files/other/themissing_conf_03.2003_en_90.pdf

տալու միջոցով:

Ներկայումս բացի հոգեկան տառապանքներից, իրենց հարազատի վերաբերյալ տեղեկություն չունենալու անորոշությունից, ունեն նաև մի շարք սոցիալական խնդիրներ:

Մասնավորապես՝ ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքները ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով[40], որպեսզի օգտվեն պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցությունից, անհայտ կորածը պետք է հարազատների պահանջով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվի: Նույնիսկ դատական կարգով անհայտ բացակայող ճանաչելու պարագայում, կանգնում են մի շարք սոցիալական խնդիրների առջև, օրինակ՝ չեն կարող որևէ իրավական գործողություն կատարել անհայտ բացակայող ճանաչված անձին պատկանող գույքի նկատմամբ: Բացի դա, դատական կարգով անհայտ բացակայողի կարգավիճակը որևէ պարտականության չի առաջացնում պետության համար, այն ընդամենը կարգավիճակ է, որի միջոցով ընտանիքի անդամները կարող են օգտվել պետության կողմից զինծառայողների ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերից:

Ստացվում է, որ պետությունն իր պարտականությունները կատարելու փոխարեն, անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների համար առաջացնում է լրացուցիչ բեռ՝ դատարան դիմելու առումով: Այդ հանգամանքը առաջացնում է լրացուցիչ ծախսեր և ավելացնում է հոգեկան տառապանքը (օրինակ՝ իր հարազատի մահվան փաստը իր նախաձեռնությամբ հաստատելով):

Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանել «անհայտ կորածիե իրավական կարգավիճակի վերաբերյալ իրավակարգավորումներ, որը պետության համար կստեղծի պարտավորություն՝ անհայտ կորածներին փնտրելու, գտնելու, նույնականացնելու և հարազատներին վերադարձնելու: Այսինքն՝ շարունակական իրականացնել և վերահսկել անհայտ կորած անձի որոնման բոլոր անհրաժեշտ աշխատանքները, ներառյալ մարդկային մնացորդների վերականգնումը և նույնականացումը, անհայտ կորած անձանց ընտանիքի անդամներին տրամադրել սոցիալական, տնտեսական և իրավական աջակցություն, ինչպես նաև համագործակցել անհայտ կորածների ընտանիքների հետ և պարբերաբար տրամադրել տեղեկություն իրականացվող որոնողական աշխատանքների, արդյունքների վերաբերյալ, որով կմեղմվի ընտանիքների անհանգստությունը և անորոշությունը:

<u>Հակիրճ վերլուծություն այլ երկրների փորձից</u>

2017 թվականին Մեքսիկայում ընդունվել է «Անհետացումների մասինե օրենքը, որով հստակ բաշխում է զինված հակամարտության կամ երկրի ներսում բռնության հետևանքով անձանց անետացումների քննության համար պատասխանատու տարբեր պետական մարմինների միջև գործառույթները՝ վերացնելով ենթադրյալ իրավասության վերաբերյալ վեճերը: Օրենքով ստեղծվում է ազգային որոնման համակարգ և ազգային որոնման հանձնաժողով, ինչի շնորհիվ բռնի անհետացած անձանց ընտանիքները այլևս ստիպված չեն լինում ինքնուրույն որոնել իրենց հարազատներին: Անմիջական զոհի ընտանիքի անօտարելի

[40] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք

իրավունքն է տեղեկանալ անհետացած անձի ճակատագրի և/կամ գտնվելու վայրի մասին: Մահվան դեպքում այդ անձի մարմինը նույնականացվելուց անմիջապես հետո պետք է վերադարձվի ընտանիքին, անկախ մեղավորների հաստատման և պատասխանատվության ենթարկման փաստից:

Կոլումբիայում ընդունվել են մի քանի օրենքներ, որոնք անհայտ կորածների ընտանիքներին և հարազատներին ապահովում են սոցիալական պաշտպանության հասանելիություն: Անհետացած անձանց որոնման ազգային ռազմավարությամբ սահմանվել է պարտադիր մեթոդաբանություն, որին պետք է հետևեն դատական մարմինները անհետացած անձանց վերաբերյալ գործերի քննության ժամանակ: Հիմնական նպատակն էր գտնել անհայտ կորած մարդուն կենդանի կամ աճյունները հասցնել ընտանիքին, որպեսզի նրանք կարողանան սգալ իրենց սովորույթներին և հավատալիքներին համապատասխան: Հիմնական խնդիրները ոչ միայն զոհերի վերաբերյալ տեղեկատվական համակարգերի կոնսոլիդացումն էր, այլև նրանց անհետացման հանգամանքների մասին հավաստի տեղեկատվություն տրամադրելը և ապահովելը, որ դատական մարմինները ոչ միայն իրավական պաշտպանության միջոցներ տրամադրեն զոհերին, այլև կանխարգելեն հետագա անհետացումները:

2016 թվականի հունիսին Պերուում նույնպես ընդունվել է անհայտ կորած անձանց որոնումների մասին օրենք: Օրենքը նույնանման կարգավորումներ է նախատեսում, ինչպիսին Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի կողմից մշակված ուղեցույցում, որն առաջարկում է զինված հակամարտության կամ երկրի ներսում բռնության հետևանքով անհայտ կորած անձանց կարգավիճակի օրենսդրական կարգավորման սկզբունքները:

Բոսնիայի և Հերցեգովինայի 2004 թվականին ընդունված «Անհայտ կորածների մասինե օրենքով[41] ամրագրված է անհայտ կորած անձանց ճակատագրերի մասին ճշմարտությունն իմանալու նրանց հարազատների իրավունքը, ինչպես նաև հետաքննության ընթացքի մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը: Օրենքով ստեղծվել է նաև «Անհայտ կորած անձանց ինստիտուտը, որը հանդիսանում է պետական հիմնարկ և օժտված է Բոսնիայի և Հերցեգովինայի ամբողջ տարածքում անհայտ կորած անձանց որոնման և նույնականացման մանդատով: Դրանով վերջ դրվեց Բոսնիայում և Հերցեգովինայում անհայտ կորած անձանց որոնման էթնիկ պատկանելության հիմքով խտրական պրակտիկային: Օրենքով ստեղծվել են նաև անհայտ կորածների Կենտրոնական գրանցամատյան (տվյալների բազա) և անհայտ կորածների ընտանիքների համար հիմնադրամ: Օրենքով պատժամիջոցներ են սահմանված առանձին անձանց և հաստատությունների նկատմամբ, որոնք թաքցնում են անհայտ կորած անձանց ճակատագրին վերաբերող տեղեկատվությունը[42]: 2019 թվականի դրությամբ ստուգվել է անհայտ կորած անձանց մասին 27,085 հաղորդագրություն, պեղվել է զոհվածների մոտ 25,500 մասունք, ևս 7206 անհայտ կորած անձանց որոնումները դեռ շարունակվել են[43]:

---

[41] https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl-nat.nsf/xsp/.ibmmodres/domino/OpenAttachment/applic/ihl/ihl-nat.nsf/4C63A15BDD81EE23C1257102004E8AA1/TEXT/Bosnia%20and%20Herzegovina%20-%20Law%20on%20Missing%20Persons%2C%202004%20%5Bbos%5D.pdf

[42] https://ihl-in-action.icrc.org/case-study/bosnia-and-herzegovina-identification-missing-persons

[43] https://balkaninsight.com/2019/08/29/bosnia-publishes-database-of-27000-wartime-missing-persons/

ՀԱՎԵԼՎԱԾ 2

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած անձանց կորչեու հանգամանքները ըստ անհայտ կորածների հարազատների

Անհայտ կորած անձանց հարազատներին չի տրամադրվել պատշաճ տեղեկատվություն պետական մարմինների կողմից, բացի այդ՝ հակասական տվյալներ են տրամադրվել զորամասերի հրամանատարների կողմից

1. Գ. Ս.
   Անհայտ կորածի անմիջական հրամանատարը վերջինիս հարազատներին հայտնել է, որ զինծառայողը մահացել է: Հրամանատարը վստահեցրել է հարազատներին, որ ինքն անձամբ է զինծառայողի «աչքերը փակելե մահանալուց հետո: Սակայն օրեր անց կեսգիշերից հետո զանգահարել է անհայտ կորածի մորը և հայտնել, որ արկ է պայթել, բայց ինքը չի տեսել զինծառայողին:
   Մատաղիսի զորմասի բուժքույրը նույն անհայտ կորածի ընտանիքին տեղեկացրել է, որ վերջինս զոհված չէ, այլ հիվանդանոցում է: Սակայն հետագայում բուժքույրը զինծառայողի հարազատների հարցերին խուսափողական պատասխան է տվել, ապա՝ ազատվել աշխատանքից:

2. **Ա. Ա.**
   Անհայտ կորածի հայրը զորամասի սպաներից մեկի հետ խոսելիս իմացել է, որ անհայտ կորչելու հավանական պատճառ դարձած դեպքը տեղի է ունեցել հոկտեմբերի 26-ին, սակայն երբ հայրը հատնել է, որ որդու հետ խոսել է հոկտեմբերի 28-ին, սպան պատասխանել է՝ «ուրեմն 28-ին է եղել դեպքը»: Հայրը հայտնել է, որ հոկտեմբերի 30-ին որդուն տեսնող է եղել և զորամասի անձնակազմի հետ տարվող աշխատանքների (ԱՀՏԱ) գծով տեղակալին հարցրել, թե արդյոք կազմվել է զեկուցագիր զինծառայողի անհայտ կորչելու հանգամանքի փաստով, սակայն պարզվել է, որ չի կազմվել: Անհյատ կորածի հոր դիմելուց հետո է միայն կազմվել զեկուցագիրը:

3. **Հ. Հ.**
   Զորմասաի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալը մի քանի անհայտ կորած զինծառայողների հարազատներին հեռախոսով նախ հայտնել է, որ «տղաները զոհվել ենե և որ ինքը «քանակով դի է դուրս բերել այդ տարածքիցե, այսինքն՝ քանի հոգի ուղարկվել են մարտական գործողություններին մասնակցելու, նույնքան մարմին

դուրս է բերվել այնտեղից, սակայն հետագայում հերքել է, որ նման բան է ասել:

4. **Փ. Հ.**
Հրամանատարը, ով անհայտ կորածի հետ նույն վայրում է գտնվել, հարազատներին նախ պատմել է, որ ինքը տեսել է, թե ինչպես է ԱԹՍ-ի բեկոր ընկել անհայտ կորած զինառայողի վրա, սակայն հետագայում հերքել է՝ ասելով, որ ինքը չի տեսել զինծառայողին: Հետագայում ծառայակիցները անհայտ կորածի հարազատներին պատմել են, որ անհայտ կորած զինծառայողը և հրամանատարը անձնական խնդիրների պատճառով առանձնացել և վիճել են: Որոշ ժամանակ անց հրամանատարը հետ է եկել՝ ասելով, որ պայթուն է եղել և «զինծառայողը չկա՝ մոխրացել է ԱԹՍ-ի հարվածից: Սակայն նշված վայրից չի գտնվել ոչ զինծառայողի զրահաբաճկոնը, ոչ այրված հագուստ կամ կոշիկ, իսկ հրամանատարը, գտնվելով նույն տեղանքում, անվնաս է մնացել:

ԴՆԹ նմուշառման արդյունքների հետ կապված խնդիրներ

1. **Գ. Ա**
ԴՆԹ նմուշառման դրական պատասխանից (համընկնում) հետո հարազատները հրաժարվել են ընդունել իրենց ներկայացվող մարմինը, քանի որ ակնհայտ անհամապատասխանություն են նկատել անհայտ կորածի և իրենց ներկայացվող մարմինների կառուցվածքի միջև: Մարզպետարանից և զինկոմիսարիատից հարզատներին խորհուրդ են տվել ընդունել մարմինը, որպեսզի «գոնե սոցիալական աջակցությունից օգտվենե, սակայն նրանք չեն ընդունել: Ծնողների տեղեկությունների համաձայն՝ մարմինը, որն իրենց առաջարկվել է իբրև իրենց զինծառայողի մարմին, հարակից գյուղում՝ մի քանի ամիս առաջ հուղարկավորվել է մեկ այլ ընտանիքի կողմից:

2. **Ա. Հ.**
2021 թ. նոյեմբերի վերջին զինծառայողի հորից ԴՆԹ նմուշառում է իրականացվել: Որոշ ժամանակ անց հարազատները համացանցում՝ գերիների մեջ տեսել են մի զինծառայողի եւ նմանացրել անհայտ կորածին, ինչի կապակցությամբ դիմել են քննչական մարմիններին: Դիմելու հաջորդ օրը՝ 2021 թ. մարտի վերջին, ծնողներին տեղեկացրել են, որ ԴՆԹ նմուշառման համընկնում է եղել:
Այնուամենայնիվ, ծնողները վստահ են, որ մասունքներն իրենց որդուն չեն պատկանում, քանի որ ծնոտի կառուցվածքի ակնհայտ անհամապատասխանություն են նկատել: Հորից կատարված ԴՆԹ նմուշառման հաստատվելու օրը նմուշառում է կատարվել նաև մորից, սակայն համընկնում չի եղել: Բացի այդ, մոր ԴՆԹ նմուշի վրա նշվել է զինծառայողի հոր անունը, ինչի կապակցությամբ տեղեկացվել է, որ դա արվում է «ստուգելու համար՝ արդյոք նրանք ամուսիններ են, թե ոչ»:

3. **Զ. Ա.**
ԴՆԹ նմուշատման համընկնումից հետո հարազատները ներկայացել են մարմնի ճանաչման, սակայն դեմքից այն անճանաչելի է եղել: Չի համապատասխանել նաև մարմնի կառուցվածքը: Բացի այդ, հարազատներին ներկայացված մարմինը եղել է ընդգրկող վերնահագուստով, սակայն հարազատներն իմացել են, որ զինծառայողը ուսից վիրավոր է եղել, մարտական գործողություններին մասնակցել է առանց վերնահագուստի, և քանի որ հաղթանդամ է եղել, չէր կարող ընդգրկող վերնահագուստ հագնել՝ առավել ևս ուսից վիրավոր լինելով:

4. **Գ.Մ.**
Անհայտ կորածի ընտանիքի անդամներին զանգով տեղեկացվել է ծնողից կատարված ԴՆԹ նմուշառման համընկնման մասին: Ճանաչմանը ներկայացած հարազատները ականջների ձևի, ոտքի չափսի, մարմնի վրա խալերի առկայության հստակ անհամապատասխանություններ են նկատել: Ընտանիքի անդամները չեն ընդունել մարմինը: Նույն օրը ԴՆԹ նմուշառում է կատարվել զինծառայողի եղբորից, սակայն համընկնում չի գրանցվել: Հետագայում անհայտ կորածի հարազատներին տեղեկացրել են, որ նախորդ անգամ ԴՆԹ նմուշառման արդյունքում համընկնումը թյուրիմացություն է եղել:

5. **Մ.Գ.**
Անհայտ կորածի հայրը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ վրդովված հարցրել է, թե «ինչպես է ստացվում, որ բոլոր սպաները վերադարձել են, իսկ ժամկետային զինծառայողները՝ ոչ»: Նույն օրը ընտանիքին զանգահարել և տեղեկացրել են, որ ԴՆԹ նմուշառման արդյունքները համընկել են մահացած զինծառայողներից մեկի ԴՆԹ-ի հետ:

6. **Հ.Հ.**
Անհայտ կորածի հարզատները երկու անգամ ԴՆԹ նմուշառման համընկնման արդյունքները կասկածելի են համարում, քանի որ պատասխանն առաջին անգամ ստացել են այն բանից հետո, երբ Կառավարության շենքի դիմաց վիճել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի օգնական Նաիրի Սարգսյանի հետ: Կրկնակի ԴՆԹ նմուշառման պատասխանը ստացվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի օգնական Գագիկ Իսախանյանի հետ զրուցելուց կարճ ժամանակ՝ 20 րոպե անց: Ընտանիքը ԴՆԹ համընկնման մասին տվյալներին չի հավատում և չի ընդունում մարմինը: Բացի այդ, իրենց ներկայացվող մարմինը ածխացած է եղել, անճանաչելի, ատամները փչացած, չնայած՝ անհայտ կորածի բոլոր ատամներն առողջ են եղել:

7. **Ս. Ե.**
ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակից Զարուհի Մաթևոսյանը ան-

հայտ կորածի հարազատների հետ հեռախոսազրույցի ընթացքում հայտնել է, որ զինծառայողը ներառված է գերիների ցուցակում: Հետագայում հարազատներին տեղեկացվել է, որ ԴՆԹ նմուշառման արդյունքում համընկնում է եղել: Կարճ ժամանակ անց Զարուհի Մաթևոսյանը զինծառայողի հարազատին զանգով տեղեկացրել է, որ Դատաբժշկական գիտագործնական կենտրոնից իրեն բանավոր տեղեկացրել են, որ ԴՆԹ նմուշի հետ որևէ համընկնում չի եղել և խորհուրդ է տվել ներկայանալ կենտրոն և հանդիպել տնօրենի հետ: Հարազատները ճանապարհին հեռախոսազանգ են ստացել և տեղեկացել, որ զինծառայողի կրկնակի ԴՆԹ նմուշառման հիման վրա համընկնում է գրանցվել: Գտնվել են միայն մասունքները՝ վերջույթները: Հարազատներին հայտնել են, որ մասունքները չընդունելու դեպքում իրենք վերջինիս կհուղարկավորեն «եղբայրական գերեզմանումե: Հաշվի առնելով բոլոր հակասական տեղեկությունները՝ զինծառայողի հարազատները վստահ չեն, որ հուղարկավորված մասունքները պատկանում են իրենց անհայտ կորած հարազատին:

- **Ըստ ընտանիքների՝ հրամանատարները փախուստի են դիմել ռազմական գործողությունների ընթացքում՝ միայնակ թողնելով զինծառայողներին, ինչպես նաև նրանք սխալ հրաման են տվել՝ չգնահատելով առկա ռիսկերը և վտանգի ենթարկելով զինծառայողների կյանքը**

8. **Ա.Հ, Ռ. Հ., Ա.Ս.,Յ. Ա., Հ.Ն, Ս.Օ**

Անհայտ կորած մի շարք զինծառայողների հարազատներ նշել են, որ, ըստ իրենց հասած տեղեկությունների, հրամանատարները լքել են մարտի դաշտը՝ թողնելով մյուս զինծռայողներին, այդ թվում՝ վիրավորներին: Մեկ դեպքում հայտնի է, որ հրամանատարը հեռացել է մարտական գործողությունների վայրից՝ վնասվածք ստանալու պատճառով: Մեկ այլ դեպքում, ըստ անհայտ կորած զինծառայողներից մեկի հարազատների տեղեկությունների, ջոկի հրամանատարը դեռևս հետախուզվում է՝ մարտական գործողությունների վայրը ինքնակամ լքելու հիմքով, որի առթիվ հարուցվե է քրեական գործ:

9. **Ա.Հ.**

Զաբրայիլի զորամասի «Նարինջ 1ե դիտակետում մոտ 200 հոգի են եղել: Որոշակի պահի հրամանատարը նահանջի հրաման է տվել, ինքը նստել է մեքենան և հեռացել, մինչդեռ մյուսները շարունակել են մարտական գործողությունները: Ըստ անհայտ կորած անձի հարազատի՝ նշված դիտակետում եղել են տեսախցիկներ, որոնց ձայնագրությունները պատերազմի ընթացքում կամ դրանից հետո տեղափոխվել են Ստեփանակերտ, սակայն դրանք հասանելի չեն զինծառայողների ծնողներին: Տեսանյութերը, ըստ անհայտ կորածների հարազատների, հնարավորություն կտան արձանագրել, թե ովքեր են գերեվարվել:

10. **Է. Գ.**
Անհայտ կորածի ծառայակիցներից մեկը հարազատներին հայտնել է, որ պատերազմից առաջ զինծառայողները ադրբեջանական կողմում շարժ են նկատել, կապ են հաստատել հրամանատարի հետ՝ հայտնելով այդ մասին, սակայն վերջինս ասել է՝ «մի անհանգստացեք, զորավարժություն է: Բացի այդ, նույն հրամանատարը զորմասի տարածքում 7 հատ սուրճի ավտոմատ սարք է ունեցել, որոնք պատերազմի ընթացքում բեռնատարով դուրս բերել տարածքից:

11. **Զ.Ա.**
Անհայտ կորած սպան ականապատող է եղել, սակայն մասնակցել է բուն մարտական գործողություններին: Ըստ անհայտ կորածի հարազատին հայտնած տվյալների՝ մյուս սպաները թաքնված են եղել զորմասում, շատերը նաև փախել են:

12. **Ա.Հ.**
Ասկերանի զորամասի վաշտի հրամանատարը փախուստի է դիմել՝ հետագայում պատճառաբանելով, որ «հակառակորդը հարձակվել է, իրենք փախել են՝ ով ոնց կարող էր»:

13. **Վ. Ս.**
Հրամանատարներից մեկը հեռախոսազրույցի ժամանակ անհայտ կորածի հարազատներին ասել է՝ «մի անհանգստացեք, տղաները շրջափակման մեջ են, բայց հիմա գնում ենք ազատենք: Հետագայում, երբ հարազատները այլևս կապ չեն կարողացել հաստատել զինծառայողի հետ, գնացել են Արցախ/ԼՂ և հանդիպել են նույն հրամանատարին Տեղ գյուղի մոտ՝ ճամփեզրին նստած, հարբած վիճակում և լացելիս: Հրամանատարն ասել է՝ «սխալ հաշվարկ եմ արել, էրեխեքին սխալ տեղ եմ ուղարկել»:

14. **Ա. Ա.**
Զինծառայողները Հադրութ գնալու հրաման են ստացել: Գիշերը հասնելով նախատեսված վայրը՝ պարզել են, որ չպետք է գնային: Այնուհետեւ ստացել են նոր հրաման՝ վերադառնալ «Կարմիր շուկաե: Վերադարձի ճանապարհին մեքենան ռմբակոծվել է: Զինծառայողների մի մասը զոհվել է, մյուս մասը՝ անհայտ կորել:

15. **Հ.Գ., Կ.Հ., Շ.Ա., Ռ.Հ., Յ.Գ., Ա.Ե., Դ.Ս., Ն.Հ**
60 հոգանոց «քիմիկներիե զորքը հաձնարարություն է ստացել դիտարկելու Զանգելանի (Կովսականի) շրջակա տարածքը, այն դեպքում, երբ օրեր առաջ Զանգելանի դպրոցին արդեն իսկ ադրբջանական դրոշ է փակցված եղել: Հասնելով տեղանք՝ մի քանի զինծառայողներ իջել են մեքենայից, 7 կմ ոտքով առաջ գնացել և ընկել շրջափակման մեջ: Նրանք համապատասխան կերպով զինված չեն եղել, զրահաբաճկոն-

ներ չեն ունեցել և չեն ուղեկցվել հրամանատարական կազմով:
Հետագայում անհայտ կորած զինծառայողների հարազատները հրմանատարներից մեկից տեղեկացել են, որ այդ զորքին դեպի Զանգելանի արդեն իսկ գրավված տարածք ուղարկելու հրաման է տվել ՀՀ զինված ուժերի շտաբի պետ՝ Օնիկ Գասպարյանը:
Զանգելան տեղափոխված զորքի համանատարներից Արսեն Աբգարյանը զինծառայողներին նահանջի հրաման է տվել, ասելով «փախե՛ք և ինքը նույնպես փախել է: Զանգելանից նահանջելիս զինծառայողներից մեկը Աղի հանքի տարածքում հրամանատարներից մեկին հայտնել է, որ զինծառայողները վտանգի մեջ են, օգնություն է հարկավոր, սակայն գեներալ Անդրանիկ Մարգարյանը օգնություն չի ուղարկել, որից հետո զինծառայողները 10 օր գտնվել են Զանգելանի անտառներում: Հետագայում կապը վերջիններիս հետ կորել է:

- **Զինծառայողներն ուղարկվել են մարտական գործողությունների՝ առանց համապատասխան զենքի և հանդերձանքի**

16. **Ա.Մ., Է. Գ., Գ. Գ., Ա. Ա., Տ. Ա**

Անհայտ կորած զինծառայողների հարազատները հայտնել են, որ վերջիններս ուղարկվել են մարտական գործողություններին մասնակցելու՝ առանց զենքի և առանց զրահաբաճկոնի: Մեկ դեպքում հրամանատարն անձամբ անհայտ կորած զինծառայողներից մեկի հարազատին պատմել է, որ ինքը զենքը մոռացած է եղել մեքենայի մեջ, հետ է գնացել, որպեսզի վերցնի և տեսել է, որ այնտեղ արդեն վիրավորներ են եղել: Հետագայում, սակայն, հրամանատարը հերքել է այդ ամենը, և նշել, որ ինքը այդ օրը դեպքի վայրում չի եղել և ոչինչ չի տեսել:

17. **Փ. Զ.**

Դիրքերում գտնվող զինծառայողները զենք չեն ունեցել, իսկ խրամատների փոխարեն ուղղակի փոսեր են փորված եղել:

- **Անհայտ կորած պայմանագրային զինծառայողների հարազատներին վերջիններիս գերեվարման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ է տրամադրվել, որպեսզի հնարավոր լինի նրանց ազատել աշխատանքից**

18. **Զ.Ա.**

Անհայտ կորածի հարազատը հայտնել է, որ զորամասից իրեն տրամադրվել է ԱՀ/ԼՂ ՊԲ հրամանատար Զալալ Հարությունյանի կողմից հաստատված տեղեկանք, համաձայն որի՝ զինծառայողը գերեվարվել է: Փաստաթղթի հիման վրա պայմանագրային զինծառայողն ազատվել է աշխատանքից և հաշվառվել պահեստազորում: Տեղեկանքը զինծառայողի հարազատին տրամադրած սպան ընտանիքին հորդորել է՝ «այդ փաստաթղթով ոչինչ չանել, այլապես բոլորը խնդիրներ կունենանե: Զինծառայողի եղբայրը ՀՀ քննչական կոմիտեում պարզել է, որ այդպիսի տեղեկանք տրա-

մադրում են հաճախ, որպեսզի զինծառայողներին աշխատանքից ազատեն:

- **Անհայտ կորածների հարազատները պարբերաբար հեռախոսազանգեր են ստացել պարսկական կամ այլ երկրների անհայտ հեռախոսահամարներից**

19. Ա.Մ., Հ. Հ, Ա. Ղ., Տ. Բ., Ա. Մ.

Որոշ անհայտ կորածների հարազատներ պարբերաբեր հեռախոսազանգեր են ստացել Պարսկաստանի հեռախոսային կոդով:

Մեկ դեպքում, զինծառայողի մայրը զանգ է ստացել այլ երկրի կոդով, լսել է, թե ինչպես է մի տղամարդ շշուկով խոսել է հայերեն լեզվով, սակայն ձայնը ցածր է եղել և չի հասկացվել, թե ինչ է նա ասում: Անհայտ կորածի ընտանիքը նշված դեպքի մասին հայտնել է պատերազմի ընթացքում ձեւավորված ՀՀ ՊՆ անհայտ կորած և գերեվարված զինծառայողների հարցով զբաղվող հանձնաժողովին և պարզվել է, որ դա Լյուքսեմբուրգի հեռախոսահամար է և պատկանում է ինչ-որ կենտրոնի: Անհայտ կորածի հարզատները դիմել են ԱԱԾ, սակայն այնտեղ պատասխանել են, որ եթե նույնիսկ այդ զանգը ինչ-որ կապ ունենա անհայտ կորածի հետ, միևնույն է ծնողներին այդ մասին ոչինչ չեն հայտնի: ԱԱԾ-ն գործը ուղարկել է ՀՀ պաշտպանության նախարարություն, սակայն այնտեղից այն հետ է ուղարկվել ԱԱԾ: ԱԱԾ-ից հարազատին հայտնել են, որ հնարավոր է իրենց թվացել է, որ հայերեն լեզվով են խոսել, սակայն զինծառայողի մայրը վստահ է, որ հայերեն խոսք է լսել:

- **Անսարք մեքենաների պատճառով զինծառայողները չեն կարողացել նահանջել և ընկնելով շրջափակման մեջ՝ անհետացել են: Պարզ չէ, թե արդյոք մեքենաները փչացել են պատերազմական գործողությունների ընթացքում, թե եղել են անսարք մինչև պատերազամը:**

20. Ա.Բ., Ա. Մ

Ըստ անհայտ կորած զինծառայողի հարազատների՝ ծառայակիցներից ստացված տեղեկություններով Ֆիզուլիիում նահանջի հրաման է եղել և բոլորը սկսել են փախչել տարբեր ուղղություններով: Զինծառայողը, նկատելով, որ ներքևում կանգնած է վիրավոր զինծառայողներ տեղափոխող մեքենա, մի քանի զինծառայողների հետ իջել է, որպեսզի մեքենան վարելով դուրս գան տարածքից, սակայն մեքենան անսարք է եղել: Զինծառայողը կարողացել է շարժիչն աշխատեցնել, սակայն ճանապարհին մեքենան կրկին փչացել է և զինծառայողներն ընկել են շրջափակման մեջ:

- **Կապի միջոցների բացակայության պատճառով զինծառայողներն ունեցել են ռազմական իրավիճակի փոփոխության վերաբերյալ տեղեկատվության ստացման խնդիր**

21. Ա.Ա.

Անհայտ կորած զինծառայողի հայրը շտաբի պետի հետ խոսելով պարզել է, որ 2 զինծառայողի ուղարկել են 700 մետր հեռավորության վրա առաջադրանք կատա-

ռելու, սակայն նման դեպքերում զինծառայողների միջև հեռավորությունը 120 մետրից ավելի չպետք է լինի, քանի որ ձայնային ազդանշանը մեծ հեռավորության վրա լսելի չէ, իսկ ռադիոկապի միջոցներ զինծառայողների մոտ չի եղել:

22. **Գ. Գ.**

Զինծառայողները կապի միջոցներ չունենալու պատճառով չեն իմացել, որ նահանջի հրաման է տրվել:

- **Ադրբեջանցիները խոսել են հայերեն և կրել են հայկական զինվորական համազգեստ**

23. **Ա.Ա, Լ. Ա., Կ. Հ**

Անհայտ կորածի հարազատները իրենց անհայտ կորած հարազատի ծառայակիցներից տեղեկացել են, որ երբեմն Ադրբեջանի զինված ուժերի զինծառայողները եղել են հայկական համազգեստով ու հստակ խոսել են հայերեն: Մեկ դեպքում հայ զինծառայողները, կարծելով, թե վերջիններս հայ են, չեն կրակել և դիմադրություն չեն ցույց տվել, արդյունքում հայ զինծառայողնեն ընկել են շրջափակման մեջ և ունեցել են դիրքային կորուստ:

- **Կազմակերպական խնդիրներ, որոնք արձանագրվել են պատերազմական գործողությունների ընթացքում**

24. **Հ. Բ., Ա.Ա**

Մեկ գիշերվա ընթացքում զինծառայողներին անընդհատ տարբեր տեղանքներ են տեղափոխել: Փաստացի, չի դրսևորվել կազմակերպված մոտեցում զինծառայողների տեղաբաշխման հարցում:

25. **Հ. Բ.**

Անհայտ կորածի հարազատի խոսքերով՝ չնչին առողջական խնդիրներ ունեցող զինծառայողները մնացել են հոսպիտալում, իսկ նոր վիրահատված և դեռևս լրիվ չապաքինված որոշ զինծառայողներ ուղարկվել են առաջնագիծ:

26. **Լ. Ա.**

Նահանջի ժամանակ ծառայակիցները իրենց վիրավոր ընկերոջը տեղափոխել են համեմատաբար ապահով վայր և ճանապարհին հանդիպելով վիրավորներ փնտրող և տեղափոխող բժշկական մեքենաներ՝ տեղեկացրել են, որ իրենց զինակցին թողել են նշված վայրում, սակայն մեքենայի անձնակազմն ասել է, որ այժմ հրաման չունեն այդ տարածք գնալու և միայն երեկոյան կարող են գնալ այնտեղ: Արդյունքում զինծառայողն անհայտ կորել է:

27. **Վ.Վ.**

Զինծառայողը վերջին անգամ հարազատների հետ խոսելիս հայտնել է, որ դիրքերում իրենց «փոխարինողներ չեն գալիսե, իսկ ինքը վատառողջ է եղել և ֆիզիկապես այլևս ի վիճակի չի եղել շարունակել մարտական գործողությունները:

28. **Վ.Վ**

Անհայտ կորածին զորահավաքային զորակոչի շրջանակներում զորակոչելուց հետո Շահումյանի զինկոմիսարիատի կողմից դեռևս շարունակվել են ուղարկվել ծանուցագրեր՝ ընհանուր 5 անգամ:

29. **Վ. Ա.**

Անհայտ կորած անձը զորահավաքային զորակոչի շրջանակներում մեկնել է ռազմական գործողություններին մասնակցելու որպես բժիշկ, սակայն վերջին անգամ, երբ խոսել է ընտանիքի հետ, հայտնել է որ մասնակցում է մարտական գործողություններին:

30. **Զ.Ա.**

Նահանջի ժամանակ հրամանատարներից մեկը վիրավորներին հորդորել է մնալ, իսկ այն անձանց, ովքեր վիրավոր չեն՝ գնալ բեռնատարով, որը անսարք է եղել:

31. **Ս.Օ.**

Որոշ սպաներ նորակոչիկների մոտ հայտարարել են, որ իրենց «երկու դուխով զինծառայող է պետքե: 2 հոգի ցանկություն են հայտնել մասնակցել մարտական գործողություններին, չնայած ընդամենը 2 ամսվա զինծառայող են եղել և պատշաճ կերպով չեն տիրապետել զենքի օգտագործմանը, մարտական ծառայության կանոններին: Հետագայում, ըստ անհայտ կորածի հարազատի, 8 վիրավոր զինծառայող ճանապարհին հանդիպել են հրամանատարների մեքենային, որն ուղղակի անցել է զինծառայողների կողքով՝ նրանց թողնելով անօգնական: Եղել են նաև սպաներ, ովքեր զինծառայողներին վիրավոր ընկած թողել են և փախել մարտի դաշտից: